



Ձիաց մեր հանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՀՈՒՆԻՍ 2022

ԼԳ. ՏԱՐԻ

Բ. ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Սեզանից ամեն մեկը թող ընկերոջը հաճելի լինի դեպի բարին՝ շինության համար: (Յուդ.15. 2)

ՎԿԱՅԻ ՆՇԱՆՆԵՐ

Ժամագործը, լուսարձակը գցելով ժամացույցի ներսում փորագրված մի նշանի վրա, ուշադրություն հրավիրեց և բացատրեց. «Հավանաբար, այս նշանը դրել է մեկ ուրիշ նորոգող մեկ դար առաջ: Դա կոչվում է վկայի նշան և ինձ օգնում է ճշտել ժամացույցի մեխանիզմը»:

Գիտական տեղեկագրերի ու վերանորոգման ձեռնարկների դարաշրջանից առաջ մասնագետներն այդպիսի «վկայի նշաններ» էին թողնում իրենց ապագա գործընկերներին, որպեսզի նրանք հեշտ կողմնորոշվեն մասերը դասավորելիս ու նորոգելիս: Պարզապես հիշեցումներ լինելուց բացի՝ դրանք բարիք էին ապագա հասցեատերերի համար:

Աստվածաշունչը քաջալերում է մեզ՝ Աստծո համար գործելիս, մեր կոտրված աշխարհում ուրիշներին ծառայելիս թողնել մեր «վկայի նշանները»: Պողոս առաքյալը հռոմեացիներին գրել է. «Մեզանից ամեն մեկը թող ընկերոջը հաճելի լինի դեպի բարին՝ շինության համար» (Հռոմ. 15. 2): Սա մեր Աստծո օրինակն է, որ «համբերություն ու մխիթարություն» (Հմ. 5) է շնորհում: Խոսքը լավ քաղաքացի լինելու մասին է:

Մեր թողած «վկայի նշանները» կարող են փոքր թվալ, բայց իրականում կենսական փոփոխություն առաջացնել մեկի կյանքում: Ոգեշնչող խոսքը, կարիքավորին օգնելը, մեկին ուշադիր լսելը՝ այդ բոլորն էլ բարիք են, որոնց ազդեցությունը կարող է տևական լինել: Թող Աստված օգնի, որ մեզանից հետո ինչ-որ հետք թողնենք որևէ մեկի կյանքում:

Աղոթք - Ամենակարող Հայր, շնորհակալ եմ Որդուդ՝ Հիսուսի միջոցով քո ցուցաբերած սիրո ու բարության համար: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ կարողանամ արտացոլել Քո սերը նույնիսկ ամենափոքր գործերիս մեջ: Ամեն:

Ուրիշներին դարձ բարություն անելիս ի՞նչ «վկայի նշան» կարող ես թողնել հեզանից հետո:

Ամբողջ մարմինը՝ միասնական ու ներդաշնակ աճում է՝ ինքն իրեն սիրո մեջ հաստատելու համար: (Եփ. 4. 16)

ԿԱՌՈՒՑԵԼ ՄԻԱՍԻՆ

Եթե որևէ ազարակապանի ընտանիքի համար մի գոմ կա՝ ուղեկը ամիսներ կարող է տևել, ապա գյուղական ամիշներն այդ աշխատանքը շատ արագ են կատարում: Նախ նրանք շատ մասնագիտացված են, և երկրորդ՝ աշխատում են կազմակերպված ու աշխատանքի բաժանումով: Շինանյութն ու համապատասխան գործիքներն ապահովելուց հետո նշանակված օրը ամիշ համայնքը վաղ առավոտյան հավաքվում ու շատ արագ, նույնիսկ մեկ օրում բարձրացնում է գոմը:

Նկարագրվածը մարդկանց ու եկեղեցու դերի մասին Աստծո տեսլականի իսկական օրինակ է: Աստվածաշունչն ասում է. «Արդ դուք Քրիստոսի մարմինն եք ու մեկ առ մեկ՝ նրա անդամները» (Ա.Կորնթ. 12. 27): Աստված մեզանից յուրաքանչյուրին տվել է տարբեր պարտականություններ և զինել տարբեր ձևերով, որոնցով մենք կատարում ենք մեր հանձնարարությունը՝ որպես ներդաշնակ մարմնի մեկ անդամը (Եփ. 4.16): Իսկ համայնքում մենք քաջալերվում ենք «իրար բեռը վերցնելով» (Գաղ. 6. 2):

Մենք, սակայն, հաճախ մենակ ենք ձեռնարկում ինչ-որ բան: Մեր կարիքները հոգում ենք միայնակ՝ ցանկանալով վերահսկել բոլոր հանգամանքները: Կամ էլ չենք կարողանում ձեռք մեկնել ուրիշներին, թեթևացնել նրանց բեռը: Բայց Աստված ուզում է, որ մենք կապվենք ուրիշների հետ: Նա գիտի, որ շատ գեղեցիկ բաներ են կատարվում, երբ ուրիշներից օգնություն ենք խնդրում կամ աղոթում ենք այլոց համար: Միայն միմյանցից կախում ունենալով՝ կզգանք այն, ինչ Աստված նախատեսել է մեզ համար:

Աղոթք - Սիրող Հայր, երբեմն փակում եմ իմ անձնական կյանքը ուրիշների առաջ: Օգնի՛ր ինձ, որ նրանց հրավիրեմ
Գերս: Ամեն:

Պատրաստ լինե՞մ մեր կարիքները կիսելու ուրիշների հետ և կրելու նրանց բեռը:

Տիրոջ ողորմությունը չի դադարում, նրա գթությունը վերջ չունի: (Եր. ողբ. 3.22)

ԱՍԾՈՆ ՄԵԾ ՍԵՐԸ

Ընկերներս խնդրել էին ելույթ ունենալ դեռահաս աղջիկների մաքրության թեմայով հանդիպման ժամանակ: Ես մերժեցի, որովհետև ինքս այդ տարիքում փախել էի տնից, անբարոյական կյանք վարել և տասնյակ տարիներ կրում էի դրա հետևանքները: Ամուսնանալուց և առաջին վիժումից հետո մտածեցի, որ Աստված է ինձ պատժում անցյալում իմ գործած մեղքերի համար: Երեսուն տարեկանում վերջապես կյանքս հանձնեցի Քրիստոսին, խոստովանեցի մեղքերս ու ապաշխարեցի: Բայց միևնույն է, ես ինչպե՞ս կարող էի խոսել Աստծո շնորհքի մասին, երբ նույնիսկ չէի կարողացել լիովին ստանալ իմ նկատմամբ Տիրոջ ունեցած մեծ սիրո պարգևը: Բարեբախտաբար, ժամանակի ընթացքում Աստված վերացրեց այն ստերը, որոնք շղթայել էին ինձ, և ես վերջապես ստացա այն ներումը, որ Աստված առաջարկում էր:

Աստված հասկանում է մեր տառապանքներն ու ցավը անցյալում գործած մեղքերի համար: Եվ իր մեծ «սիրո», «գթության» ու «հավատարմության» շնորհիվ (Եր. ողբը 3. 19-23) զորություն է տալիս՝ հուսահատությունը հաղթահարելու, մեղքերից հրաժարվելու և հույսով ոտքի կանգնելու համար: Սուրբ Գիրքն ասում է, թե «Տերն է մեր բաժինը», մեր հույսն ու փրկությունը, և մենք սովորում ենք վստահել Նրա բարությունը (Հմ. 24-26):

Մեր կարեկից ու գթառատ Հայրն օգնում է հավատալ իր խոստումներին: Երբ ստանանք մեր հանդեպ իր ունեցած մեծ սիրո լիությունը, կտարածենք իր շնորհքի բարի լուրը:

Աղոթք - Կարեկից Տեր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ հույսս դնեմ իմ հանդեպ Քո ունեցած սիրո վրա և որտեղ էլ լինեմ, տարածեմ Քո շնորհքի բարի լուրը: Ամեն:

Եթե մեզ անցյալի մեղքերով շղթայված զգանք, վստահեմք
Ասծուն: Իր անչափելի սիրո ու շնորհի հույսով Նա
կհանգստացնի մեզ:

Քեզ համար շատ ծանր է այդ գործը, դու միայնակ չես կարող անել դա: (Ելք 18.18)

ԻՍԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աստվածաբանական ճեմարան հաճախելու հետ մեկտեղ կատարում էի հոգևոր տեսչություն և եկեղեցու փորձարարական բաժնի աշխատանքային պարտականությունները: Հայրս, այցելելով ինձ և տեսնելով իմ զբաղվածությունը, ասաց, որ չեմ դիմանա: Ինձ համար տհաճ էր այդ զգուշացումը: Մտածում էի, որ մեծերը չեն հասկանում՝ ինչ է նշանակում նպատակապաշտություն: Ճիշտ է, ես դիմացա, բայց այդ ճանապարհին շատ դժվարություններ, նեղություններ, ընկճումի ու վհատություն պահեր ունեցա: Եվ հասկացա, որ հարկավոր է ավելի ուշադիր լինել հատկապես սիրելիների զգուշացումների հանդեպ:

Սա հիշեցնում է Մովսեսի պատմությունը: Նա, ծառայելով որպես Իսրայելի դատավոր, ջանասիրաբար աշխատում էր (Ելք.18.13): Բայց նախընտրեց լսել աներոջ զգուշացումը (Հմ.17-18): Հոթորը ամեն բանի մեջ չէր, բայց սիրում էր Մովսեսին ու նրա ընտանիքը և կռահում էր գալիք դժվարությունները: Թերևս այդ պատճառով էլ Մովսեսը կարողացավ լսել նրա խորհուրդները: Նա «ժողովրդի միջից ընտրեց կարող, աստվածավախ, հավատարիմ մարդկանց», որոնք պետք է ստանձնեին փոքր խնդիրների լուծումը, իսկ ինքը զբաղվում էր ավելի մեծ գործերով (Հմ.21-22): Քանի որ Մովսեսը լսեց Հոթորի խորհուրդները, կատարեց աշխատանքի վերադասավորում և ուրիշներին վստահեց որոշակի գործեր, կարողացավ շրջանցել դժվարությունները:

Լսենք վստահելի մարդկանց խորհուրդները և ապավինենք Աստծո տված իմաստունությանը:

Աղոթք - Ո՛վ Հայր, սովորեցրու՛ իմաստուն կերպով աշխատել, որպեսզի կարողանամ անել Քո կամեցածը: Ամեն:

Իմաստնությանը գործելու և արդյունավետ ծառայության ունենալու համար հարկավոր է ոչ թե կֆել ծանրության ներքո, այլ լսել իմաստուն խորհուրդները:

Նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, ավարտին կհասցնի մինչև Յիսուս Քրիստոսի օրը: (Փիլ. 1.6):

ԲԱՐԻ ԳՈՐԾ

Չարլզ Սփերջենը պատանեկան տարիներին պայքարում էր Աստծո դեմ: Նա մեծացել էր եկեղեցի հաճախելով, բայց իր լսած քարոզները անհիմաստ ու ձանձրալի էին թվում: Պատահուհի համար Աստծուն հավատալը պայքար էր, և նա իր խոսքերով՝ «ըմբոստացավ ու ապստամբեց»: Մի գիշեր կատաղի ձնաբքի պատճառով տասնվեց տարեկան Չարլզը ապաստան գտավ մի փոքր մեթոդական եկեղեցում, որի հովվի քարոզը ասես հենց իրեն ուղղված լիներ: Այդ պահին Աստված հաղթեց, և Չարլզն իր սիրտը տվեց Հիսուսին: Հետագայում Սփերջենը գրեց. «Նախքան ես կսկսեի հաղորդակցվել Քրիստոսի հետ, Նա էր սկսել ինձ հետ»: Իրականում Աստծո հետ մեր կյանքը մեր փրկության պահին չէ, որ սկսվում է: Մաղմոսերգուն նշում է. «Դու ստեղծեցիր իմ ներքին անդամները և ծածկեցիր ինձ իմ մոր որովայնում» (Մաղմ. 139. 13): Պողոս առաքյալն էլ գրում է. «Բայց երբ Աստված բարեհաճեց իմ մոր որովայնից ինձ ընտրել ու իր շնորհի միջոցով կոչել» (Գաղ. 1. 15): Աստված մեզ հետ աշխատանքը չի դադարեցնում նաև մեր փրկվելուց հետո. «Նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, ավարտին կհասցնի մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլ. 1. 6): Մենք բոլորս էլ սիրող Աստծո ձեռքերում ընթացիկ գործեր ենք: Նա մեր ըմբոստ պայքարում մեզ առաջնորդում է իր տաքուկ գիրկը նետվելու: Բայց զբանով Նրա նպատակը մեզ հետ դեռ նոր է սկսվում «Որովհետև Աստված է, որ ձեր մեջ ներգործում է կամենալն ու կատարելն ըստ իր բարեհաճ ծրագրի» (Փիլ.2.13): Վստահ եղեք, մենք Նրա բարի գործն ենք, անկախ նրանից, թե քանի տարեկան ենք կամ կյանքի որ փուլում ենք:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, համոզված եմ, որ Քո սիրո հոգատարությունն սկսվել է իմ ծննդյան պահից: Շնորհակալ եմ: Օգնի՛ր, որ իմ կյանքում արձագանքեմ Քո արած գործին: Ամեն: **Ասված գործում է մեր կյանքում, որովհետև նրանք ունի մեզանից յուրաքանչյուրի համար:**

Խոսքը կատարողներ եղեք և ոչ միայն լսողներ, որ ինքներդ ձեզ խաբեք: (Յակ.1.22)

ՄԻ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավտոկայանատեղում սկիզբ առած վիճաբանությունը կարող էր ծիծաղելի թվալ, եթե իրականում ցավալի չլիներ: Երկու վարորդ բարձրաձայն վիրավորում ու կոպտում էին միմյանց, որովհետև մեկը փակել էր մյուսի ճանապարհը: Ցավալի էր այն առումով, որ այդ ամենը տեղի էր ունենում եկեղեցու մոտ: Երկու տղամարդիկ, որոնք հավանաբար քիչ առաջ քարոզ էին լսել սիրո, հանդուրժողականություն ու ներումի մասին, մոռացել էին այդ ամենն ու վիրավորում էին միմյանց: Նրանց կողքով անցնելով՝ օրորեցի գլուխս, սակայն անդրադարձա, որ ես ավելի լավը չեմ: Քանի՛ անգամ եմ Աստվածաշունչը կարդացել, բայց դարձյալ մեղքեր եմ գործել: Քանի՛ անգամ եմ վարվել այն մարդու նման, որը «հայելու մեջ դիտում է իր սեփական դեմքը, քանի որ տեսնում է ինքն իրեն, անցնում, գնում է և իսկույն մոռանում, թե ինչպիսին էր» (Հակ. 1. 23-24): Բայց Հակոբոսն իր ընթերցողներին կոչ է անում.«Սոսքը կատարողներ՝ եղեք և ոչ միայն լսողներ, որ ինքներդ ձեզ խաբեք»: (Հմ. 22): Նա ընդգծում է, որ ամբողջական հավատք նշանակում է Սուրբ Գիրքը և՛ իմանալ, և՛ կիրառել:

Հնարավոր է, որ կյանքի հանգամանքները դժվարացնեն աստվածաշնչյան իմաստությունների կիրարկումը, բայց եթե մենք խնդրենք Հորը, Նա վստահաբար կօգնի մեզ, որ հնազանդվենք Իրեն ու գոհացնենք մեր գործերով:

Աղոթք - Յայր, ների՛ր ինձ, երբ չեմ կատարում քո պատվիրանները: Ինձ ուժ և պատրաստակամություն տու՛ր, որպեսզի Քեզ հնազանդվեմ խոսքով, գործով ու մտքով: Ամեն:

Այսօր ի՞նչ ես կարդացել Աստվածաճշում, որը կկարողանաս անել կամ չանել:

Միմյանց նկատմամբ հյուրասեր եղեք՝ առանց տրտնջալու: Յուրաքանչյուր ոք ինչ շնորհ ընդունել է, այն իրար մատակարարեցեք՝ որպես Աստծու զանազան շնորհների բարի տնտեսներ: (Ա.Պետ. 4.9-10)

ԻՍԿԱԿԱՆ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Իմ հայրենի Ֆիլիպինների շատ տներում որևէ այցելուի անպայման հարցնում են՝ կերած ես: Եվ անկախ ստացած պատասխանից՝ տանտերը անպայման ուտելիք է պատրաստում: Դա հյուրասիրութեան ֆիլիպինյան ձևն է: Նրանք կարծում են, որ իսկական բարությունը ոչ միայն սովորական ողջունի խոսքն է, այլև իսկական հյուրասիրություն ցույց տալը:

Ռեբեկան նույնպես բարի ու ազնիվ լինելու բոլոր կանոնները գիտեր: Նա ամեն օր քաղաքից դուրս գտնվող ջրհորից ջուր էր հանում ու սափորով տուն հասցնում: Երբ Աբրահամի ծառան, որը երկար ճամփորդությունից էր գալիս ու շատ ծարավ էր, աղջկանից ջուր խնդրեց, նա անվարան տվեց ջուրը (Ծնն. 24. 17-18):

Բայց հետո Ռեբեկան ավելին արեց. տեսնելով, որ անցորդների ուղտերն էլ են ծարավ, նա առաջարկեց ուղտերի համար ավելի շատ ջուր հանել ջրհորից (հմ. 19-20): Եվ կրկին անցնելով երկար ճանապարհ՝ սկսեց ծանր սափորով ջուր բերել:

Շատերի համար է կյանքը դժվար, բայց հաճախ ընդամենը մի բարի խոսքը, մի ժեստը կարող են ոգևորել մարդուն, բարձրացնել տրամադրությունն ու մղել բարի գործերի: Այսինքն՝ Աստծո սերը մարդկանց փոխանցելու համար պարտադիր չէ քարոզել կամ եկեղեցի հիմնել: Դա կարող է դրսևորվել նույնիսկ մեկին մի բաժակ ջուր տալով:

Աղոթք - Երկնավոր Հայր, բաց աչքերս, որ տեսնեմ իմ շրջապատի մարդկանց կարիքները, և տու՛ր ինձ նրանց հանդեպ բարություն ու հոգատարություն ցուցաբերելու իմաստնություն: Ամեն:

Որդես իսկական փրկսոնյաներ՝ մեր դարսականությունը դիտի համարեմք մեզ օրջադասողներին գործնականում փառալերելու ու հյուրասիրելը:

Մի բան եմ խնդրում Տիրոջից, ... որ Տիրոջ տանը բնակվեմ: (Սաղմ. 27.4)

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՅԵ

Վերջերս նոր բնակարան տեղափոխվեցինք, որը մեր հին տնից քիչ էր հեռու: Առք ու վաճառքի գործարքների կարճ ժամկետի պատճառով մեր տան իրերի մի մասը մնաց բեռնատար մեքենայի մեջ, իսկ մենք տեղավորվեցինք ժամանակավոր կացարանում: Այդ ժամանակ ես զարմանքով հայտնաբերեցի, որ «տուն ունենալու» զգացումն է ինձ պատել, թեև ես իմ ընտանիքի հետ էի, որոնց ամենաշատն եմ սիրում:

Իր կյանքի մի ժամանակահատվածում Դավիթն էլ Ֆիզիկական տուն չուներ: Նա ապրում էր փախուստի մեջ Սափուղ թագավորից, որը Դավիթին նկատելով իբրև իր գահի սպառնալիք՝ փորձում էր սպանել: Դավիթը փախավ իր տնից և օրերն անցկացրեց որտեղ պատահի: Ու թեև իր հետ ընկերներ ուներ, Դավիթի ցանկությունն էր «Տիրոջ տանը բնակվել» ու Նրա մշտական ընկերակցությունը վայելել (Սաղմ. 27.4):

Անկախ այն բանից, թե որտեղ ենք մենք, Հիսուսն է մեր մշտական ուղեկիցը, մեր «տան զգացումը»: Նա մեզ հետ է մեր ներկա դժվարությունների ժամանակ և նույնիսկ մեզ համար տեղ է պատրաստում հավիտյան Իր հետ ապրելու համար (Հովհ. 14.3): Չնայած, որպես այս երկրի քաղաքացիներ, մեր ունեցած անորոշություններին ու փոփոխություններին՝ մենք կարող ենք մշտապես բնակվել Տիրոջ հետ, ընկերակցել Նրան միշտ և ամենուր:

Աղոթք - Սիրո՞ղ Աստված, շնորհակալ եմ, որ իմ մշտական հասցեն Դու ես: Օգնի՛ր ճանաչել Քեզ՝ որպես հավատարիմ ուղեկից, որ ինձ հետ է ամենուր: Ամեն:

Ասված մեզ հետ է ու Տեր Հիսուսը մեր մշտական ուղեկիցն է, անկախ այն բանից, թե մենք որտեղ ենք և ինչի միջոց ենք անցնում:

Ձեր խոսքը միշտ թող շնորհով՝ ինչպես աղով համեմված լինի: (Կող. 4.6)

ՇԱՏԱԽՈՍ ԱՎՏՈՐՈՒՄ

2 019-ին Օքսֆորդի մարդատար տրանսպորտային ընկերությունը գործարկեց հանրության հավանության արժանացած «Շատախոս ավտոբուսը» նրանց համար, ովքեր կուղեկցան զրուցել հետաքրքիր ուղևորների հետ: Երթուղին ստեղծվել էր ի պատասխան կառավարության այն հետազոտության, որից պարզվել էր, որ բրիտանացիների 30 տոկոսը շաբաթական առնվազն մեկ օր անիմաստ զրույցներ է ունենում:

Մեզանից շատերը, հավանաբար, ունեցել են այն զգացողությունը, երբ չկա մեկը, որի հետ կարելի է խոսել: Մտածելով իմ կյանքի կարևոր խոսակցությունների մասին՝ հիշում եմ հատկապես իմաստալից քննարկումները, որոնք ինձ տվել են ուրախությունն ու քաջալերանք, օգնել են մշակել ու ձեռք բերել ավելի խոր հարաբերություններ:

Կողոսացիներին ուղղված նամակի վերջում Պողոսը քաջալերում է իր ընթերցողներին, որ Հիսուսին հավատացողներն ունենան կյանքի իսկական սկզբունքներ, կիրառեն այն միջոցները, որոնցով մեր զրույցները կդառնան ավելի սիրալիր: Առաքյալը գրում է. «Ձեր խոսքը միշտ թող շնորհով՝ ինչպես աղով համեմված լինի» (Հմ. 4. 6)՝ հիշեցնելով, որ կարևորը պարզապես բառեր ասելը չէ, այլ այն, որ խոսքն ունենա որակ, նպատակ, կարողանա քաջալերանք դառնալ լսողների համար:

Հաջորդ անգամ, երբ առիթ ունենաս կանգառասրահում կամ տրանսպորտում զրուցել որևէ ընկերոջ, աշխատակցի կամ անծանոթի հետ, փնտրի՛ր միջոցներ, որպեսզի ծախսածդ ժամանակը օրհնություն բերի երկուսիդ կյանքում էլ:

Աղոթք - Երկնավոր Զայր, օգնի՛ր, որ օրինություն դառնամ բոլոր նրանց համար, ում հետ այսօր խոսում եմ և այդ խոսակցությունը լցնեմ Քո շնորհքով: Ամեն:

Մեր գրույցով այսօր փառալերենք մեկին՝ ցույց տալով Աստուծո՞ւհի:

Ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը՝ հեզ, էշին ու քուռակին հեծած: (Մատթ. 21.5)

ԹԱԳԱՎՈՐԸ՝ ԷՇԻ ՎՐԱ

Մաղկազարդի կիրակի էր: Անկասկած, սա Հիսուսի առաջին այցելութիւնընը չէր Երուսաղեմ: Որպես հավատարիմ հրեա՝ Նա ամեն տարի երեք մեծ տոների առիթով պետք է որ քաղաք գնացած լիներ (Ղուկ. 2. 41-42, Հովհ. 2.13, 5.1): Անցյալ երեք տարիներին Քրիստոսը Երուսաղեմում նաև ծառայում ու սովորեցնում էր: Բայց այս կիրակի Նրա քաղաք գալը բոլորովին տարբեր էր:

Ավանակին հեծած Երուսաղեմ մտնելով՝ Հիսուսը հայտնվեց հազարավոր մարդկանց ուշադրութիւն կենտրոնում (Մատթ. 21. 9-11): Ինչն^օվ էր բացատրվում այդ փաստը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ վերջին երեք տարիներին Նա դիտավորյալ ցածր էր իրեն պահում: Ինչու^օ պիտի իր մահից ընդամենը հինգ օր առաջ Նա թագավոր հայտարարվեր:

Մատթեոսն ասում է, որ դա տեղի է ունեցել, որպեսզի իրականանա հինգհարյուրամյա մարգարեութիւնը (Մատթ. 21.4-5), որպեսզի Աստծո ընտրյալ թագավորը Երուսաղեմ գա՝ որպես «արդար ու փրկիչ, էշին ու քուռակին հեծած» (Ձաք. 9.9, Ծնն. 49. 10-11):

Վերջինը խկապես անսովոր ձև էր հաղթական թագավորի քաղաք մտնելու համար: Հաղթող արքաները սովորաբար ընտիր նժույգներ են հեծնում: Բայց Հիսուսը պատերազմական ձի նստած չեկավ: Եվ դա բացահայտում է Նրա բնույթը: Նա եկավ հեզութիւնը ու խոնարհութիւնը, ոչ թե պատերազմի, այլ Աստծո ու մեր միջև խաղաղութիւն հաստատելու (Գործք 10. 36, Կող. 1.20):

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ Երուսաղեմ եկար՝ բացահայտելու Քո հզոր ու համեստ ճանապարհները: Սիրոս լցրու՛ Քո խաղաղութեամբ: Ամեն:

Ինչդիսի՞ թագավոր է այսօր Հիսուսը քեզ համար: Ինչդե՞ս կարող ես հարգել Նրան՝ որդես քո թագավոր:

Արդ արթուն կացեք, որովհետև չգիտեք, թե ձեր Տերը ո՞ր ժամին կգա: (Մատթ. 24.42)

ՀԱՇՎԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԱՅՐ

Հյուսիսային Կարողինայի Համալսարանի գրադարանի ար-
խիվներում պահպանված գրպանի ժամացույցի կանգնած սլաքները մի սարսափելի իրողության մասին են պատմում: Դրանք նշում են այն ճշգրիտ պահը (8-անց 19ր. 56 վրկ), երբ ժամացույցի տերը՝ Էլիշա Միտչլը 1857թ. հունիսի 27-ի առավոտյան սահել ու ընկել է Ապալաչյան լեռների ջրվեժը: Համալսարանի դասախոս Միթչլը տվյալներ էր հավաքում ապացուցելու, որ այն գազաթը, որի վրա ինքը կանգնած էր, և որն այժմ կրում է իր անունը, Միսիսիպիի արևելյան լեռներից ամենաբարձրն է: Գիտնականի մարմինն էլ ամփոփվել է այդ լեռան գազաթին:

Վերջերս բարձրացել էի այդտեղ, կրկին հիշեցի Միթչլի պատմությունն ու անդրադարձա այն թեմային, որ մեր մահկանացու կյանքում յուրաքանչյուրս ունենք որոշակի ժամանակ: Խորհեցի Հիսուսի այն խոսքերի մասին, որ Նա ասում է Իր աշակերտներին Ձիթենյաց լեռան վրա. «Դրա համար դուք էլ պատրաստ եղեք, որովհետև Մարդու Որդին կգա այն ժամին, երբ դուք չեք սպասի» (Մատթ. 24. 44): Հիսուսը հստակ նշում է, որ մեզանից ոչ մեկը ճշգրիտ չգիտի, թե երբ է Ինքը վերադառնալու և հաստատելու Իր հավիտենական թագավորությունը, ինչպես նաև թե երբ է մեզ կանչելու Իր մոտ: Բայց Նա մեզ ասում է, որ պատրաստ լինենք ու «արթուն մնանք» (Հմ.42):

Թիք, թաք. այսպես շարունակ աշխատում է մեր կյանքի ժամացույցը, բայց որքա՞ն ժամանակ՝ անհայտ է: Թող որ մեր կյանքի պահերը սիրով ապրենք՝ մեր ողորմած Փրկչին սպասելով և Նրա համար աշխատելով:

Աղոթք - Սիրող Փրկիչ, խնդրում եմ՝ օգնիր ինձ, որ պատրաստ լինեմ Քեզ հետ հանդիպմանը: Օգնիր, որ ծառայեմ Քեզ և պատրաստվեմ Քո վերադարձին: Ամեն:

Պատրաստ ես Տիրոջը դիմավորելու և ինչդիսի՞ ժամանակ ես ուզում անցկացնել Նրա հետ:

Ուստի պետք էր, որ նա ամեն ինչով եղբայրներին նմանվեր: (Եբր. 2.17)

ՄԵՁ ՆՄԱՆ, ՄԵՁ ՀԱՄԱՐ

Դերեկը նկատեց, որ որդին լողալու ժամանակ չի ուզում հանել շապիկը և հասկացավ, որ պատճառը կրճքին, որովայնին ու թևին ի ծնե եղած նշաններն են: Որդուն օգնելու համար Դերեկը իր մարմնի այդ մասերում ցավոտ կամթումներ արեց, որպեսզի նման նշաններ ստեղծի:

Հոր սերը որդու հանդեպ արտացոլում է Աստծո սերը Իր որդիների ու դուստրերի նկատմամբ: Քանի որ մենք՝ Նրա զավակները, «արյանն ու մարմնին հաղորդակից եղանք» (Եբ. 2.14), Հիսուսը մեզ նմանվեց, ընդունեց մարդկային կերպարանք, «որպեսզի իր մահով կործանի մահվան իշխանությունն ունեցողին» (Հմ.14): «Ուստի պետք էր, որ նա ամեն ինչով եղբայրներին նմանվեր» (Հմ.17), որպեսզի ժողովրդի մեղքերը քափեր, Աստծո հետ ամեն բան ուղղեր մեզ համար:

Դերեկն էլ որդուն օգնելու ցանկություններն նմանեցրեց նրան: Հիսուսը օգնեց մեզ, որ հաղթահարենք մեր ավելի մեծ խնդիրը՝ մահվան ստրկությունը: Նա մեզ համար հաղթահարեց այն՝ Իրեն նմանեցնելով մեզ, կրեց մեր մեղքերի պատիժը՝ մեր փոխարեն մեռնելով: Մարդ լինելու կամեցողությունը Հիսուսը ոչ միայն ապահովեց մեր հետագա ճիշտ հարաբերությունն Աստծո հետ, այլև հնարավորություն տվեց մեր դիմագրաված դժվարությունների մեջ վստահել Իրեն: Փորձությունների ու նեղությունների ժամանակ ուժ և աջակցություն ստանալու համար կարող ենք ապավինել Նրան, որովհետև «Նա կարող է օգնել փորձության ենթարկվածներին» (Հմ.18): Միրող հոր նման Նա հասկանում է ու հոգում քո մասին:

Աղոթք -Յիսուս, շնորհակալ եմ, որ մարդու կերպարանք առար, որպեսզի հաղորդակից լինես իմ մղած պայքարներին ու վճարես իմ գործած սխալների բարձր գինը: Ուզում եմ ավելի վստահել քեզ: Ամեն:

Կյանքում մեր դիմագրաված նեղությունների ու դժվարությունների ժամանակ կարելի է աղավինել Յիսուսին, որը հանուն մեզ դարձավ մեզ նման: Դրան խանգարող բան կա՞:

Ե՛ս ստեղծեցի և ե՛ս կազատագրեմ ձեզ:(Ես. 46. 4)

ՍԻՐՈՎ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ

Գորս տարեկան թոռնիկս, նստելով գիրկս ու շոյելով ճաղատ գլուխս, հարցրեց.

-Պապի՛կ, իսկ ու՞ր են մազերդ:

Ծիծաղելով պատասխանեցի.

-Օ՛հ, բալիկս, տարիների ընթացքում կորցրել եմ:

Երեխայի դեմքը մտախոհ դարձավ, ու նա քիչ անց ասաց.

-Պապի՛կ, դա շատ վատ է, ես ստիպված եմ մազերիս մի մասը քեզ տալ:

Ժպտացի թոռնիկիս կարեկից վերաբերմունքից ու ավելի ամուր գրկեցի: Հետո մտածեցի Աստծո առատաձեռն սիրո մասին:

Անգլիացի մտածող Չեսթերտոնը գրել է. «Մենք մեղքեր գործելով ձերացել ենք, և մեր Հայրը մեզանից փոքր է»: Այս խոսքերով նա ուզում է ասել, որ «Հինավուրցը» (Դանիել 7.9) անարատ է, գերծ մեղքի քայքայումից: Աստված տարիք չունի և շատ է սիրում մեզ այնպիսի սիրով, որը երբեք չի թուլանում և չի մարում: Այն միշտ պատրաստ և ի վիճակի է կատարելու այն խոստումը, որ տվել է Իր ժողովրդին Եսայի 46-ում. «Մինչև ձեր ձերությունն էլ ես եմ նա, մինչև այլևորություն կկրեմ ձեզ. ես՝ ստեղծեցի, ե՛ս կկրեմ և կազատագրեմ ձեզ» (Հմ. 4):

Հինգ համար հետո նա բացատրում է. «Ես եմ Աստված, ինձ նմանը չկա» (Հմ.9): «Ես այն Աստվածն եմ, որ է» (Ել. 3.14): Այդ է՛ն այնքան խորն է սիրում մեզ, որ կրեց մեր բոլոր մեղքերի ծանրությունը, հանուն մեզ խաչվեց, որպեսզի մենք ազատվենք մեր բեռից և երախտագիտությամբ հավիտյան երկրպագենք Իրեն:

Աղոթք - Գեղեցիկ Փրկիչ, ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ Քո սերը իմ հանդեպ երբեք չի ծերանա: Օգնի՛ր, որ այն ավելի խորանա: Ամեն:

Ասված խոսացել է կրել մեզ ու ազատագրել: Ուսի նոր ուժ usանանք ու աղավինենք Իրեն:

Իսկ նա (Զուղան), երբ հացը վերցրեց, իսկույն դուրս գնաց:
Գիշեր էր: (Զովհ. 13.30)

ԳԻՇԵՐ ԷՐ

Խաղաղության Նորեկյան մրցանակակիր էլի Վիգելի «Գիշեր» վեպը հրեական Հոլոքոստի մասին է: Հեղինակը նկարագրել է նացիստական մահվան ճամբարներում անձամբ իր տեսած ու զգացած սարսափները: Դա ինչ-որ առումով հիշեցնում է Աստվածաշնչում նկարագրված Իսրայելի ժողովրդի պատմությունը: Մովսեսն ու իսրայելցիները ստրկությունից փրկվեցին առաջին Զատիկին, իսկ «Գիշեր»-ում նացիստները ձերբակալում են հրեա առաջնորդներին, որոնք Զատիկն էին նշում:

Որպեսզի չքննադատենք Վիգելին ու նրա մոռյլ հեգնանքը, նկատի առնենք, որ Սուրբ Գրքում էլ կա նման շրջադարձ. Զատիկի գիշերը Հիսուսը, որից ակնկալվում էր Աստծո ժողովրդի փրկություն տառապանքներից, թույլ է տալիս, որ Իրեն ձերբակալեն: «Հոգով խռովվելով»՝ Հիսուսը վերջին ընթրիքի ժամանակ վկայեց, որ մատնելու են Իրեն (Հովհ.13. 21): Դժվար է հասկանալ, թե Հիսուսը, իմանալով հանդերձ, ինչպես հացը մատուցեց մատնիչին: «Իսկ նա (Հուղան), երբ հացը վերցրեց, իսկույն դուրս գնաց: Գիշեր էր» (Հմ.30): Պատմության մեծագույն անարդարությունը սկսվել էր, բայց Հիսուսն ասաց. «Այժմ Մարդու Որդին պիտի փառավորվի, Աստված էլ նրանով պիտի փառավորվի» (Հմ.31): Մի քանի ժամ անց աշակերտներն արդեն կզգային խուճապն ու պարտության վրդովմունքը: Սակայն Հիսուսը տեսել էր Աստծո ծրագրի վերջնական զարգացումը:

Երբ թվում է, թե խավարը հաղթում է, կարող ենք հիշել, թե Աստված ինչպես դիմադրավեց Իր խավար գիշերը և հաղթեց:

Աղոթք - Տե՛ր Զիսուս, շնորհակալ եմ, որ ընդունելով խաչը՝ ենթարկվեցիր Զոր ծրագրին: Շնորհակալ եմ, որ մեզ համար Դու հաղթեցիր մահին: Ամեն:

Կարող եմ խուճապի ու հուսահատության մահնվել, սակայն տե՛ր Զիսուսով կարելի է դուրս գալ դրանցից ու վայելել Նրա շնորհը:

Եվ ստիպեցին մի անցորդի՝ Սիմոն Կյուրենացուն, որը գալիս էր արտից, որ կրի Յիսուսի խաչափայտը: (Մարկ. 15.21)

ՆՐԱ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉԸ

Ժ ամանակակից հոլանդացի նկարիչ Էգբերտ Մոդերմանի «Սիմոն Կյուրենացի» կտավում հերոսի աչքերը թախճոտ են և ցույց են տալիս նրա պատասխանատվության հսկայական բեռը: Մարկոսի Ավետարանից իմանում ենք, որ արտից եկող Սիմոնը պատահական անցորդ է, որին ստիպել են կրել Հիսուսի խաչը:

Ըստ Մարկոսի՝ Սիմոնը Աֆրիկայի Կյուրեն քաղաքից էր, որտեղ այդ ժամանակ շատ հրեաներ էին ապրում: Ամենայն հավանականությամբ Սիմոնը Երուսաղեմ էր ելել Պասեկի տոնի առիթով և հայտնվել էր անարդար մահապատժի վայրում ու հարկադրված կատարել փոքր, բայց շատ կարևոր ու իմաստասլից գործ Հիսուսի համար (Մարկ. 15.21):

Դրանից առաջ Մարկոսի Ավետարանում Հիսուսն իր հետևորդներին ասում է. «Ով ուզում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, իր խաչը վերցնի ու իմ հետևից գա» (8.34): Գողգոթայի ճանապարհին Սիմոնը տառաջիորեն արեց այն, ինչ Հիսուսը իր աշակերտներին էր խնդրում, որ անեն: Նա վերցրեց իրեն տրված խաչը և կրեց այն հանուն Հիսուսի:

Մենք էլ ենք կրում «խաչեր»։ զրանք տարբեր կարող են լինել. հիվանդություն, աշխատանքի դժվարություն, սիրելի կորուստ կամ հալածանք հավատի համար: Երբ այդ տառապանքները կրում ենք հավատով, մարդկանց ցույց ենք տալիս Հիսուսի տառապանքները և խաչի վրա Նրա զոհողությունը: Նրա խաչը մեզ տվել է աստվածային խաղաղություն և ուժ մեր սեփական ճամփորդության համար:

Աղոթք - Տե՛ր Յիսուս, շնորհակալ եմ, որ հասկանում ես այն ցավը, որ ես զգում եմ՝ վերցնելով խաչս ու հետևելով Քեզ: Տու՛ր ինձ քաջություն և ուժ նույնիսկ այն պահին, երբ ճանապարհը դժվարին է: Ամեն:

Ի՞նչ «խաչ» ես կրում դու: Ինչո՞ւ ես կարող ես օգտագործել այդ մահախաչերը ուրիշներին դեղի Տե՛ր Յիսուսն ուղղորդելու համար:

Նրա բոլոր ծանոթները կանգնել էին հեռվում, նաև այն կանայք, որոնք Գալիլեայից նրա հետևից էին եկել, տեսնում էին այս բաները: (Դուկ. 23. 49)

ՈՉ ԱՅԴՊԵՍ

Սգալով իր երիտասարդ ընկերոջ մահը՝ մարդն ասաց. «Շահ՝տ կուզեի, որ այսպես չպատահեր»: Այս խոսքերը, թերևս, ողջ մարդկության սրտի ցավի պոռթկումն են: Մահը ցնցում է բոլորին, և բոլորն ուզում են ջնջել անջնջելին:

Սգավոր մարդու ասած արտահայտությունը լավագույնս կարող է նկարագրել, թե ինչպես էին ողբում Հիսուսի մահը Նրա հետևորդները: Ավետարանում այդ սարսափելի ժամերի մասին շատ քիչ բան կա, բայց այդ եղածը արձանագրում է Նրա մի քանի հավատարիմ մարդկանց գործողությունները:

Կրոնական առաջնորդներից մեկը՝ Հովսեփը, որ Հիսուսի ծպտյալ աշակերտներից էր (Հովհ.19. 38), համարձակվեց Պիղատոսից խնդրել Հիսուսի մարմինը (Դուկ. 23. 52): Մի պահ մտածենք, թե ինչպիսի ապրումներ պետք է ունենար մարդը սոսկալի խաչելության ենթարկվածի մարմինը վերցնելու և քնքշորեն թաղման պատրաստելու համար (Հմ.53): Նաև նկատի առնենք այն կանանց նվիրվածությունն ու արիությունը, որոնք Հիսուսի հետ մնացին մինչև վերջ, մինչև գերեզման (Հմ. 55): Մահվան դեմ՝ անհուն սեր:

Հիսուսի հետևորդները չէին սպասում, որ Հիսուսը հարություն է առնելու, նրանք համակերպվել էին վշտի հետ: Աստվածաշնչյան այդ հատվածն ավարտվում է անհույս ու մռայլ.«Վերադարձան, խունկեր և յուղեր պատրաստեցին, բայց շաբաթ օրը, պատվիրանի համաձայն, հանգստացան» (Հմ. 56): Չգիտեին, որ շաբաթ օրվա ընդմիջումը պատմության ամենադրամատիկ տեսարանի հիմքն էր դառնալու: Այն մահը պետք է դարձներ «ոչ սովորական»:

Աղոթք - Հայր, մի պահ հիշելով, թե ինչպիսին էր Որդուդ խաչելության և Հարության միջև օրը, շնորհակալություն եմ հայտնում, որ Նա ինձ համար չեղյալ հայտարարեց մեղքի անեծքը: Ամեն:

Երբ վաճառեց քո հասնիքը, միխթարության համար ո՞ւմ ես դիմում: Վստահու՞մ ես Նրան, ով հաղթեց մահին ու գերեզմանին:

Քրիստոսը մեզ երկրից անջատելուց առաջինը եղավ, որ մեռելներից հարուստուն է առել (Ա. Կորնթ. 15.20)

ՍԱ ՓՈԽՈՒՄ Է ԱՄԵՆ ԲԱԼ

Ելլի համալսարանի երկարամյա դասախոս Յարոսլավ Պելիկանը, որ «Իր սերնդի քրիստոնեությունից պատմության հեղինակություններից է», հայտնի է իր ակադեմիական մեծ աշխատանքով: Նա հրատարակել է ավելի քան երեսուցիս քարտեզներ և արժանացել Կլյուզի մրցանակի: Սակայն նրա ուսանողներից մեկը գիտնականի ամենակարևոր մտքերից է համարում մահվան մահճում ասած հետևյալ խոսքը.«Եթե Քրիստոսը հարություն է առել, ուրեմն ոչ մի հարց չկա, իսկ եթե հարություն չի առել, ուրեմն ամեն ինչ հարցական է»:

Պելիկանն ասես արձագանքելիս լինի Պողոսին. «Եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն մեր քարոզությունն ունայն է, ունայն է և ձեր հավատը» (Ա.Կորնթ. 15. 14): Առաքյալն այս համարձակ հայտարարությունն արել է, որովհետև գիտեք, որ հարությունը մեկանգամյա հրաշք չէր, այլ մարդկության պատմության մեջ Աստծո կատարած գործերի գագաթնակետը: Հարություն խոստումը վերաբերում էր ոչ միայն Հիսուսի՝ մեռելներից հարություն առնելուն, այլև Նրա հանդուգն հաստատումը, որ մեռած ու ավերված այլ բաներ ևս (կյանքեր, հարևաններ, հարաբերություններ) մի օր կվերականգնվեն Քրիստոսով: Իսկ եթե չկա հարություն, ըստ Պողոսի, մենք խնդիրների մեջ կլինենք, և մահն ու կործանումը կհաղթեն:

Հիսուսը հաղթեց չարին ու մահին, որպեսզի մենք կարողանանք համարձակ ու ազատ ապրել: Սա փոխում է ամեն ինչ:

Աղոթք - Հայր, թույլ տուր տեսնել, թե ինչպես է Հիսուսի հարությունը իմ կյանքում փոխում ամեն բան հիմա և ընդմիշտ: Ամեն:

Հիսուսի հարությամբ սրված մեծ հույսը հսկայական բան է փոխում մեր կյանքում:

Իսկ եթե բարիք գործեք և չարչարվեք ու համբերեք, դա է շնորհ Աստու առաջ: (Ա. Պետ. 2.20)

ՎԿԱ՝ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

Էվելինի տնօրենը հարցրեց.«Դու դեռ վրդովվա՞ծ ես, որ ուզում եմ կրճատել քո բաժանմունքի տարածքը»: Էվելինը դժկամորեն պատասխանեց՝ ոչ, բայց հիասթափված էր, որ տնօրենը փաստորեն նեղում էր իրեն: Ինքը փորձում էր օգնել ընկերությունը՝ ներգրավելով տարբեր խմբեր ու գտնելով նոր ձևեր, սակայն սահմանափակ տարածքը անհնար էր դարձնում դա: Էվելինը արցունքները զսպած համաձայնեց կատարել տնօրենի ասածը՝ ափսոսալով, որ չի կարողանալու իրականացնել իր նախատեսած փոփոխությունները:

Պետրոս առաքյալն իր առաջին նամակում առաջին դարի հավատացյալներին հորդորում էր հնազանդ լինել «ամեն մարդկային իշխանություն» (Ա. Պետ. 2. 13): Աշխատանքային միջավայրում դժվար է արդարություն պահելը, սակայն Պետրոսը հիմնավորում է, որ պետք է շարունակել բարիք գործելը.«Հեթանոսների մեջ լավ վարք ունեցե՛ք, որպեսզի այն բանում, ինչում ձեզ իբրև չարագործների բամբասում են, ձեր բարի գործերը տեսնելով՝ փառավորեն Աստծուն այցելության օրը» (Հմ.12): Դա կօգնի մեզ աստվածահաճօ օրինակ լինել ուրիշ հավատացյալների համար, որոնք նայում են մեզ:

Ենթարկվելով իշխանությունը՝ հնարավորություն կունենանք պատճառ դառնալու, որ ուրիշներն էլ հետևեն Աստծուն:

Աղոթք - Երկնավոր՝ Յայր, օգնի՛ր ինձ, որ ի պատասխան ղեկավարների պահանջների և հակառակ իմ դիմագրաված իրավիճակների՝ շարունակեմ պատվել Քեզ: Օգնի՛ր ինձ, որ ամեն օր ապրեմ այնպես, որ փառավորեմ Քեզ: Ամեն:

Ի՞նչ եմ անում սովորաբար, երբ ուրիշի իշխանության ներքո հայտնվում եմ դժվարին իրավիճակում: Ասված միտ էլ ուզում է մեք մեջ աշխատել այս ձևով:

Հավաքի՛ր ժողովո՞րհի՛ն՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին և քո քաղաքներուն գտնվող օտարականներին: (Բ. Օր. 31.12)

Ե՛Վ ԵՎ ՊԱՇՏԻ՛Ր

Բ ազմամարդ պաշտամունքի ժամանակ բոլորը փառաբանության երգեր էին երգում, և շատերը ուրախ ու խաղաղված էին: Բացի մի տխուր կնոջից, որն ուզում էր երգարանը մոտեցնել իր հինգ տարեկան երեխային, բայց նա էջր թողնում, փախչում էր: Այդ ժամանակ մի տարեց մարդ առաջարկեց վերցնել մանկանն ու քայլել եկեղեցու շուրջ, մի երիտասարդ կին էլ նշան արեց, որ ինքը կբռնի երգարանը երեխայի համար: Երկու ըոպե անց մայրը հանգստացած շունչ քաշեց, աչքերը փակեց ու կարողացավ Աստծուն պաշտել:

Աստված միշտ մտադրված է, որ Իր ամբողջ ժողովուրդը՝ այր, թե կին, տարեց, թե երիտասարդ, հավատի հին, թե նոր հետևորդ, պաշտի Իրեն: Երբ Մովսեսը, խոստացված երկիր մտնելուց առաջ, օրհնում էր Իսրայելի ցեղերին, բոլորին հորդորեց. «Հավաքի՛ր ժողովրդին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին և քո քաղաքներում գտնվող օտարականներին, որպեսզի լսեն, սովորեն Տեր Աստծուց վախենալ և պահեն ու կատարեն այս օրենքի բոլոր խոսքերը» (Բ. Օր. 31.12): Անկախ մեր կյանքի փուլերից, երբ մարդկանց հնարավորություն ենք տալիս, որ միասին պաշտեն Իրեն, ուրեմն պատվում ենք Աստծուն:

Այդ առավոտ եկեղեցում մայրը, տարեց տղամարդն ու երիտասարդ կինը Աստծո սերը տալու և ստանալու փորձառություն ունեցան: Երբ հաջորդ անգամ լինես եկեղեցում, հավանաբար դու էլ կկարողանաս Աստծո սերը ցուցաբերել դրա կարիքն ունեցողին կամ ինքդ լինես այդ շնորհքն ընդունողը:

Աղոթք - Սիրո՞ղ Հիսուս, Դու ուզում ես, որ բոլոր մարդիկ ողջունելի զգան, երբ գալիս են Քեզ պաշտելու: Օգնի՛ր մեզ, որ նկատենք ու սիրով օգնության ձեռք մեկնենք ուրիշներին:
Ամեն:

Որդես Քրիստոսի մարմնի անդամներ՝ մեր դարսականությունն է Աստծո սերը սսանալ ու վերադարձնել ուրիշներին:

Եթե ինձ սիրում եք, պահե՛ք իմ պատվիրանները: (Չովհ. 14.15)

ԱՐԺԵ ՍԵՐԸ ՎՏԱՆԳԵԼ

Բարեկամիս հետ մեր տասնամյա բարեկամությունն ավարտելուց հետո, առանց որևէ բացատրության, սկսեցի վերադառնալ մարդկանցից խուսափելու իմ վաղեմի սովորությունը: Մխիթարվելու համար գրադարակից հանեցի Ք.Ս. Լուիսի «Չորս սերերը» գիրքը: Հեղինակը շատ զորավոր դիտարկում է անում սիրո մասին, հաստատում է, որ «հկա ապահով ներդրում, երբ մարդ վտանգում է սերը: «Որևէ բան սիրելը սիրտդ կնեղացնի ու կկոտրի», - ասում է նա: Այս բառերը շատ բան փոխեցին իմ կյանքում այնպես, ինչպես երբ կարդացել էի Հիսուսի՝ հարությունից հետո իր աշակերտներին հայտնվելու մասին պատմությունը (Հովհ. 21.1-14) Պետրոսի ոչ թե մեկ, այլ երեք անգամ իրեն ուրանալուց հետո (18. 15-27): Հիսուսն ասում է. «Միմո՛ն, Հովնանի որդի, սիրու՞մ ես ինձ ավելի, քան զբանք» (21.15): Դավաճանություն ու մերժումի խայթոցն զգալուց հետո Հիսուսը Պետրոսի հետ խոսում է արիաբար, ոչ թե վախով, ուժով, ոչ թե տկարությունք, անձնուրացությունք, ոչ թե հուսահատությունք: Ցուցաբերում է ողորմություն, ոչ թե բարկություն՝ հաստատելով սիրելու իր պատրաստակամությունը:

Աստվածաշունչը բացահայտում է, որ «Պետրոսը տրտմեց, որ երրորդ անգամ հարցրեց իրեն. «Սիրու՞մ ես ինձ» (հմ.17), բայց Հիսուսը խնդրեց ապացուցել սերը ուրիշներին սիրելով (հմ.15-17) և իրեն հետևելով (հմ.19): Նա հրավիրեց իր աշակերտներին, որ անվերապահորեն վտանգեն իրենց սերը: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ունենա այդ հարցի պատասխանը, երբ Հիսուսը հարցնի. «Սիրու՞մ ես ինձ»:

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, խնդրում եմ՝ քանդի՛ր բոլոր պատերը, որոնք ինձ չեն պաշտպանում խոցելի լինելուց, որպեսզի կարողանամ հոգով զորացած, կարեկցաբար ու հետևողականորեն սիրել Քեզ և ուրիշներին: Ամեն:

Ասծո հանդեպ մեր ունեցած սերը դիտարկե՛ք խթանի, որ դասրաս լինենք սիրելու ուրիշներին:

Այլևս մահ չի լինելու: (Հայտն. 21.4)

ԻՍԿԱՊԵՍ ԿԵՆԴԱՆԱՆԱԼՈՒ ԵՆՔ

Հարուժյան տոնը նոր էր ավարտվել, և մեր հնգամյա որդին՝ Ուայթը, որ շատ բան էր լսել Հարուժյան մասին, բազմաթիվ հարցեր էր տալիս: Մի օր էլ, երբ նստած էր մեքենայի հետևի նստարանին՝ մտախոհ հայացքը պատուհանից դուրս, հանկարծ հարցրեց. «Հայրի՛կ, երբ Հիսուսը մեզ կյանք վերադարձնի, մենք իսկապե՞ս պիտի կենդանանանք, թե՞ մեր պատկերացման մեջ?»:

Սա այն հարցն է, որ բոլորիս է հուզում, անկախ նրանից՝ այդ մասին բարձրաձայնում ենք, թե ոչ: Աստված իսկապե՞ս բուժելու է մեզ, իսկապես մեզ հարուժյուն է տալու, և արդյո՞ք իսկապես կատարելու է Իր բոլոր խոստումները:

Հովհաննես առաքյալը մեր այդ ապագան նկարագրում է որպես «նոր երկինք ու նոր երկիր» (Հայտն. 21.1): Այդ սուրբ քաղաքում «Ինքը կլինի նրանց Աստվածը, որ նրանց հետ է» (Հմ.3): Քրիստոսի տարած հաղթանակով մեզ խոստացվում է մի ապագա, որտեղ այլևս չկան արցունքներ, չկա չարիք Աստծո ու Նրա ժողովրդի հանդեպ: «Այլևս մահ չի լինելու, չի լինելու նաև ո՛չ սուգ, ո՛չ աղաղակ, ո՛չ ցավ, որովհետև նախկիններն անցան» (Հմ.4):

Աստված խոստանում է, որ ապագայում մենք իսկապես կենդանանալու ենք, այնքան իրական, որ մեր այժմյան կյանքը լոկ ստվեր է թվալու:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, Դու ասել ես, որ մահը մոտենում է իր վախճանին, և Դու ինձ իսկական կյանք ես տալու: Ամեն:

Սահվան զգացում մի՞տ է կարող ենք ունենալ, բայց Ասված խոսանում է, որ մահը դասադասված է, և մենք իսկապես աղոթելու ենք: Այդ խոսուումը նորոգում է մեր հույսը:

Եվ Տեր Աստված վերցրեց մարդուն և դրեց Եդեմի պարտեզում, որպեսզի նա այն մշակի ու պահի: (ԾՆՆ. 2.15)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐԻ ՕՐԿԱ ԱՌԻԹՈՎ

Սկսած 1970 թվականից՝ ամեն տարի ապրիլի 22-ին նշվում է Երկրի օրը: Վերջին տարիներին շուրջ երկու հարյուր երկրի միլիոնավոր բնակիչներ են մասնակցում այդ օրվա կրթական ու հանրային տարբեր ծրագրերին: Երկրի օրը հիշեցնում է մեր զարմանահրաշ մոլորակի մասին հոգալու կարևորությունը, որը շատ հնուց եկող պատվիրան է: Դրա մասին խոսվում է դեռևս Ծննդոց գրքում: Աստված ստեղծեց ամբողջ տիեզերքը և որպես մարդկանց բնակություն վայր՝ ձևավորեց Երկիրը: Նա ոչ միայն ձևավորեց լեռնազագագաթներն ու փարթած հարթավայրերը, այլև ստեղծեց եղեմական պարտեզը՝ սքանչելի մի վայր, որն այդտեղի բնակիչների համար ապահովում էր սնունդ, ապաստան ու գեղեցկություն (Ծնն. 2.8-9):

Իր ամենակարևոր ստեղծագործությունից՝ մարդուն կյանք տալուց հետո Աստված նրան դրեց այդ պարտեզում (Հմ.8.22) և նրան պարտավորեցրեց, որպեսզի «նա այն մշակի ու պահի» (Հմ.15): Ադամին ու Եվային դրախտից վտարելուց հետո Աստծո ստեղծագործության մասին հոգալը ավելի դժվարացավ (3.17-19), և մինչև օրս էլ Աստված Ինքն է հոգում մեր մոլորակի ու նրա բոլոր արարածների մասին (Սաղմ. 65. 9-13) և խնդրում է մեզանից, որ նույնը անենք (Առ.12.10):

Մենք բոլորս ունենք միջոցներ, որոնցով կարող ենք հոգ տանել այն տարածքների մասին, որոնք Աստված վստահել է մեզ: Թող որ մեր հոգատարություն ու խնամքի գործողությունները երախտագիտության արտահայտություն լինեն այս գեղեցիկ մոլորակի համար:

Աղոթք - Արարի՛չ Աստված, Դու մեզ ես վստահել հրաշալի մի մոլորակ, որը պահում ու զարմացնում է ինձ: Խնդրում եմ՝ օգնի՛ր, որ Քո տված նվերին արձագանքեմ նրա հանդեպ հոգածությունմբ և երախտագիտություն հայտնեմ Քո նախատեսություն համար: Ամեն:

Աստծո գեղեցիկ ստեղծագործությունը ներհնում է մեզ, և մեր յարակալանությունն է յաիիյանել այն:

Ուրեմն հետևե՛ք խաղաղությանը և միմյանց ամրապնդելուն: (Յոռն. 14. 19)

ԻՆՉՆ Է ԿԱՐԵՎՈՐ

Ընկերուհուս հավատակից գործընկերներից մեկը հետաքրքրվել էր, թե նա որ քաղաքական կուսակցությունն է հարում: Ամենայն հավանականությամբ հարցի նպատակը եղել է այդ պահին իրենց համայնքը բաժանող որոշ հարցերի ճշտումը, սակայն ընկերուհիս պատասխանել է. «Քանի որ երկուսս էլ հավատացյալ ենք, նախընտրում եմ, որ կենտրոնանանք Քրիստոսո՛վ մեր ունեցած միասնությունն վրա»:

Պողոսի ժամանակներում նույնպես մարդիկ անմիաբան էին տարբեր հարցերի շուրջ: Օրինակ, Հռոմի քրիստոնյաների միջև տարաձայնություններ էին առաջացել այն թեմայով, թե որ օրերն են սուրբ և ինչպիսի ուտելիքներ են թույլատրվում այդ օրերին: Չնայած անկախ պաշտոնից՝ «յուրաքանչյուրն իր մտքի համոզմամբ վարվելու» խորհրդին՝ Պողոսը նրանց հիշեցնում է Հիսուսի համար ապրելու կարևորության մասին (Հռոմ. 14.5-9): Միմյանց դատելու փոխարեն նա քաջալերեց. «Ուրեմն հետևե՛ք խաղաղությանը և միմյանց ամրապնդելուն» (Հմ.19):

Մեր օրերում, երբ շատ երկրներ, եկեղեցիներ ու համայնքներ պառակտված են մեծ ու փոքր խնդիրների պատճառով, մենք կարող ենք միմյանց հիշեցնել Քրիստոսի՝ խաչի վրա կատարած գործի ճշմարտությունը՝ հանուն մեր կյանքը Նրա հետ հավիտյան ապահովելու: Միմյանց դատապարտելու փոխարեն՝ սիրով վարվենք և ապրենք մեր եղբայրներին ու քույրերին պատվելով:

Աղոթք -Տեր, շնորհակալ եմ ինձ փրկելուդ համար: Ների՛ր, երբ փոքր հարցերի համար շեղում եմ ճանապարհս և թույլ եմ տալիս, որ պառակտում առաջանա իմ ու այլ հավատացյալների միջև: Օգնի՛ր, որ Քեզ վրա կենտրոնանալով՝ կարողանամ միասնություն առաջացնել: Ամեն:

Բնական է, որ հայացքների ու կարծիքների տարբերության դաժանով բաժանումներ կլինեն մարդկանց միջև: Բայց շատ կարևոր է այդ հարցերը լուծել:

ժամանակն է նրան ողորմելու, որովհետև հասել է որոշված ժամանակը: (Սաղմ. 102. 13)

ԱՐԴԵՆ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Սողոմոն Իմաստունն ասում է. «Ամեն բանի ժամանակ կա և ժամանակ՝ երկնքի տակ բոլոր գործերին» (Ժող. 3.1): 1915թ. Հայոց ցեղասպանությունից 94 տարի անց ԱՄՆ նախագահ Բարակ Օբաման 2009-ի ապրիլքսանչորսյան ուղերձում գործածեց «Մեծ եղեռն» բառակապակցությունը: Դա երկար սպասված ու առաջին դրական քայլն էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Իսկ 2021-ի ապրիլի 24-ին ԱՄՆ նորընտիր նախագահ Զո Բայդենը ավելի կարևոր հայտարարությամբ հանդես եկավ՝ 1915-ին պատահածն անվանելով Հայոց ցեղասպանություն:

107 տարի է անցել այդ ողբերգությունից, և հայ ժողովուրդը շարունակում է հաստատակամորեն ոչ միայն ոգեկոչել մեկուկես միլիոն նահատակների հիշատակը, այլև ջանք չի խնայում, որ Թուրքիան ևս 1915-ին կատարվածն ընդունի որպես կանխամտածված, կազմակերպված ու մի ամբողջ ազգի բնաջնջման համար գործադրված ոճիր: Անուրանալի պատմական իրողություն, որն ի պատասխան հայ ժողովրդի ջանքերի՝ ԱՄՆ այս երկու նախագահների հայտարարություններով նոր ձև է ստացել:

Աստծո շնորհիվ մենք վերապրեցինք, կանք, պահանջատեր ենք և շարունակում ենք մեր երթը՝ մինչև հասնենք մեր արդար իրավունքներին: Այսօրվա բնաբանն ասում է, թե Աստված կկանգնի, կզթա ու կողորմա, որովհետև ժամանակն է: Մեր պարագայում էլ ժամանակն է, որ Աստված ողորմա մեզ, ու հայոց հարցը արդար լուծում ստանա:

Աղոթք - Պահող ու պաշտպանող Աստված, Դու՛ ես մեր հույսը, վստահությունն ու ապավենը: Ժամանակն է, որ լսես մեր աղերսն ու ողորմաս մեզ: Ամեն:

Այո՛, ամեն ինչի ժամանակը կա: Համոզվեմք, որ սահմանված ժամանակը մոտ է, և Ասված Ինքն է հասուցելու բոլորին:

Բարձրից ուղարկեց և ինձ բռնեց: (Բ.Թագ. 22.17)

ՏԵՂԱՓՈՒՍՎԱԾ ԱՆԿՏԱՆԳ ՎԱՅՐ

Փոքրիկ աղջնակն անցնում էր ծանծաղ առվով, իսկ հայրը դիտում էր նրան: Երբ նա իջնում էր հոսանքն ի վար, ջուրը սկսեց լցվել մինչև ծնկները հասնող ռետինե կոշիկների մեջ: Քիչ անց աղջիկը ճչաց.«Հայրիկ, ես սուզվում եմ»: Հայրը երեք քայլով հասավ դստերն ու ափ հանեց: Աղջիկը կոշիկները հանեց ու ծիծաղեց, երբ ջուրը թափվեց:

Սաղմոսերգու Դավիթը իր թշնամիներից ազատվելուց հետո մի պահ նստեց, «հանեց կոշիկները» և թույլ տվեց, որ օգնությամբ հեղեղվի իր հոգին: Իր զգացմունքներն արտահայտելու համար նա մի երգ գրեց. որում ասում էր. «Ես կանչում եմ Տիրոջը, որ փառաբանության է արժանի, և պիտի ազատվեմ իմ թշնամիներից» (Բ. Թագ. 22.4): Նա Աստծուն փառաբանեց որպես «ժայռ, վահան, բարձր աշտարակ և ապաստան» (Հմ.2-3) և Աստծո պատասխանը եղավ այսպիսին.«Երկիրը սասանվեց ու դողաց, քանզի Նա բարկացավ, կայծակներ փայլատակեցին նրանից, Տերը որոտաց երկնքից, բարձրից ուղարկեց և ինձ բռնեց ու դուրս քաշեց ջրերից» (Հմ. 8, 10, 13-15, 17):

Գուցե այսօր քո շրջապատում զգաս ընդդիմություն, կամ գուցե դու ես խրված մեղքի մեջ, որը դժվարացնում է քո հոգևոր առաջընթացը: Մտածի՛ր, թե Աստված ինչպես է անցյալում քեզ օգնել և գովաբանի՛ր Նրան, խնդրելով, որ դարձյալ նույնը անի: Հատկապես շնորհակալություն հայտնիք Նրան, որ փրկեց քեզ ու փոխադրեց իր սիրելի Որդու թագավորություն (Կող. 1. 13):

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ բազմիցս օգնության ես հասել: Օգնի՛ր իմանալ, որ ցանկացած դժվարություն կհաղթահարեմ, եթե Դու կողքիս լինես: Ամեն:

Որդեսօգի հավաստի ավելանա, հի՛շի՛ր Աստծո արած բարիքներն ու սված օրհնությունները և փառաբանի՛ր նրան:

Թող ոչ ոք քո երիտասարդ տարիքը չարհամարհի, այլ հավատացյալներին օրինակ եղիր խոսքով, վարքով, սիրով, հավատով, անարատությամբ: (Ա.Տիմ. 4.12)

ՏԱՐԻՔԸ ՊԱՐՉԱՊԵՍ ԹԻՎ Է

Պետք չէ երիտասարդությունը հետ պահել որևէ համարձակ քայլից ու ձեռքբերումից: Այս համոզմամբ տասնմեկ տարեկան Միկալիան իր տատիկի բաղադրատոմսով լիմոնադի գործ սկսեց, որն անվանեց «Ես ու մեղուները»: Այդ գործի համար նա 60 հազար դոլար շահեց հեռուստատեսային «Շարք թենք» ծրագրի ներդրողներից: Նաև պայմանագիր կնքեց մի մեծ ընկերության հետ, որպեսզի իր արտադրած լիմոնադը վաճառվի այդ ցանցի 55 խանութներում:

Միկալիայի ձգտումն ու երազանքները հիշեցնում են Պողոս առաքյալի խոսքերը՝ ուղղված Տիմոթեոսին. «Թող ոչ ոք քո երիտասարդ տարիքը չարհամարհի, այլ հավատացյալներին օրինակ եղիր խոսքով, վարքով, սիրով, հավատով, անարատությամբ» (Ա.Տիմ. 4.12):

Թեև Տիմոթեոսը Միկալիայի նման երեխա չէր, բայց ամենայն հավանականությամբ իր եկեղեցու հավատացյալներից շատ երիտասարդ էր և մտավախություն ուներ, որ մարդիկ արհամարհանքով են վերաբերում իրեն: Բացի այդ՝ Պողոս առաքյալի հետ փորձաշրջան անցնելուց հետո էլ ոմանք մտածում էին, որ Տիմոթեոսը այնքան էլ հասուն չէր իրենց առաջնորդելու համար: Եվ Պողոսը երիտասարդին խրախուսեց հոգևոր հասունություն ցուցաբերել իր խոսքով, եկեղեցու անդամներին սիրելով, հավատքը գործադրելով և անարատությամբ» (Հմ.12):

Թող Աստված մեր կյանքը ձևավորի ավետարանով, այնպես, որ լինենք տասնութ, թե յոթանասուն տարեկան, արժանի լինենք այն կիսել ուրիշների հետ:

Աղոթք - Հայր, խնդրում եմ՝ ների՛ր ինձ, եթե դժվարացնեմ հաջորդ սերնդի՝ Քեզ հետևելը: Օգնի՛ր կարողանամ լավ օրինակ լինել ուրիշներին և իմ խոսքերով ու գործերով ցույց տամ իմ նվիրումը Հիսուսին: Ամեն:

Ասված ցանկացած սարիքում կօգնի մեզ հոգևոր կյանքում աճելու համար, որովհետև սարիքը դարձադառնում է մի թիվ է:

ՅՈՒՆՈՒՄ, ո՛վ Սիոնի դուստր, աղաղակի՛ր, ո՛վ Իսրայել... (Սոփ. 3.14)

ԴԱՐՉՅԱԼ ԵՐԳԻՐ

Ավստրալիայի մեղվակեր թռչունների արքան սկսել էր կորցնել երգելու ունակությունը: Ժամանակին դրանց թիվը մեծ էր, բայց այժմ ընդամենը 300 թռչուն էր մնացել, ու գնալով պակասում էին, քանի որ արուները, մոռանալով իրենց յուրահատուկ երգը, չէին կարողանում գրավել զույգերին:

Բնապահպանները մշակել են երգի միջոցով այդ թռչուններին փրկելու ծրագիր: Այսինքն՝ միացնում են ձայնագրություններ, որպեսզի նրանք սովորեն իրենց սրտի երգը: Սոփոնիա մարգարեն դիմեց ղեկավարության մեջ հայտնված մարդկանց և հայտարարեց, որ նրանց մեղքերի ու աղավաղումների պատճառով մոտեցել է Աստծո դատաստանի օրը (Սոփ. 3.1-8): Հետագայում այդպիսի բան էր տեղի ունեցել նաև գերություն ու աքսորի մեջ եղողների մոտ, որոնք նույնպես կորցրել էին իրենց երգը (Սաղմ. 137.4): Բայց Սոփոնիան կանխագուշակեց, որ դատապարտումից հետո Աստված գալու է կործանված ժողովրդի մոտ, ներելու է բոլորի մեղքերը և երգելու է նրանց համար. «Նա ուրախությունը պիտի հրճվի քեզ համար, նա կհանդարտեցնի իր սիրով և ցնծությունը պիտի գոչի քեզ համար» (Սոփ. 3.17): Արդյունքում մարդկանց սրտի երգը, ցնծությունը կվերականգնվի (Հմ.14):

Անկախ մեր անհնազանդությունից կամ կյանքի փորձություններից՝ մենք էլ կարող ենք կորցնել սիրո ու ուրախության երգը: Բայց վերևից մի ձայն կերգի սիրո ու ներողամտության երգեր: Եկե՛ք լսենք Նրա մեղեդին ու երգենք միասին:

Աղոթք - Սիրո՛ Դայր, Դու ուրախության երգեր ես երգում ինձ համար: Ես էլ փառաբանում եմ Քեզ և երգում իմ գովասանքի երգերը: Ամեն:

Աստված ցնծում է մեզ համար: Ի՞նչ երգ, բանաստեղծություն կամ աղոթք միտք մասնուցնի Իրեն՝ որդես դասասխան Իր երգի:

Իսկ համբերությունը թող լիովին գործուն լինի, որպեսզի կատարյալ ու լիարժեք լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք: (Չակ. 1.4)

ՀԱՎԱՏՔԻ ՄԵՉ ԱՃԵԼ

Այգեգործությունը զբաղվելուս առաջին շրջանում արթնանալուն պես շտապում էի բանջարանոց՝ տեսնելու, թե մի բան ծլել է: Համացանցում ինձ հետաքրքրող հարցը որոնելով՝ իմացա, որ սերմերի պատրաստությունը բույսերի կյանքի ամենակարևոր փուլն է: Իմանալով, որ այդ գործընթացը անհնար է արագացնել, ավելի գնահատեցի փոքրիկ ծիլերի ուժը, որոնք պայքարում են հողից դեպի արև դուրս գալու և կլիմայական պայմաններին հարմարվելու համար: Այդպես մի քանի շաբաթ համբերատար սպասեցի, մինչև որ կանաչ ծիլեր տեսա հողի մակերեսին:

Այդպես էլ հեշտ է խոսել մեր կյանքի հաղթանակների ու նվաճումների մասին՝ առանց խորանալու, որ մեր նկարագրի աճի համար ևս պայքար ու ժամանակ է անհրաժեշտ: Հակոբոսը պատվիրում է. «լիարժեք ուրախություն համարեք, երբ տարատեսակ փորձանքների մեջ ընկնեք» (Հակ. 1.2): Բայց ի՞նչ ուրախություն կարող է լինել փորձանքի մեջ:

Աստված երբեմն մեզ դժվարություններ ու մարտահրավերներ է տալիս, որպեսզի մենք այնպես ձևավորվենք, ինչպես Ինքն է նախատեսել: Նա սպասում է, թե մենք երբ ենք դուրս գալու կյանքի փորձություններից «կատարյալ ու լիարժեք և ոչ մի բանի պակասություն չունենանք» (Հմ.4): Հիմնվելով Հիսուսի վրա, զորանալով և թույլ տալով, որ Սուրբ Հոգու պտուղը ծաղկի մեր կյանքում՝ մենք կկարողանանք հաղթահարել ամեն փորձություն (աղ. 5. 22-23): Նրա իմաստնությունը մեզ կտա այն սնունդը, որ անհրաժեշտ է ամեն օր՝ իսկապես ծաղկելու համար (Հովհ. 15.5):

Աղոթք - Երկնավոր Յայր, երբեմն իմ դիմագրաված փորձություններն անտանելի են թվում: Խնդրում եմ՝ ինձ համբերություն տուր և օգնի՛ր, որ աճեմ հավատիս մեջ: Ամեն:

Փորձություններն անդակաս են մեր կյանքում, բայց կարևոր է, որ Աստծո գործությամբ հաղթահարենք դրանք:

Այն խոսքը, որ դու ասացիր մեզ Տիրոջ անունից, մենք չենք լսում: (Եր. 44.16)

ՀՈԳԵՎՈՐ ԾԻՇՏ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Քիմիաթերապիան փոքրացրեց սկեսրայրիս ենթաստամոք- սային գեղձի ուռուցքը, բայց որոշ ժամանակ անց, երբ այն դարձյալ սկսեց մեծանալ, նա հարցրեց բժշկին. «Ի՞նչ է պետք անել, գուցե էլի՞ մեկ կուրս քիմիաթերապիա, կամ ճա- ուագալթային բուժում կամ այլ գեղամիջոց»:

Հուգայի բնակիչները ևս կյանքի ու մահվան նման հարցի առաջ էին կանգնած: Պատերազմից ու սովից հոգնատանջ Աստոծ ժողովուրդը մտածում էր, որ իր խնդիրները կռապաշ- տուլթյան պակասից են, և որոշեց ավելի շատ զոհեր մատուցել կեղծ աստվածներին՝ տեսնելու համար արդյո՞ք նա կպաշտպա- նի ու բարգավաճում կպարգևի իրեն (Եր. 44.17):

Երեմիան ասաց, որ նրանք սխալ ախտորոշում են արել: Նրանց խնդիրը ոչ թե կռապաշտուլթյան պակասն է, այլ հենց կռապաշտուլթյունը: Նրանք մարգարեին այսպես ընդունե- ցին.«Այն խոսքը, որ դու ասացիր մեզ Տիրոջ անունից, մենք չենք լսում» (Հմ.16): Երեմիան պատասխանեց նրանց.«Դուք խուճկ ծխեցիք և մեղք գործեցիք Տիրոջ դեմ ու չանսացիք Տի- րոջ ձայնին, չընթացաք նրա օրենքով, կանոններով ու վկայու- թյուններով, դրա համար ձեզ է պատահել այդ չարիքը, ինչպես որ այսօր է» (Հմ. 23):

Հուգայի պես մենք էլ կարող ենք կրկնապատկել մեր մեղա- վոր ընտրուլթյունը, որը մեզ ավելի մեծ դժվարուլթյան մեջ կզցի: Միայն Հիսուսը կարող է մեզ հանել մեր դժվարուլթյուն- ների միջից, եթե դիմենք Իրեն:

Աղոթք -Տե՛ր Գիսուս, նախընտրում եմ ձախողվել Քեզ հետ, քան հաջողվել առանց Քեզ: Ամեն:

Հոգևոր ծիս ախտորոշմամբ կարող եմ հեռանալ մեր մեղավոր ընթացից և Տե՛ր Գիսուսի օգնությամբ մեր կյանքը փոխել ու հաղթահարել յուրաքանչյուր փորձություն:

Տերը Սիոնից թող օրհնի քեզ: (Սաղմ. 134.3)

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ

Գիշերվա ժամը երեքն է, ծանր հիվանդներից մեկը արդեն չորրորդ անգամ սեղմում է զանգի կոճակը: Քիչ անց մյուս հիվանդն է կանչում: Գիշերային հերթափոխի հիվանդապահուհին անտրտունջ պատասխանում է զանգերին: Հինգ տարի առաջ նա ինքն էր խնդրել, որ իրեն տեղափոխեն գիշերային հերթափոխի, որպեսզի խուսափեր ցերեկվա զբաղվածությունից: Սակայն հետո հասկացավ, որ այդ աշխատանքը, բացի բժշկական օգնությունից, նաև լրացուցիչ պարտականություններ էր նշանակում. հիվանդին բարձրացնել, շրջել, նաև վերահսկել, որպեսզի բժշկին կարողանան հայտնել արտակարգ իրավիճակների մասին: Գիշերային գործընկերների հետ սերտ ընկերական կապեր ունենալով հանդերձ՝ հիվանդապահուհին դեռևս չէր կարողանում հաղթահարել քնի պահանջը: Եվ հաճախ էր աղոթում դրա համար:

Սաղմոսներգուն գրում է. «Եկե՛ք օրհնեցե՛ք Տիրոջը, ո՛վ Տիրոջ բոլոր ծառաներ, դուք, որ գիշերները կանգնում եք Տիրոջ տանը: Ձեր ձեռքերը բարձրացրե՛ք դեպի սրբությունը և օրհնեցե՛ք Տիրոջը» (Սաղմ. 134. 1-2): Այս սաղմոսը, որ գրված էր որպես տաճարի պահապանների ծառայող ղեկավարների համար, ընդունում է նրանց աշխատանքի կարևորությունը գիշեր, թե ցերեկ: Այն շատ հարմար է ասել գիշերային աշխատողների համար, բայց, իհարկե բոլորս էլ գիշերները կարող ենք փառաբանել Աստծուն:

Աղոթք -Սիրելի՛ Հայր, երբ ես վաղ առավոտյան ապահով քնում եմ, օրհնի՛ր գիշերը աշխատողներին, որոնք կարևոր գործ են անում, և օգնի՛ր ինձ, որ փառաբանեմ Քեզ: Ամեն:

Յի՛ցի՛ր գի՛շերը ա՛շխատողներին և խնդի՛ր Ասծուց, որ օրհնի նրանց:

Աստված ասաց. «Թող լույս լինի»: Եվ լույս եղավ: (ԾՆՈ.1.3)

ԹՈՂ ԼՈՒՅՍ ԼԻՆԻ

Երբ աղջիկս փոքր էր, նրա առաջին անգամ տեսած բոլոր առարկաների անուկները ասում էի, թույլ էի տալիս, որ դիպչեի անձանոթ առարկաներին, կրկներ անունը, որպեսզի բառապաշարը հարստանար: Թեև ես ու ամուսինս սպասում էինք, որ նրա արտասանած առաջին բառը մամա կամ պապա էր լինելու, սակայն շատ զարմացանք, երբ մի օր նա առաջին անգամ բառ արտասանեց. «տույս» թոթովեց նա, երբ ես նրան սովորեցնում էի լույս բառը:

Լույսը Աստծո առաջին բառերից մեկն է, որ գրված է Աստվածաշնչում: Երբ Աստծո հոգին սավառնում էր ամայի, դատարկ ու խավար երկրի և ջրերի վրա, Աստված Իր ստեղծագործության մեջ ներմուծեց լույսը՝ ասելով. «Թող լույս լինի» (ԾՆ.1.3): Նա ասաց, որ լույսը բարի է, և դա երևում է Աստվածաշնչի մնացած մասերում: Սաղմոսերգուն բացատրում է. «Խոսքերիդ հայտնությունը լույս է տալիս և իմաստուն դարձնում պարզամիտներին» (Սաղմ. 119.130): Հիսուսը իրեն համարում է «աշխարհի լույսը», կյանքին լույս տվողը (Հովհ. 8.12):

Սուրբ Գրքում Աստծո արտասանած առաջին խոսքը լույս տալու մասին է: Դա այն պատճառով չէ, որ Նա Իր գործն անելու համար լույսի կարիք ուներ, ո՛չ: Լույսը մե՛զ համար էր: Լույսը մեզ հնարավորություն էր տալու տեսնել Իրեն, ճանաչել, մեր շրջապատում նկատել Նրա մատնահետքերը, որպեսզի կարողանանք բարին զանազանել չարից, և այս վիթխարի աշխարհում քայլ առ քայլ հետևել Հիսուսին:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ Դու կյանքի լույսն ես ու լուսավորում ես իմ ամենօրյա ճանապարհը: Ամեն:

Մեր կյանքի մռայլ օրերին Ասծո հուսադրող լույսի կարիքն եմ ունենում:

Երբ նա ստուժ է, ինքն իրեն է արտահայտում, որովհետև ստախոս է և կեղծիքի հայրը: (Դովհ. 8.44)

ՍՏԵՐԻ ՀԱՅՐԸ

Իր շատ ընկերների նման Վիկտորը նույնպես ընկել էր վտանգավոր փորձությունների մեջ. հետևում էր պոռնոգրաֆիային: Սակայն շուտով հասկանալով, թե որքան սխալ ճանապարհի վրա է ինքը, որ մեղք է գործել Աստծո ու իր կնոջ հանդեպ, նա երգվեց, որ այլևս երբեք չի վերադառնա այդ արատավոր մեղքին: Բայց մտավախություն ունենալով, որ ընտանիքը փրկել այլևս չի կարողանա: Արդյոք երբեք կլինի՞ ազատ ու լիովին ներված: Սատանան փորձությունն այնպես է ներկայացնում, ասես, դա մեծ բան չէ. «Բոլորն են անում, դու էլ կարող ես»: Այն պահին, երբ հավատալով հանձնվում ենք, ի հայտ են գալիս վտանգները: Եվ մենք զգում ենք, որ այլևս շատ ուշ է, որ այլևս անհույս ենք:

Հոգևոր պատերազմում թշնամին, այո, կխոսի ու կգործի այնպես, որ ոչնչացնի մեզ: Հիսուսն ասում է. «Նա սկզբից ևեթ մարդասպան էր և ճամարտության մեջ չմնաց, որովհետև նրա մեջ ճամարտություն չկա: Երբ նա ստում է, ինքն իրեն է արտահայտում, որովհետև ստախոս է և կեղծիքի հայրը» (Հովհ. 8.44):

Սատանան ստախոս է, և մենք չպետք է լսենք նրան: Ոչ այն դեպքում, երբ նա ասում է, որ մեր կատարածը մեծ մեղք չի, ոչ էլ այն դեպքում, երբ ասում է, որ մենք անհույս ենք: Թող Տեր Հիսուսը մեզ օգնի հրաժարվելու չար մարդու խոսքերից և դրանց փոխարեն իրեն լսենք: Մեր սրտերը բացենք Նրա խոստման առաջ. «Եթե դուք հավատարիմ մնաք իմ խոսքին, իմ ճամարիտ աշակերտները կլինենք: Կճանաչեք ճամարտությունը, և ճամարտությունը կազատի ձեզ» (Հմ.31-32):

Աղոթք - Տեր Հիսուս, մեղքի գերությունից ինձ ազատելու համար Դու մեռար և հարություն առար: Խնդրում եմ օգնի ինձ, որ այսօր ապրեմ այդ ազատության մեջ: Ամեն:

Մեղքի զգացումը կարող է հուսահատության մասնել, բայց Տեր Հիսուսը մեզ խոստանում է ազատել ստերի հորից ու մեղքի գերությունից: Ամեն:

Ձեր սրտերը բացե՛ք Նրա առաջ. Աստված մեր ապավենն է: (Սաղմ. 62.8)

ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

«Կանաչ տանիքներ» պատմության գլխավոր հերոս էններ փափագում էր ընտանիք ունենալ: Լինելով որբ՝ նա բոլորովին հույս չուներ, որ երբևէ տուն կունենա: Բայց շուտով իմացավ, որ Մեթյու անուշով տարեց մի մարդ և իր քույրը պատրաստ են իրեն ընդունել: Հասնելով նրանց տուն՝ էններ հակասական զգացումներ ունեցավ. սկզբում ներողություն խնդրեց, որ շատախոսում է, բայց տանտերն ասաց, որ կարող է խոսել, որքան ուզում է: Դա աղջկան շատ դուր եկավ, որովհետև նրան թվում էր, թե իրեն ոչ ոք չի ուզում լսել:

Էննի ոգևորվածությամբ չքացավ, երբ իմացավ, որ տանտերերը մտածել են, թե իրենց տուն եկողը տղա է, որը կօգնի իրենց ազարակի աշխատանքներում: Բայց տուն ունենալու նրա ցանկությունն այնքան մեծ էր ու ջերմ սիրով լի, որ նրան ընդունեցին որպես իրենց ընտանիքի անդամ:

Բոլորիս հետ էլ պատահել է, երբ մենակ ու անցանկալի ենք զգացել մեզ: Բայց երբ Հիսուսի փրկության միջոցով դառնում ենք Աստծո ընտանիքի անդամ, Նա մեզ համար դառնում է ապավեն (Սաղմ. 62.2): Նա հաճույք է ստանում մեզանից և հրավիրում է Իր հետ խոսելու մեր վշտերի, անհանգստությունների, փորձությունների ու հույսերի մասին: Սաղմոսերգուն ասում է, որ կարող ենք «վստահել Աստծուն և մեր սրտերը բացել նրա առաջ» (Հմ. 5.8):

Մի՛ վարանիր, խոսի՛ր Աստծո հետ, ինչքան կուզես: Նա ոչ միայն դեմ չի լինի քեզ, այլև կուրախանա քո մեջ:

Աղոթք - Հայր, օգնիր, որ չվարանեմ Քեզ հետ խոսելուց, երբ ինչ-որ բան ճնշում է սիրտս: Շնորհակալ եմ, որ լսում ես ինձ:
Ամեն:

Ասված քեզ ընդունում է որդես Իր գավակը և հրավիրում է Իր սանը աղասան ու քերություն գտնելու: Խոսի՛ր Նրա հետ:

Այս ծառայության փորձով փառավորում եմ Աստծուն՝ Քրիստոսի Ավետարանը խոստովանելու և ձեր հնազանդության համար, նաև այն առատ մասնակցության համար, որ բաժին եք հանում նրանց ու բոլորին: (Բ.Կորնթ. 9.13)

ԾԱՌԱՅԵԼՈՒ ՄԻՐՏ

Նյու Մեքսիկայի Քարիսբադ քաղաքում գործող առաքելութ-
վոյններից մեկը օժանդակում է այդ համայնքի բնակիչ-
ներին՝ նրանց ամսական անվճար բաշխելով ավելի քան 10
տոննա սննդամթերք: Առաքելության առաջնորդն ասում է.
«Մեր նպատակն է հոգալ նրանց գործնական կարիքները, որ-
պեսզի կարողանանք հասնել հոգևոր կարիքներին»: Աստված
փափագում է, որ որպես քրիստոնյաներ՝ մեզ տրվածով մենք
կարողանանք ուրիշներին մոտեցնել Նրան: Մեր մեջ զարգաց-
նենք ծառայության ոգի, որը կփառավորի Աստծուն:

Ծառայության այդ ոգին մենք մեր մեջ զարգացնում ենք՝
հետևելով Աստծու խորհրդին. «Յուրաքանչյուր ոք ինչ շնորհ
ընդունել է, այն իրա՛ր մատակարարեք՝ որպես Աստծու զանա-
զան շնորհների բարի տնտեսներ» (Ա.Պետ. 4.10): «Որովհետև
այս ծառայությունը Աստծո հանդեպ շատերի գոհությունն է
շատացնում» (Բ.Կորնթ. 9.12): Ուրիշներին ծառայելը Հիսուսի
առաքելության կարևոր մասերից է: Երբ նա բուժեց հիվանդնե-
րին ու կերակրեց քաղցածներին, շատերին ցույց տվեց Աստծո
բարությունն ու սերը: Հոգալով մեր համայնքների մասին՝ մենք
հետևում ենք իր օրինակին: Աստծո իմաստնությունը հիշեց-
նում է, որ երբ մենք Աստծո սերը ցույց ենք տալիս մեր գործե-
րով, «փառավորում ենք Աստծուն» (Հմ.13): Ծառայությունը
ինքնագոհացում չէ, այլ ուրիշներին Աստծո մեծ սերը և այն
հրաշալի միջոցները ցույց տալն է, որոնք Նա գործում է իր
անունով կանչվածների միջոցով:

Աղոթք - Երկնավոր Հայր, ուզում եմ փոփոխություն անել ու-
րիշների կյանքում: Խնդրում եմ՝ ինձ տու՛ր ծառայելու սիրտ:
Թող դա լինի գովաբանության ու երախտագիտության արարք
Քո հանդեպ: Ամեն:

**Ուրիշներին ծառայելը Տիրոջ դասվերն է: Մեր ունեցածն օգսա-
գործենք Աստծոն փառք բերելու համար:**

Արդ, դուք այսպե՛ս աղոթեք. «Յայր մեր...» (Մատթ. 6.9)

ՄԵՐ ՀԱՅՐԸ - ՀԱՅՐ ՄԵՐ

Ես ամեն առավոտ արտասանում եմ Տերունական աղոթքը, ավելին՝ նոր օրը անարժեք է դառնում, քանի դեռ իմ անձը չեմ հիմնավորել այդ բառերի մեջ:

Այդպիսի մի օր, երբ ընդամենը առաջին բառերն էի ասել՝ Հայր մեր, հեռախոսս զանգեց: Ես ցնցվեցի, որովհետև առավոտյան Ժ. 5.անց 40 էր, և զանգողը հայրս էր: Զանգը շուտ էլ լռեց: Կռահեցի, որ նա սխալմամբ էր զանգել: Բայց արդյո՞ք այդ զուգադիպությունը պատահական էր: Գուցե: Բայց ես հավատում եմ, որ մեր ապրած աշխարհը ողողված է Աստծո ողորմությունամբ: Այդ օրը ինձ անհրաժեշտ էր մեր Երկնավոր Հոր ներկայություն հավաստիացումը:

Մի պահ մտածի՛ր այդ մասին: Հիսուսը իր աշակերտներին սովորեցրած աղոթքի բոլոր տարբերակներից որպես ելակետ ընտրեց այդ երկու բառը՝ «Հայր մեր» (Մատթ. 6.9): Պատահական էր: Ոչ: Հիսուսի խոսքերն ու բառերի ընտրությունը միշտ մտածված են: Մենք բոլորս տարբեր հարաբերություններ ունենք մեր երկրային հայրերի հետ, ոմանք լավ. ոմանք մի քիչ պակաս: Այսուամենայնիվ, մեր աղոթքի ձևը լինելու է ոչ թե «Իմ հայր» կամ «Քո հայր», այլ մեր «Հայրը» կամ «Հայր մեր»: Նա, որ մեզ տեսնում է, լսում և նախքան մեր խնդրելը ինքը գիտի, թե ինչի կարիք ունենք (Հմ.8):

Ի՛նչ հիանալի հավաստիք, հատկապես այն օրերին, երբ մեզ մոռացված, լքված, միայնակ կամ անարժան զգանք: Հիշի՛ր, որ անկախ մեր գտնվելու վայրից ու օրվա ժամից՝ մեր Երկնային Հայրը միշտ մոտ է մեզ:

Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ խոստացել ես ինձ լսել անկախ իմ գտնվելու վայրից: Ամեն:

Տերունական աղոթքը դարձու՛ր իր կյանքի մի մասը և տե՛ս, թե ինչ զգացումներ է արթնացնում այն իր մեջ:

Տե՛ր, դու ինձ քննեցիր և ճանաչեցիր: (Սաղմ. 139.1)

ԵՎ ԳԻՏԻ

Լիան պատրաստվում էր հիվանդապահուհի աշխատել Թայվանում: Այդպիսով կկարողանար իր ընտանիքի կարիքներն ավելի լավ ապահովել, քան Մանիլայում աշխատելով, որտեղ հնարավորությունները սահմանափակ էին: Մեկնելու նախորդ գիշերը նա ցուցումներ էր տալիս քրոջը, որը խնամելու էր իր հինգ տարեկան դստերը: Լիան բացատրում էր. «Նա իրեն անհրաժեշտ վիտամինները կստանա, եթե ամեն օր տաս մեկ գդալ գետնանուշի յուղ: Եվ հիշիր, որ նա ամաչկոտ է: Նաև վախենում է մութից»:

Հաջորդ օրը, ինքնաթիռի պատուհանից նայելով, Լիան աղոթեց. «Ես չեմ կարող նրա հետ լինել, բայց Դու կարող ես, Տե՛ր»:

Մենք ճանաչում ենք մեր սիրելիներին, նրանց մասին գիտենք շատ մանրամասներ, որովհետև նրանք մեզ համար թանկ են: Երբ տարբեր պատճառներով չենք կարող նրանց հետ լինել, անհանգստանում ենք, քանի որ մեզ նման լավ նրանց ոչ ոք չի ճանաչում, հետևաբար նրանք կարող են խոցելի լինել:

139-րդ սաղմոսում Դավիթը հիշեցնում է, որ Ասված մեզ բուրրից լավ է ճանաչում: Նույն կերպ էլ նա ճանաչում է մեր սիրելիներին (Հմ.1-4): Նա նրանց ստեղծողն է (Հմ. 13-15), այնպես, որ Նա հասկանում է և գիտի նրանց կարիքները, գիտի, թե ինչ է պատահելու նրանց կյանքում ամեն օր (Հմ.16), նրանց հետ է և երբեք չի լքում (Հմ. 5, 7-10):

Երբ անհանգիստ ենք ուրիշների համար, վստահենք Աստծուն, քանի որ Նա լավ է ճանաչում ու սիրում նրանց:

Աղոթք - Երկնավոր Զայր, թեև չեմ կարող միշտ լինել իմ սիրելիների հետ, նրանց համձնում եմ Քո խնամքին՝ հիշելով, որ Դու նրանց ամենալավն ես ճանաչում ու ամենից ավելի ես սիրում: Ամեն:

Մեր սիրելիներին վստահե՛նք Ասծուն, որովհետև Նա հոգում ու ղառողանում է նրանց:

Ինչպես ստուտուն է կերակրում իր երեխաներին, այդպես էլ մենք ձեզ վերաբերվեցինք... (Ա. Թես.2.7-8)

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՆ ՄԱՍ

Խուանիտան իր եղբոր որդուն պատմում էր, թե ինչպես է անցել իրենց մանկությունը տնտեսական մեծ ճգնաժամի տարիներին: Նրանց աղքատ ընտանիքը միայն խնձոր էր ուտում, մեկ էլ այն, ինչը հայրը ճարում էր երբեմն: Հիշում էր, որ ամեն անգամ, երբ նա սկյուռ էր բերում տուն, մայրը, բաժանելով ճաշը՝ իրեն էր վերցնում սկյուռի գլուխը՝ ասելով, թե դա լավագույն կտորն է: Տարիներ անց, երբ Խուանիտան իմացավ, որ սկյուռի գլխի վրա առհասարակ միս չկա, հասկացավ, որ մայրն այդպես է վարվել, որ իրենց ավելի շատ հասնի և իր մասին չմտահոգվեն:

Մայրերի տոնի նախօրյակին յուրաքանչյուրս կարող ենք մեր մոր նվիրվածության ու անձնազոհության մասին պատմություններ հիշել: Շնորհակալություն հայտնենք Աստծուն նրանց համար և ձգտենք նրանց նման ավելի շատ սիրել:

Պողոսը թեսաղոնիկեցիներին սիրում էր այնպես, «ինչպես ստնտուն է կերակրում իր երեխաներին» (Ա. Թես. 2.7): «Հաճեցինք ոչ միայն Աստծո Ավետարանը ձեզ տալ, այլև մեր իսկ կյանքը, որովհետև մեր սիրելիները եղաք» (Հմ.2.8): Նա զօրուգիչներ քարոզում էր Աստծո Ավետարանը, «որպեսզի ոչ մեկի վրա ծանրություն չլինի» (Հմ.9): Ծիշտ մոր նման:

Քչերը կարող են մրցակցել մայրական սիրո հետ, և Պողոսը համեստորեն ասում է, որ իր ջանքերը «գուր չեղան» (Հմ.1): Մենք չենք կարող վերահսկել, թե ինչպես են ուրիշները արձագանքում մեր արած գործերին, բայց մենք կարող ենք ընտրել պահեր զոհաբերության եղանակով նրանց ծառայելու համար: Ու դրա համար մեր մայրն ու երկնավոր Հայրը հպարտ կլինեն:

Աղոթք - Հայր, ոչ մեկը ինձ քեզանից ավելի չի կարող սիրել: Ամեն:

Մեր Երկնավոր Հայրը մեզ սիրում է անձնազոհաբար, ուստի մենք էլ նույն սիրով միսի սիրենք մեզ քրջադասողներին:

Մեծ են Տիրոջ գործերը, ցանկալի են բոլոր նրանց համար, ովքեր սիրում են դրանք: (Սաղմ. 111.2)

ՈՐՔԱՆ ՄԵԾ Է ՄԵՐ ԱՍՏՎԱԾԸ

Տարիներ շարունակ մարդկանց ինքնությունը ճշտելու համար օգտագործվել են մատնահետքերը կամ աչքի ծիածա- նաթաղանթը, եթե ոսպնյակները փոխած չեն: Բայց պարզվում է՝ դրանք էլ հնարավոր է կեղծել: Եվ ուրեմն, ի՞նչը կարող է դառնալ մարդու ինքնությունը ճշտող վստահելի գործոն: Գիտ- նականները պարզել են, որ մարդու արյան անոթների ձևերը ևս անկրկնելի են, և գործնականում դրանք անհնար է կեղծել: Մարդու «երակների քարտեզը» այն եզակի միջոցն է, որով մենք տարբերվում ենք աշխարհի միլիոնավոր մարդկանցից:

Այս բոլոր հայտնագործությունները, մարդ արարածի բարդ կազմվածքը պետք է որ զարմանք ու երկրպագության զգացում առաջացնեն մեզ ստեղծող Արարչի հանդեպ: Դավիթը հիշեց- նում է, որ «մենք ահավոր ու զարմանալի կերպով ենք ստեղծ- ված» (Սաղմ.139.14): Իսկ Սաղմոս 111-ի 2-ն ասում է.«Մեծ են Տիրոջ գործերը, ցանկալի են բոլոր նրանց համար, ովքեր սի- րում են դրանք»:

Նույնիսկ մեր ուշադրությունից ավելիին է արժանի Ինքը՝ Արարիչը: Մեր գործերն ու հաջողությունները տոնախմբելիս անպայման պետք է հիշենք Իրեն: Նրա գործերը մեծ են, բայց Ինքը ավելի մեծ է, որ սաղմոսերգուին այսպիսի աղոթքի է դը- դում.«Դու մեծ ես և հրաշքներ ես գործում, միայն դու ես Աստ- ված» (86.10): Աստծո գործերին նայելով՝ թող որ միշտ զար- մանանք Նրա մեծությունը:

Աղոթք - Հայր, մտածելով ստեղծագործելու մասին՝ երբեմն կարող եմ շեղվել՝ առանց նկատի առնելու Քեզ, որ ստեղծել ես ամբողջ տիեզերքը: Ամեն:

Ասծո սխանչելի ստեղծագործությանը նայելով՝ հիանում եմ: Հենց այսօր ժամանակ գտնեմ փառաբանելու Նրան Իր արած բոլոր գործերի համար:

Դուք էլ նրանով լցվեցիք: (Կող. 2.10)

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՊԱՅՔԱՐԸ

Մեր տան մոտի եղջերուներն ու ես տարբեր վերաբերմունք ունենք արևածաղիկների հանդեպ: Ամեն զարնան ես դրանք տնկում եմ, խնամում և անհամբեր սպասում, որ ծաղիկն ու բերք տան: Իսկ եղջերուները պարզապես սիրում են ծամել ցողուններն ու տերևները: Սա դարձել է ամենամյա ամառային պայքարի մի ոլորտ, երբ ես փորձում եմ արևածաղիկները տեսնել հասունացած, քանի դեռ իմ չորքոտանի հարևանները չեն ոչնչացրել դրանք: Երբեմն կարողանում եմ հաղթել, երբեմն՝ ոչ:

Երբ դիտարկում ենք մեր կյանքը, տեսնում ենք, որ որպես Հիսուսին հավատացողներ՝ մեր կյանքում անընդհատ նման պայքար ենք մղում մեր թշնամու՝ սատանայի դեմ: Մեր նպատակը շարունակական աճն է, որը տանում է դեպի հոգևոր հասունություն, օգնում մեր կյանքը նվիրել Աստծո փառքին: Իսկ սատանան ուզում է կուլ տալ մեր հավատքը և հետ պահել մեզ հոգևոր աճից: Սակայն Տեր Հիսուսը «ամեն իշխանություն և պետություն գլուխն է» (Կող. 2.10), ինչը նշանակում է, որ Նա մեզ կհասցնի ամբողջականության, կդարձնի լիարժեք:

Խաչի վրա Քրիստոսի հաղթանակը թույլ է տալիս, որ մենք երևելի լինենք աշխարհում, ինչպես այս գեղեցիկ արևածաղիկները: Երբ Հիսուսը «ջնջեց մեր դեմ դատավճռի ձեռագիրը և այն մեջտեղից վերացրեց ու խաչափայտին գամեց» (Հմ.14), Նա ոչնչացրեց մեզ վերահսկող ուժերը: Նրա մեջ է թշնամու հոգևոր հարձակումներին դիմակայելու և իսկական գեղեցիկ կյանք ցուցադրելու մեր զորությունը (Հմ.10):

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, գեղեցկացրու՛ կյանքս Քեզ համար: Օգնի՛ր, որ Քո ուժով դիմադրեմ թշնամուն: Շնորհակալ եմ Հիսուսի մահվան ու հարության համար: Ամեն:

Երբ թե՛նամին փորձի խոցել մե՛ր հոգևոր աճը, դիմեն՛ք Աստու՛ն՝ ուժ և փառություն ստանալու համար:

Երանի՜ թե խոսքերս գրվեին, քարի վրա հավիտյան փորագրվեին:
(Յոք. 19. 23-24)

ՓՈՐԱԳՐՎԱԾ ՎԻՇՏ

Գլխուղեղի հազվագյուտ ու անբուժելի հիվանդության ախտորոշումից հետո Բերոլայնը գտավ նոր հույս ու նպատակ՝ լուսանկարչության կամավոր ծառայություն մատուցելով հիվանդ երեխաներին ու նրանց ընտանիքներին: Իր ծառայության շնորհիվ ընտանիքները կարող էին ունենալ իրենց երեխաների հետ անցկացրած թե վշտի, և թե ուրախության անմոռանալի պահերը, որոնք, թվում է, թե այդ հուսահատ մարդկանց մոտ չեն լինում: Նա նկատեց, որ ամենաբարդ պահերին այդ ընտանիքներն ընտրում էին սերը:

Վշտի ճշմարտությունը շատ բարդ ու հզոր բան է. ներկայացնել թե՛ կործանարար իրականությունը, և թե՛ այդ պայմաններում գեղեցկություն ու հույս ձեռք բերելու ուղիները:

Հոբի գրքի մեծ մասը նման է վշտի մի լուսանկարի, որը պատկերում է Հոբի անցած կործանարար կորուստների ճանապարհը (1.18-19): Հոբի հետ մի քանի օր նստելով՝ ընկերները հոգնեցին նրա վշտից և փորձեցին սփոփել կամ բացատրել այն որպես Աստծո ղատաստան: Բայց Հոբը պնդում էր, որ իր արումները կարևոր են, և ուզում էր, որ դրանք «քարի վրա հավիտյան փորագրվեին» (19.24):

Հոբի գրքի միջոցով դա «փորագրվեց» այնպես, որ մեր վշտի մեջ մարմնավորվում է կենդանի Աստվածը (Հմ.26-27), որը մեզ հանդիպում է մեր ցավի մեջ և տանում մեզ դեպի հարուստ կյանք:

Աղոթք - Կարեկի՛ց Յայր, օգնիր, որ ցավի ու վշտի մեջ եղողներին կարողանամ առաջարկել Քո տված հույսը: Ամեն:

Վիճճն ու նեղությունն անխուսափելի են, բայց շատ կարևոր է վճճի մեջ անգամ անսդասելի շնորհի ու գեղեցկություն Տեսնել:

Գոհություն մատուցեմ Աստծուն, որ ամեն ժամ...իր գիտության բույրը ամեն տեղ տարածում է մեզանով: (Բ.Կորնթ. 2.14)

ՄԻՇՏ ԿԱՐԵԼԻ Է ԲԱՐԻ ԼՈՒՐԸ ՀԱՅՏՆԵԼ

Հիսուսին հավատալուց հետո Ավետարանի ճշմարտությունը հայտնեցի մորս: Նա, ինչպես և սպասում էի, Հիսուսին վստահելու փոխարեն՝ մեկ տարի չխոսեց ինձ հետ: Աղոթում էի նրա համար և փորձում ամեն կերպ վերականգնել մեր հարաբերությունները: Սուրբ Հոգին մխիթարում էր ինձ, և ես շարունակում էի ամբողջ սրտով աղոթել: Երբ վերջապես պատասխանեց զանգիս, որոշեցի առաջին իսկ հնարավորության դեպքում դարձյալ խոսել Աստծո ճշմարտությունից: Մեր հաշտվելուց ամիսներ անց մայրս ասաց, որ ես փոխվել եմ: Մեկ տարի անց նա ինքն ընդունեց Հիսուսին՝ որպես իր Փրկիչ, և մեր հարաբերությունները խորացան:

Հիսուսին հավատացողները հնարավորություն ունեն ստանալու մարդկության ամենամեծ պարգևը՝ Քրիստոսին: Պողոսն ասում է, որ «իր գիտության բույրը ամեն տեղ տարածում է մեզանով» (Բ. Կորնթ. 2.14): Նա ներկայացնում է այն մարդկանց, ովքեր Ավետարանի ճշմարտությունը հայտնում են ուրիշներին՝ դառնալով «Քրիստոսի անուշ բուրմունքը» նրանց համար, ովքեր հավատում են և ընդունում, որ «մահվան հոտ է գալիս Հիսուսին մերժողներից» (Հմ.15-16):

Քրիստոսին որպես մեր Տեր ընդունելուց հետո հնարավորություն կունենանք օգտագործելու մեր ունեցած սահմանափակ ժամանակը՝ երկրի վրա տարածելու Նրա կյանք փոխող ճշմարտությունը, միաժամանակ սիրելով ուրիշներին: Նույնիսկ մեր ամենադժվար ու միայնակ պահերին մենք կարող ենք վստահել, որ Նա մեզ կտա անհրաժեշտը: Անկախ ամեն ինչից՝ արժե Աստծո լուրի մասին հայտնել ուրիշներին:

Աղոթք - Հայր, օգնիր, որ կարողանամ բարի լուրը հայտնել այնտեղ, ուր ուղարկում ես ինձ:

Եթե Ավետարանի մասին խոսելիս՝ մեկը ժխտական դիրք բռնի, մի՛ հուսահատվիր, այլ ցարունակի՛ր աղոթել ու խնդրել, որ Ասված բանա նրա սիրք:

Երանի՛ ուշադիր լինեիր իմ հրամաններին: (Ես. 48.18)

ՕՐՆՈՒԹՅԱՄ ՔԱՅԼԵԼ

1 799-ին տասներկու տարեկան Քոնրադ Ռիտտը Հյուսիսային Կարոլինայի իրենց ազարակում մի շողշողուն քար գտավ: Նա գտածոն ցույց տվեց հորը, որը աղքատ գաղթական ազարակապան էր: Հայրը, չհասկանալով քարի արժեքը, այն օգտագործեց որպես դռնակալ: Եվ տարիներ շարունակ ընտանիքի անդամներն անցնում էին դրա մոտով:

Ի վերջո Քոնրադի քարը, որը ութ կիլոգրամանոց ոսկու կտոր էր, գրավեց տեղացի մի ոսկերչի ուշադրությունը: Շուտով Ռիտտ ընտանիքը հարստացավ, և նրանց կալվածքը դարձավ ԱՄՆ առաջին ոսկի արտադրող վայրը:

Երբեմն մենք անցնում ենք օրհնության կողքով՝ մտածելով մեր անձնական ծրագրերի և ուղիների մասին: Իսրայելի ժողովուրդը Աստծուն չհնազանդվելու համար Բաբելոն աքսորվելուց հետո դարձյալ ազատություն ստացավ: Բայց Աստված նաև հիշեցրեց, թե ինչ են նրանք բաց թողել՝ ասելով.«Ես եմ Տերը՝ քո Աստվածը, որ քեզ ուսուցանում եմ, ինչ որ օգտակար է, որ քեզ առաջնորդում եմ այն ճանապարհով, որ դու պետք է գնաս: Երանի՛ ուշադիր լինեիր իմ հրամաններին. այն ժամանակ քո խաղաղությունը գետի նման կլիներ, և քո արդարությունը՝ ձուլի ալիքների նման»: Աստված հորդորեց, որ հետևեն իրեն. «Դուրս եկեք Բաբելոնից, ցնծալի ձայնով հայտարարե՛ք, հռչակե՛ք այս» (Ես. 48.17-18,20):

Բաբելոնից հեռանալը նշանակում էր թողնել մեղավոր ճանապարհները և «տուն գնալ»՝ Աստծո մոտ, որն ուզում է մեզ բարիք անել, եթե միայն մենք հնազանդվենք ու հետևենք իրեն:

Աղոթք - Սիրո՛ղ Հայր, չկա Քեզ նման մեկ ուրիշը: Օգնի՛ր ինձ, որ պատրաստ լինեմ քայլելու Քեզ հետ ու հայտնաբերելու այն օրհնությունները, որ միայն Դու ես տալիս: Ամեն:

Տիրոջ հետ ֆայլի՛ր ու տե՛ս նրա սված օրհնությունները և աշխատի՛ր ուրիշներին առաջնորդել դեղի Աստծո սերը:

Բայց ես իմ կյանքը ոչ մի բանով այդքան արժեքավոր չեմ համարում, որքան այն, որ ուրախությամբ կատարեմ իմ ընթացքը և ծառայությունը, որ Տեր Դիսուսից ստանձնել եմ Աստծո շնորհի Ավետարանը վկայելու համար»: (Գործք. 20.24)

ՈՒԺԵՂ ԱՎԱՐՏ

Երբ հասնում եմ իմ քառասունըրուպեանոց մարզանքի վերջին վայրկյաններին, գրեթե վստահ կարող եմ ասել, թե ինչպես է մարգիչս բացականչելու. «Ուժե՛ղ ավարտիր»: Բոլոր մարգիչներն են այդպես ասում, որովհետև գիտեն, որ մարդու մարմինը որոշ ժամանակ շարժման մեջ լինելուց հետո հակված է թուլանալու:

Նույնն է նաև Հիսուսի հետ ճանապարհորդելիս: Պողոսը եփեսացի երեցներին ասաց, որ ինքը կուժեղանա, երբ զնա Երուսաղեմ, որտեղ, անշուշտ ավելի շատ է հալածվելու, որպես Քրիստոսի առաքյալ (Գործք 20. 17-24): Բայց նա չընկրկեց, որովհետև ուներ սկսածն ավարտելու առաքելություն, պետք է աներ այն, ինչի համար Աստված իրեն կանչել էր: Իսկ դա «Աստծո շնորհի Ավետարանը վկայելն» էր (Հմ.24): Եվ Պողոսն ուզում էր ուժեղ ավարտել: Նույնիսկ եթե որոշ «կապանքներ ու նեղություններ լինեին» (Հմ.23), նա պիտի շարունակեր վազել դեպի վերջնակետ՝ իր ճանապարհին մնալով կենտրոնացած ու հաստատակամ:

Անկախ նրանից՝ մենք մարզում ենք մեր ֆիզիկական կարողությունները, թե խոսքի ու գործերի միջոցով մշակում ենք Աստծո տված հնարավորությունները, մենք նույնպես կարող ենք խրախուսվել «ուժեղ ավարտելու» մասին հիշեցմամբ, «չձանձրանալ» (Փաղ. 6.9): Մի՛ հանձնվիր, Աստված տրամադրում է այն, ինչ անհրաժեշտ է ուժեղ ավարտելու համար:

Աղոթք - Հայր, օգնիր, որ կարողանամ շարունակել ճանապարհս: Ուզում եմ ավարտը ուժեղ լինի, որպեսզի իմ կյանքի ու անցած ճանապարհի համար Դու փառավորվես: Ամեն:

Ի՞նչ է տե՛սք անել, երբ հոգնում եմք և ուզում եմք հանձնվել:
Ո՞րն է ուժեղ ավարտելու առաքելությունը:

Եվ պատռե՛ք ձեր սրտերը և ոչ թե ձեր համդերձները: Եվ ե՛տ դարձե՛ք դեպի Տերը՝ ձեր Աստվածը, քանզի ողորմած ու գթառատ է: (Դովել 2.13)

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԾԱՆ

Ձեյնը խորասուզվել էր մտքերի մեջ, որովհետև զգում էր, որ որդին ստում է՝ ասելով, թե ինքը չի արել դա: Նա աղոթեց՝ խնդրելով Աստծո օգնությունը Սայմոնին, մինչ ինքը կրկին կհարցնե: Շուտով նա դեռահաս որդու ձեռքն զգաց իր ուսին և լսեց նրա ներողությունն ու ապաշխարանքի խոսքը:

Հին Կտակարանի Հովել մարգարեի գրքում Աստված Իր ժողովրդին իրենց մեղքերի համար ճշմարիտ ապաշխարություն կանչեց և ամբողջ սրտով ողջունեց նրանց վերադարձն Իր մոտ (2.12): Աստված ոչ թե զղջումի արտաքին դրսևորումներ էր սպասում, այլ իրենց կոպիտ ու կարծր վերաբերմունքի մեղմացում. «Պատռե՛ք ձեր սրտերը և ոչ թե ձեր հանդերձները»: Հովելը խորայելցիներին հիշեցրեց, թե Աստված «ողորմած ու գթառատ է, երկայնամիտ, բազումողորմ ու պատրաստակամ ներելու» (Հմ.13):

Դժվար է սխալը խոստովանել, քանի որ մեր հպարտությունը թույլ չի տալիս ընդունել մեր մեղքը: Հնարավոր է նույնիսկ, որ այն «մի փոքրիկ, անմեղ սուտ» համարենք, բայց երբ կհանջ դենք Աստծո մեղմ, բայց ապաշխարություն կոչող հիշեցումը, կտեսնենք, որ Նա ներում է մեզ ու մաքրում բոլոր մեղքերից (Ա.Հովհ. 1.9): Մենք կարող ենք ազատվել մեղքից ու ամոթից՝ իմանալով, որ ներված ենք:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, Դու խաչի վրա մեռար, որպեսզի ես կարողանամ ներդաշնակ ապրել Քեզ և Դոր հետ: Թող որ ընդունեմ Քո սիրո ընծան, երբ խոստովանեմ ճշմարիտ կերպով: Ամեն:

Չաճախ դու էլ ես «անմեղ սեր» ասում: Գիտակցի՛ր արարիք ու հանդաված աղաժխարի՛ր:

Նա է ամենից առաջ, ու ամեն ինչ նրանով է իր տեղում: (Կող. 1.17)

ՆՄԱՆԱԿՈՒՄ ՏԻԵՁԵՐՔԻՆ

1 980-ականների սկզբին նշանավոր մի աստղագետ, որ չէր հավատում Աստծուն, գրել է.«Փաստերի ողջամիտ մեկնաբանությունը ցույց է տալիս, որ գերիմացությունը բնագիտության, քիմիայի ու կենսաբանության նմանակումն է»: Այս գիտնականն ընդունում էր, որ տիեզերքում եղած ամեն բան ինչ-որ մեկը նախագծել է, բայց չէր ընդունում, որ դա Աստված է: «Բնություն մեջ չկան կույր ուժեր, որոնց մասին արժե խոսել», - գրել էր նա:

Երեք հազար տարի առաջ մեկ այլ իմաստուն, նայելով երկինք, եզրակացրել է. «Երբ տեսնում եմ քո երկինքը, քո մասների գործը՝ լուսինն ու աստղերը, որ դու հաստատեցիր, էլ ի՞նչ է մարդը, որ դու հիշում ես նրան, և մարդու որդին, որ խնամք ես տանում նրա նկատմամբ» (Սաղմ. 8.3-4):

Աստված իրապես հոգում է մեր մասին: Տիեզերքը պատմում է իմաստուն Ծրագրողի պատմությունը.«Գերիմացողը» ստեղծեց մեր մտքերն ու մեզ այստեղ դրեց, որպեսզի մտածենք իր արած գործի մասին: Հիսուսի ու Նրա ստեղծագործության միջոցով կարելի է ճանաչել Աստծուն: Պողոսը գրել է. «Նա աներևույթ Աստծու պատկերն է՝ բոլոր արարածներից առաջ ծնված, որովհետև նրանով ստեղծվեց ամեն բան՝ ինչ երկնքում է ու երկրի վրա» (Կող. 1.15-16):

Տիեզերքը իսկապես «նմանակված է»: Իմաստուն Ծրագրողի ինքնությունը այնտեղ է, որ բացահայտի նրանց, ովքեր ցանկանում են փնտրել:

Աղոթք - Երկնավոր Դայր, շնորհակալ եմ, որ կարելի է քեզ տեսնել ստեղծագործությանդ մեջ: Աղոթում եմ նրանց համար, ովքեր չեն տեսնում Քեզ: Խնդրում եմ՝ իրենց ձգի՛ր դեպի Քեզ: Ամեն:

Ասծուն Տե՛ս կյանքի բոլոր մանրամասնությունների մեջ և Ասծո գոյության րո հավասի մասին խոսի՛ր ուրիշների հետ:

Մեր պատերազմն... այս խավար աշխարհի տիրակալների դեմ է: (Եփ. 6.12)

ԿԱՏԱՂԻ ՊԱՅՔԱՐ

1 896 թ. կենսաբան, գյուտարար ու բնապահպան Կարլ Աքելիին Եթովպիայի հեռավոր մի վայրում հայտնվեց ընծառույծի ճիրաններում: Հետագայում նա հիշում է, թե ինչպես էր գիշատիչը հարձակվում իր վրա և փորձում ժանիքներով բռնել իր կոկորդը: Մարդ ու գազան գլորվում էին ավազների մեջ, նրանց մեջ ընթանում էր կյանքի ու մահվան կատաղի պայքար: Աքելին արդեն թուլացել էր, սակայն վերջին անգամ հավաքելով ամբողջ ուժը՝ կարողացավ ձեռքով խեղդել գազանին: Պողոս առաքյալը բացատրում է, որ մեզանից յուրաքանչյուրը, որ հավատում է Տեր Հիսուսին, անխուսափելիորեն հանդիպում է կատաղի պայքարի: Դրանք մեր կյանքի այն պահերն են, երբ մենք թուլանում ենք ու փորձում հանձնվել: Բայց դրա փոխարեն հարկավոր է «Աստծո սպառազինությա՛մբ զգեստավորվել, որպեսզի կարողանանք սատանայի հնարներին դիմադրել և հաստատուն կանգնել» (Եփ. 6.11,14): Պողոսը սովորեցնում է վախենալու ու թուլանալու փոխարեն՝ հավատքով առաջ ընթանալ և հիշել, որ ապավինելու ենք ոչ թե մեր ուժին ու քաջությանը, այլ Աստծուն. «Զորացե՛ք Տիրոջով ու նրա զորության ուժով» (Հմ.10): Մեր դիմակայած մարտահրավերների ժամանակ նա ընդամենը մի աղոթք է հեռու մեզանից (Հմ.18):

Այո՛, մեզ շատ պայքարներ են սպասվում կյանքում, որոնցից մեր ուժով ու հնարամտությամբ չենք կարողանալու խուսափել: Բայց Աստված ավելի հզոր է, քան մեզ հանդիպած որևէ թշնամի կամ չարիք:

Աղոթք - Հայր, պայքարն ու չարիքը իրական են: Չգիտեմ՝ ինչ են անելու, բայց վստահում եմ Քեզ ու Քո ուժին և հավատում, որ ինձ հետ ես: Ամեն:

Մարտահրավերներ մի՞տ են լինում, բայց Աստված մեզ կոչում է ղայֆաբել՝ հավասալով Իր ուժին:

Ինձ թագավորի մոտ տար, և ես թագավորին կասեմ մեկնությունը: (Դան. 2.24)

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՔԱՋՈՒԹՅՈՒՆ

1 478 թ. Իտալիայի Ֆլորենցիա քաղաքի կառավարիչ Լորենցո դե Մեդիչին վերահաս վտանգից փրկվեց շատ արտասովոր ձևով: Նեապոլի թագավոր Ֆերանտե Առաջինը թշնամացել էր Լորենցոյի հետ, սակայն վերջինի խիզախ քայլը վճռորոշ եղավ: Լորենցոն միայնակ ու անզեն զնաց թագավորի մոտ: Այս քաջությունը, զուգորդված նրա անձնական հմայքի հետ, հիացրեց Ֆերանտեին, և նրանց հակամարտությունը վերջ դրվեց:

Դանիելը նույնպես օգնեց թագավորներից մեկին, որ նրա սրտում փոփոխություն կատարվի: Բաբելոնում չկար մեկը, որ կարողանար մեկնաբանել Նաբուգոդոնոսոր թագավորի անհասկանալի երազը: Դա այնքան զայրացրեց արքային, որ նա որոշեց մահապատժի ենթարկել իր բոլոր խորհրդականներին, որոնց մեջ էին նաև Դանիելն ու իր ընկերները: Սակայն Դանիելը այցելություն խնդրեց արքայից (Դան. 2.24):

Կանգնելով Նաբուգոդոնոսորի առջև՝ Դանիելն ասաց, որ Աստված արքային իմացրել է, թե ինչ է լինելու հետագայում (Հմ.28): Երբ մարգարեն նկարագրեց ու մեկնաբանեց երազի բոլոր մանրամասները, Նաբուգոդոնոսորը պատվեց «աստվածների Աստծոն և թագավորների տիրոջը» (Հմ.47): Դանիելի այդ անսովոր քաջությունը, որ ծնվել էր առ Աստված ունեցած իր հավատքից, օգնեց իրեն, ընկերներին ու մյուս բոլոր խորհրդականներին խուսափել մահից: Մեր կյանքում էլ լինում են պահեր, երբ կարևոր տեղեկություն հայտնելու համար անհրաժեշտ են լինում քաջությունն ու համարձակությունը: Թող Աստված առաջնորդի մեր խոսքերը և մեզ տա իմաստնություն, որ իմանանք, թե ինչ պետք է ասել և ինչպես լավ ասել:

Աղոթք - Տե՛ր, երբ հանդիպում եմ լարված իրավիճակների, լցրու՛ ինձ Քո իմաստնությամբ ու զորությամբ: Ամեն:

Վճանգների ու սարսափի մեջ հայճնվելու դեղիում կարելի է արիաբար գործել Նրա անունով:

Յիսուսը նրանց ասաց.«Ես եմ կյանքի հացը, դեպի ինձ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը երբեք չի ծարավի»: (Յովհ. 6.35)

ՏԵՆՉԱԼ ՆՐԱՆ

Պատահում է այնպես, որ ասում ենք.«Սա գետնախնձորի վերջին կտորն է, որ ուտում եմ», բայց հինգ ընդհանուր անց էլի ենք ուզում: Մայքլ Մուսսը այդ հարցին պատասխանել է «Աղ, շաքար, յուղ» խորագրով իր գրքում: Նա նկարագրում է, թե ինչպես են սննդամթերք արտադրող ամերիկյան խոշոր ընկերությունները «օգնում» մարդկանց, որ ունենան այդ ոչ օգտակար մթերքներն ուտելու ցանկություն: Հայտնի ընկերություններից մեկը, օրինակ տարեկան 30 մլն դոլար է ծախսում վարձելու համար «ցանկության խորհրդատուներ», որպեսզի նրանք կարողանան կառավարել ուտելիքի հանդեպ մեր ցանկությունը:

Ի տարբերություն այդ ընկերության՝ Հիսուսն օգնում է մեզ, որ փափագենք իսկական կերակրին՝ մեր հոգևոր սննդին, որը բավարարություն է բերում մեր հոգիներին: Նա ասում է.«Ես եմ կյանքի հացը, դեպի ինձ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը երբեք չի ծարավի» (Հովհ. 6. 35): Այս պնդումն անելով՝ Նա երկու կարևոր բան է հաղորդում. նախ հացը, որի մասին խոսվում է, անձ է, ոչ թե ապրանք (հմ. 32), և երկրորդ. երբ մարդիկ մեղքերի թողության համար վստահում են Տեր Հիսուսին, ուղղակիորեն հարաբերվում են Նրա հետ և կատարում իրենց հոգու յուրաքանչյուր ցանկություն: Այս հացը հավիտենական հոգևոր սնունդ է, որ տանում է դեպի բավարարվածություն ու կյանք: Երբ մենք վստահենք Տեր Հիսուսի՝ երկնքից եկած հացին, մենք կտենչանք Նրան, և Նա կգորացնի ու կփոխի մեր կյանքը:

Աղոթք - Յիսու՛ս, կյանքի հաց, թող ես տենչամ քեզ և գտնեմ այն ամենը, ինչ պետք է ինձ Քո կատարյալ մատակարարման մեջ: Ամեն:

Տարբեր ցանկություններ ենք ունենում, որոնք չեն կարող լրացնել մեր հոգու ամենախոր ցանկությունները: Եկե՛ք տենչանք Տեր Յիսուսին:

Եվ Տերն ասաց Մովսեսին. «Ահա ես երկնքից հաց պիտի տեղացնեմ ձեզ համար»:(Ելք 16.4)

ՈՒՏԵԼԻՔ ԵՐԿՆՔԻՑ

2 020թ. օգոստոսին Շվեյցարիայի Օլթեն քաղաքի բնակիչներն ապշեցին՝ տեսնելով, որ երկնքից շոկոլադե ձյուն է տեղում: Պարզվում է՝ շոկոլադե Ֆաբրիկայի օդափոխման համակարգի խափանման պատճառով շոկոլադե մասնիկները ցրվել էին օդի մեջ: Արդյունքում այդ քաղցրավենիքի փաթիլները ծածկել էին փողոցներն ու մեքենաները, և քաղաքում քաղցր բույր էր տարածվել:

Երկնքից «կախարդական ձևով» իջնող համեղ ուտելիքի մասին մտածելով՝ չեմ կարող չհիշել Աստծո նախատեսությունը Իսրայելի ժողովրդին, որը նկարագրված է Ելք-ում: Եգիպտոսից փախչելուց հետո նրանք դիմազրավեցին կարևոր մարտահրավերներ, հատկապես սննդի ու ջրի սակավություն: Եվ Աստված, հուզված մարդկանց ծանր վիճակից, խոստացավ. «երկնքից հաց տեղացնել» (Ել. 16.4): Հաջորդ առավոտյան անապատում բարակ փաթիլների մի շերտ հայտվեց: Այդ ամենօրյա մատակարարումը, որ հայտնի է որպես մանանա, շարունակվեց քառասուն տարի:

Մարդիկ սկսեցին հավատալ, որ Հիսուսին Աստված է ուղարկել, երբ Նա հրաշքով հաց տվեց մեծ բազմությունը (Հովհ. 6. 5-14): Բայց Նա սովորեցրեց, որ Ինքն է «կյանքի հացը» (Հմ.35), որ ուղարկվել է ապահովելու ոչ միայն ժամանակավոր սնունդ, այլև հավերժական կյանք (Հմ.51):

Հոգևոր սննդի կարիք ունեցողներին Հիսուսն առաջարկում է Աստծո հետ լինելու անվերջ կյանք: Հավատանք ու վստահենք, որ Նա եկավ գոհացնելու այդ ամենախոր ցանկությունները:

Աղոթք - Հիսուս, շնորհակալ եմ, որ ընտրեցիր գալ երկիր՝ Քո կյանքը տալու, որպեսզի կարողանամ հավերժ հարաբերվել Աստծո հետ: Ամեն:

Կյանք ունենալու և հոգևոր բավարարություն ստանալու համար Հիսուսի կարիքն ունենա՛:

Որովհետև իմ ու ձեր հոգուց հանգիստ պարգևեցին, ուրեմն ճանաչե՞ք այդպիսիներին: (Ա. Կորնթ. 16.18)

ԹԱՐՄԱՅԱԾ՝ ՄԱՅՄԸՆԻ ՏԱԼԸ

Սայմընի տուն այցելությունս անմոռաց էր: Քենիայի Նյա-հուրուրու քաղաքի աստղագարդ երկնքի ներքո քայլելով՝ մենք ընթերելու գնացինք նրա համեստ կացարան: Ոչ այնքան մաքուր հատակն ու լապտերի աղոտ լույսը ցույց էին տալիս Սայմընի սահմանափակ միջոցները: Ի՞նչ կար ճաշացանկում՝ չեմ հիշում: Բայց չեմ մոռանում տանտիրոջ ուրախությունը, որ իր հյուրերն էինք; Նրա ջերմ հյուրընկալությունը Հիսուսի նման էր՝ անշահախնդիր, հուզիչ ու թարմացնող:

Ա. Կորնթ. 16. 15-18-ում Պողոսը հիշում է Ստեփանոսի ընտանիքը, որը հայտնի էր խնամատարությունամբ: Նրանք «իրենց անձերը սրբերի ծառայությանն էին նվիրել» (Հմ.15): Նրանց ազդեցությունն այնպիսին էր, որ Պողոսը գրեց. «Իմ ու ձեր հոգուն հանգիստ պարգևեցին» (Հմ.18):

Երբ ուրիշների հետ բաժնեկցելու առիթ ենք ունենում, մենք իրավացիորեն ուշադրություն ենք դարձնում ուտելիքին, միջավայրին և այլ բաների, որոնք հարմար են այդ առիթներին: Սակայն երբեմն մոռանում ենք, որ դրանք թեև նշանակություն ունեն, բայց ամենակարևորը չեն: Մնունդը լիարժեք սնուցելու և խրախուսելու իր կարողությամբ սահմանափակ է: Իսկական թարմությունը Աստծուց է բխում, այն սրտի խնդիր է և հասնում է ուրիշների սրտերին ու շարունակում սնել ճաշի ավարտից երկար ժամանակ անց էլ:

Աղոթք - Հայր, ների՛ր ինձ այն ժամանակների համար, երբ ես, ուրիշներին հյուրընկալելով, ավելի շատ իմ մասին եմ մտածել, քան նրա, ում ուզել եմ ծառայել: Օգնի՛ր, որ կարողանամ քարմացնել ուրիշներին: Ամեն:

Չթարմանանք միայն ուրիշներին հյուրընկալելով, այլ մեր հերթին ծառայենք ուրիշներին և նման առիթները հոգևոր իմաստով իմաստալից դարձնենք:

Հոգու պտուղն այս է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատ, հեզություն, ժուժկալություն: (Գաղ. 5. 22-23)

ԾԱՌԸ ՊՏՈՒՂՆ Է ՎԱՃԱՌՈՒՄ

Տնկարանի մի սեփականատեր ձեռնարկեց դեղձենիների վաճառք: Եվ սկսեց ուսումնասիրել ամենայն մանրուք. արդյո՞ք ճիշտը տնկիները կաշվե տոպրակներով դեղեցիկ ցուցափեղկի մեջ դնելն է, հարկավո՞ր է ունենալ գունավոր ցուցանակ, որի վրա դեղձենիները պատկերված լինեն աճի տարբեր փուլերում: Վերջապես նա հասկացավ, որ լավագույն ուղին այդ ծառի հասուն պտուղը ցույց տալն է: Հարկավոր է հասուն պտուղը քաղել, կտրել ու բանալ, այնպես, որ հյուլթը հոսի և հրամցնել հաճախորդին: Երբ նրանք ճաշակեն պտուղը, կուզենան ծառը դնել:

Աստված Իր հետևորդների մեջ բացահայտում է հոգևոր պտուղների մի ամբողջ փաթեթ. «սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատ, հեզություն, ժուժկալություն» (Գաղ. 5.22-23): Երբ նրանք ցուցաբերեն նման պտուղներ, մյուսները նույնպես կցանկանան և հետևաբար կփնտրեն պտուղի աղբյուրը, որն այնքա՛ն գրավիչ է:

Պտուղը ներքին հարաբերությունների արտաքին արդյունքն է՝ Սուրբ Հոգու ազդեցությունը մեր կյանքում: Պտուղն այն հագուստն է, որ ուրիշներին կոչ է անում ճանաչել Աստծուն, որի ներկայացուցիչներն ենք մենք: Տերևների մեջ երևացող վառվռուուն դեղձերի պես Հոգու պտուղները ևս սովամահ աշխարհին հայտարարում են. «Ահա՛ կերակուր: Ահա՛ կյանք: Ե՛կ ու գտի՛ր հոգնությունից ու հուսահատությունից դուրս գալու միջոց: Ե՛կ ու հանդիպի՛ր Աստծուն»:

Աղոթք - Սուրբ Հոգի, ողջունում եմ Քեզ, որ շարունակես իմ կյանքում աճեցնել պտուղդ, որպեսզի ուրիշները տեսնեն Քեզ և ցանկանան ունենալ իրենց կյանքում: Ամեն:

Եթե հավատում եմ Հիսուսին, յե՛սf է ցույց տալիս Հոգու յո՞ղոսը մե՛ր կյանքում, որպեսզի ուրիշները ևս համակրեն դ՛րա աղբյուրի՛ն՝ Ասծուն:

Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով: (ԾՆՆ. 1.27)

ԽՈՐ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՂ

Իրաքցի գաղթական Ամինան ու ամերիկացի Զոզեֆը բարիկադի տարբեր կողմերում մասնակցում էին քաղաքական ցույցի: Մենք սովոր ենք տեսնել, որ ազգային ու քաղաքական տարբեր պատկանելության մարդիկ անպայման ատելություն են տածում միմյանց հանդեպ: Սակայն երբ ամբոխը, մոտենալով Զոզեֆին, փորձեց այրել նրա վերնաշապիկը, Ամինան պաշտպանեց նրան: Զոզեֆը լրագրողներին ասաց, որ իրենք անգամ ծանոթ չեն, և աղջկա պահվածքը վատ բան չհանդուժելու սովորական քայլ էր: Դրանից հետո քաղաքականությունից ավելի խոր մի բան միավորեց նրանց:

Մեր տարբերությունների պատճառով հաճախ ենք տարաձայնություններ ունենում միմյանց հետ, բայց ավելի շատ են մեզ կապող իրողությունները: Մեզ բոլորիս ստեղծել է Աստված, և մենք կապված ենք մեկ սիրելի մարդկային ընտանիքում: Անկախ մեր սեռից, հասարակական դիրքից, ազգային կամ քաղաքական համոզմունքից՝ Աստված մեզանից յուրաքանչյուրին ստեղծել է «իր պատկերով» (ԾՆ.1.27): Աստված արտացոլված է թե՛ իմ, և թե՛ քո մեջ: Ավելին, Նա մեզ ընդհանուր նպատակ է տվել՝ Իր աշխարհը «լցնել» ու «տիրել» իմաստնությամբ և հոգատարությամբ (Հմ. 28):

Եթե մոռանանք, թե ինչպես ենք կապված Աստծո հետ, վնաս կհասցնենք մեզ և ուրիշներին: Բայց երբ Նրա շնորհքով ու ճշմարտությամբ հավաքվենք, կմասնակցենք բարի ու բարգավաճող աշխարհ ստեղծելու Նրա ցանկությունը:

Աղոթք - Աստված, դատելով աշխարհի ներկա վիճակից՝ դժվար է հավատալ, որ Քո շնորհիվ յուրաքանչյուր մարդ իր ներսից ինչ-որ բան բաժանում է այլոց: Օգնի՛ր, որ տեսնեն այդ ճշմարտությունը: Ամեն:

Մենք կարող ենք իրարից աստ արբեր լինել. սակայն կարելի է ժամանակ անցկացնել իրար հետ՝ կիսելով այն, ինչը նման է մեր մեջ:

Բարի պատերազմ մղեցի, ընթացքը ավարտեցի, հավատը պահեցի: (Բ. Տիմ.4.7)

ԼԱՎ ԱՎԱՐՏ

Ես հաճախ եմ առիթ ունենում հոգևոր համագումարներ ղեկավարելու: Աղոթելու և խորհրդածելու համար մի քանի օրով հեռանալը կարող է շատ հարստացնել մարդուն, և ես ծրագրի ընթացքում մասնակիցներին խնդրում եմ կատարել մի անսովոր վարժույթյուն. «Պատկերացրեք, որ ձեր կյանքն ավարտվել է, և ձեր մահազդն էլ մամուլում հրատարակվել: Ի՞նչ կուզեիք, որ ասվեր»: Համագումարի մասնակիցներից շատերը փոխում էին իրենց կյանքի առաջնահերթությունները՝ նպատակ ունենալով լավ ավարտել կյանքը:

Բ. Տիմոթեոս 4-ը պարունակում է Պողոս առաքյալի վերջին հայտնի գրավոր խոսքերը: Թեև հավանաբար ընդամենը վաթսուն տարեկան էր, բայց զգում էր, որ իր «մեկնելու ժամանակը հասել է» (Հմ. 4.6): Եվ ետ նայելով իր անցած ճանապարհին՝ նա ասում է. «Բարի պատերազմ մղեցի, ընթացքը ավարտեցի, հավատը պահեցի» (Հմ. 7): Թեև Պողոսը կատարյալ չի եղել (Ա. Տիմ. 1.15-16), բայց իր կյանքը գնահատում է որպես Աստծուն ու ավետարանին հավատարմության ճշմարիտ օրինակ: Ավանդույթյան համաձայն՝ նա շուտով նահատակվել է:

Մեր վերջին օրերի մասին խորհրդածելը հնարավորություն է տալիս պարզելու, թե մեզ համար ինչն է այժմ կարևորը: Պողոսի խոսքերը դրանց հետևելու լավ օրինակ են: Բարի պատերազմ մղի՛ր, մրցավազքն ավարտի՛ր, հավատքը պահի՛ր: Որովհետև ի վերջո կարևորը մեր հավատարմությունն է Աստծոն ու Նրա ճանապարհներին: Քանի որ Նա է տալիս այն, ինչը անհրաժեշտ է մեզ ապրելու, հոգևոր մարտահրավերներին դիմադրավելու և լավ ավարտելու համար:

Աղոթք - Հա՛յր Աստված, զորացրու՛ ինձ, որ կարողանամ մինչև վերջ հավատարիմ ապրել Քեզ համար: Ամեն:

Ի՞նչ փոփոխություն ես ուզում անել քո կյանքում մրցավազք լավ ավարտելու համար:

Քո այգուն ճռաքաղ չանես, այսինքն՝ քո այգու մեջ մնացած ողկույզները չքաղես. դրանք կթողնես աղքատին և օտարականին: (Ղևտ.19.10)

ԱՌԱՏԱԶԵՈՆ ԵՎ ԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բրիտանական բանակի Հայտնի զորավար Չարլզ Գորդոնը շատ բարեգործությունների հեղինակ էր: Իսկ երբ լսեց Լանկաշիրի սովի մասին, նա իր ստացած մաքուր ոսկուց ձուլված մեդալի վրայից ջնջեց մակագրությունը, և այն ուղարկեց հյուսիս, որպեսզի հալեցնեն և օգտագործեն սովյալներին հաց գնելու համար: Այդ օրը նա իր օրագրում գրեց. «Վերջին երկրային բանը, որ ունեի այս աշխարհում և գնահատում էի, տվել եմ Տեր Հիսուսին»:

Գեներալ Գորդոնի առատաձեռնությունը կարող է թվալ ավելի բարձր, քան մեր կարողացածը, բայց Աստված միշտ էլ իր ժողովրդին կոչ է անում հոգալ կարիքավորների մասին: Օրենքներից մեկում, որ նա փոխանցել է Մովսեսի միջոցով, պատվիրել է. «Քո այգուն ճռաքաղ չանես, այսինքն՝ քո այգու մեջ մնացած ողկույզները չքաղես. դրանք կթողնես աղքատին և օտարականին» (Ղևտ.19.10): Աստված ուզում էր, որ իր ժողովուրդը տեղյակ լինի և ապահովի իրենց մեջ եղող խոցելի մարդկանց:

Որքան էլ առատաձեռն լինենք, մենք կարող ենք Աստծուց խնդրել, որ ավելացնի ուրիշներին տալու մեր ցանկությունը, և փնտրել նրա իմաստությունը նվիրելու ստեղծագործական ուղիներ գտնելու համար: Նա սիրում է օգնել մեզ, որ ցույց տանք իր սերը ուրիշին:

Աղոթք - Տվո՛ղ Հայր, շնորհակալ եմ, որ Հիսուսին ուղարկեցիր ապրելու որպես մեզանից մեկը և մեռնելու մեզ համար: Լցրու՛ սիրտս և շնորհակալություն այս հիանալի Եվերի համար: Ամեն:

Աստված մեզ զանազան օրհնություններ է սվել: Մենք էլ առատաձեռնություն ցուցաբերենք, լինի դա գործնական օգնություն, լսող ականջ, թե մեկ այլ կերպ:

Բայց ինչպե՞ս կիրականանա Սուրբ գիրքը, թե՛ այսպես պետք է լինի: (Մատթ. 26. 54)

ՓԱԽՉԵԼ

Ճ ապոնական մարտարվեստի ավանդական ձևերից մեկի՝ այ-կիդոյի առաջին դասին սենսեյը կամ ուսուցիչն ասաց, որ հարձակվողին դիմագրավելիս մեր առաջին արձագանքը պիտի լինի փախչելը:

Ես ապշել էի, թե ինչու է ինքնապաշտպանություն այս հմուտ վարպետը մեզ սովորեցնում կռվից փախչել: Նրա այդ ասածը այնքան ժամանակ հակասական մնաց, մինչև ինքս հասկացա, որ ինքնապաշտպանություն լավագույն ձևը, իհարկե, սկզբից ևեթ կռվելուց խուսափելն է:

Երբ մի քանի մարդ եկան Հիսուսին ձերբակալելու, Պետրոսը հակադրվեց, ինչպես կաննին մեզանից շատերը. նա սուրը հանեց ու հարձակվեց նրանցից մեկի վրա (Մատթ. 26.51, Հովհ. 18.10): Սակայն Հիսուսը պատվիրեց սուրը տեղը դնել՝ ասելով. «Բայց ինչպե՞ս կիրականանա Սուրբ գիրքը, թե՛ այսպես պետք է լինի» (Մատթ. 26. 54):

Արդարություն զգացումը կարևոր է, բայց ավելի կարևոր է հասկանալ Աստծո նպատակն ու թագավորությունը, որը կոչ է անում սիրել մեր թշնամիներին, օրհնել մեզ անիծողներին, բարություն մատասխանել չարին (5.44): Աշխարհի պատասխանն այս կոչին հակասական է, բայց Աստված ուզում է մեր մեջ զարգացնել այդ պատասխանը: Ղուկաս 22.51-ում նույնիսկ նկարագրվում է, թե ինչպես է Հիսուսը բուժում Պետրոսի հարվածած մարդու ախանջը: Մենք էլ սովորենք դժվարին իրավիճակներում հակադարձել այնպես, ինչպես արեց Ինքը՝ անընդհատ փնտրելով խաղաղություն ու վերականգնում:

Աղոթք - Հայր, տու՛ր ինձ նոր ըմբռնում Քո թագավորությունում եղած ավելի մեծ նպատակների մասին, նաև աստվածապաշտ, սիրող ու խաղաղություն փնտրող սիրտ, որպեսզի դժվարին իրավիճակներին հակադարձեմ Քո Որդու նման: Ամեն:

Բարդ իրավիճակներ մի՞ս էլ կլինեն, բայց կարևոր է, որ ծիս արձագանքենք դրանց:

Ուրեմն նախանձախնդիր եղի՛ր և ապաշխարի՛ր» (Հայտն. 3.19)

ԲԱՐՁՐԱՑՐՈՒՄ ԶԵՐՄԱՍԻԾԱՆՔ

Մենք ապրում ենք Կոլորադոյում, որտեղ ջերմաստիճանը շատ արագ, նույնիսկ վայրկյանների ընթացքում է փոփոխվում: Եվ ամուսինս շատ ուշադիր հետևում է մեր տան ու շրջակայքի ջերմաստիճանային տարբերություններին: Լինելով գործիքների սիրահար՝ նա նույնիսկ մի ջերմաչափ էր պատրաստել, որը ցույց էր տալիս մեր տան չորս «գոտիները»: Ակզբում ես այդ գործիքին այնքան էլ լուրջ չէի վերաբերվում, շուտով ինքս էլ զարմանքով նկատեցի, որ հաճախակի եմ հետևում դրան, և ուշադրությունս գրավում են ներսի ու դրսի ջերմաստիճանների տարբերությունները: Հիսուսն էլ ջերմաստիճանն օգտագործեց՝ նկարագրելու համար Հայտնությունյան գրքում նշված յոթ հարուստ քաղաքներից մեկի՝ Լատդիկիայի «գաղջ» եկեղեցին: Գործող բանկ, հագուստի արտադրություն և բժշկական կենտրոն ունեցող այս մեծ քաղաքը արգելափակված էր վատ ջրամատակարարման պատճառով: Քաղաքին անհրաժեշտ էր մի նոր ջրատար, որով տաք ջուր կհասներ քաղաք, որովհետև մինչ այդ քաղաք հասնող ջուրը ո՛չ տաք էր, ո՛չ էլ սառը: Եկեղեցին նույնպես գաղջ էր: Եվ Հիսուսն ասաց. «Գիտե՞մ քո գործերը, որ ո՛չ սառն ես, ո՛չ էլ տաք: Երանի՛ սառը կամ տաք լինելի: Ուրեմն, քանի որ գաղջ ես և ո՛չ տաք, ո՛չ էլ սառը, քեզ իմ բերանից պիտի փսխեմ» (Հայտն. 3:15-16): Քրիստոս բացատրեց. «Ում սիրում եմ, հանդիմանում եմ և խրատում: Ուրեմն նախանձախնդիր եղի՛ր և ապաշխարի՛ր» (Հմ.19): Մեր Փրկչի խնդրանքը հրատապ է նաև մեզ համար: Եթե հոգևոր առումով ո՛չ տաք ենք, ո՛չ էլ սառը, ընդունենք Նրա սրբագրումը և խնդրենք Նրանից, որ օգնի մեզ՝ ապրել ջերմեռանդ, բորբ հավատքով:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, եթե Քո հանդեպ իմ հանձնառությունը սառչի, ուղարկի՛ր Քո Սուրբ Հոգու սիրառատ ջերմությունը՝ արթնացնելու ու ջերմացնելու հավատս: Ամեն:

Եթե մեր հավատի աստիճանը գաղջություն ցույց տա, աղոթենք ու խնդրենք Հորից, որ բարձրացնի այդ ջերմաստիճանը:

Իսկ ես չխղճա՞մ Նինվե մեծ քաղաքին: (Յովնան 4.11)

ՏԵՍԱԿԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1 854-ին ուուս երիտասարդ հրետանավորը դիտում էր իր թնդանոթից շատ ներքև՝ մարտադաշտում տեղի ունեցող կոտորածը: Հետագայում Լև Տոլստոյը պիտի գրեր. «Մի տեսակ զվարճալի է տեսնել, թե ինչպես են մարդիկ իրար սպանում: Եվ ես ամեն առավոտ ու երեկո ժամեր եմ ծախսում դա դիտելու համար»:

Տոլստոյի հայացքը շուտով փոխվեց, երբ տեսավ Սևաստոպոլ քաղաքի ավերածությունն ու ժողովրդի տառապանքը: Այդ ժամանակ նա գրեց. «Բոլորովին այլ կերպ ես ընկալում քաղաքում լավող կրակոցների ձայները»:

Հովնան մարգարեն էլ մի անգամ բարձրացավ լեռը՝ տեսնելու Նինվեի կործանումը (Հովն. 4.5): Նա այդ դաժան քաղաքին զգուշացրել էր Աստծո մոտալուտ դատաստանի մասին: Նինվեի ժողովուրդը զղջաց, և Աստված գլխաց նրանց, բայց Հովնանը դժգոհ մնաց: Բայց Նինվեն դարձյալ չարին ենթարկվեց և մեկ դար անց Նաում մարգարեն նկարագրեց նրա կործանումը. «Նրա զորավորների վահանը կարմրած է: Նրա պատրաստության օրում փայլատակող պողպատ են մարտակառքերը, և ճոճվում են նոճուց նիզակները» (Նաում 2.3): Նինվեի շարունակվող մեղքի պատճառով Աստված պատժեց նրանց: Բայց նա ասել էր Հովնանին. «Իսկ ես չխղճա՞մ Նինվե մեծ քաղաքին, որի մեջ հարյուր քսան հազար մարդուց ավելի կան, որոնք իրենց աջ ձեռքը ձախից չեն տարբերում» (Հովն.4.11):

Աստծո սերն ու արդարությունը միասին են ընթանում: Նրա սրտի ցանկությունն է, որ մենք ապաշխարենք ու այդ կարեկցանքը տարածենք ուրիշներին վրա:

Աղոթք - Սիրո՞ղ Հայր, օգնի՞ր մերժելու չարի որևէ ցանկություն, որ կարող է ընկնել թշնամիներիս վրա: Օգնի՞ր ինձ լինել Քո սիրո ու կարեկցանքի խողովակը: Ամեն:

Տառադալից վիճակներ կլինեն, բայց Ասված ցանկանում է, որ մենք փոխենք մեր տեսակետը դրանց մասին:

Չանացե՛ք նե՛ղ դռնով ներս մտնել: (Դուկ. 13. 24)

ՆԵՂ ԴՌՆՈՎ ՍՐՃԱՐԱՆԸ

Թայվանի Թայնան քաղաքում գտնվող «Նեղ դուռ» անու-
նով սրճարանը բառացիորեն մի անցք է պատի մեջ: Մուտ-
քը ընդամենը 40 սմ է, միջին չափսի մարդը հազիվ անցնի այդ
դռնով: Այդուամենայնիվ, այս եզակի սրճարանը շատերին է
հրապուրում, որովհետև ներս մտնողներին սպասում են հե-
տաքրքիր ու համեղ զանազան խորտիկներ:

Արդյո՞ք ճիշտ կլինի այն նմանեցնել Դուկասի նկարագրած
նեղ դռանը: Մեկը հարցնում է Հիսուսին.«Տե՛ր, մի՞թե փրկվող-
ները քիչ են» (13. 23): Ի պատասխան՝ Հիսուսը մարտահրավեր
է նետում մարդուն՝ ասելով.«Ձանացե՛ք նե՛ղ դռնով մտնել»
Աստծո թագավորություն (Դուկ. 13. 24): Հիսուսն այդ համե-
մատությունն օգտագործեց հրեաներին հորդորելու համար,
որ ամբարտապան չլինեն: Նրանցից շատերը հավատում էին, որ
լինելու են Աստծո թագավորությունում, որովհետև իրենք Աբ-
րահամի սերունդն են կամ որովհետև պահում են օրենքը: Բայց
Հիսուսը կոչ արեց, որ Իրեն պատասխանեն մինչև «տանտիրոջ
կողմից դուռն փակվելը» (Հմ.25):

Ոչ մեր ընտանեկան ծագումը, ոչ էլ մեր գործերը չեն կարող
ճշտել Աստծո հետ մեր հարաբերությունները: Միայն Հիսուսի
հանդեպ մեր հավատը կարող է մեզ փրկել մեղքից ու մահից
(Եփ. 2.8-9, Տիտ. 3. 5-7): Դուռը նեղ է, բայց այն լայն բացվում
է բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Հիսուսին: Նա մեզ
այսօր հրավիրում է օգտվելու հնարավորությունից և մտնելու
Իր թագավորության նեղ դռնից:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ ինձ հրավիրում ես Քո
թագավորություն: Հավատում եմ, որ Դու եկար մեռնելու ինձ
համար և հարություն առար: Արի՛ իմ կյանք և դարձի՛ր իմ
Փրկիչը: Ամեն:

**Կարելի է վստահ լինել, որ նեղ դռնով մտնելով՝ Տե՛ր Հիսուսի
միջոցով մենք կունենանք հավիտենական կյանք:**

Իսրայելի մարդիկ վերցրին նրանց պաշարից, բայց Տիրոջը չհարցրին: (Դեսու 9.14)

ԴԱԴԱՐ ՏԱԼ ԱՂՈԹԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Երբ հրչեջ մեքենայի ջրցանն սկսեց աշխատել, ես մի հնարավորություն տեսա: Ինձնից առաջ մի քանի մեքենաներ անցան, և ես մտածեցի, որ կարող եմ օգտվել այս առիթից ու արդեն երկար ժամանակ չլվացած մեքենաս լվանալ: Եվ մեքենան կամաց մոտեցրի ջրցանին:

Մակայն անսպասելի բան կատարվեց. երբ սառը ջուրը խփվեց արևից տաքացած մեքենայիս ապակու, դրա ամբողջ երկայնքով կայծակնաձև մի ճաք առաջացավ: Մեքենան «անվճար» լվանալս ավարտվեց զգալի ծախսերով:

Եթե մտածելու կամ թեկուզ աղոթելու համար մի պահ «սեղմած լինեի՛ դադար»... Երբեք ունեցե՞լ եք նման պահեր: Իսրայելի ժողովուրդն այդ բանն արեց ավելի ծանրակշիռ պարագաներում: Աստված նրանց խոստացել էր օգնել, վռնդել այլ ազգերին, երբ նրանք մտնեն իրենց տրված երկիրը (Հեսու 3. 10), որպեսզի նրանք չգայթակղվեն սուտ աստվածների կողմից (Բ. Օր. 20. 16-18): Բայց ազգերից մեկը, տեսնելով Իսրայելի հաղթանակները, հին հացը ցույց տալով՝ խաբեց, թե իրենք հեռու են ապրում: «Իսրայելի մարդիկ վերցրին նրանց պաշարից, բայց Տիրոջը չհարցրին: Հեսուն նրանց հետ խաղաղություն հաստատեց» (Հեսու 9. 14-15)՝ շրջանցելով Աստծո ցուցումները:

Երբ մենք աղոթքն ենք դարձնում առաջին միջոցը, խնդրում ենք Աստծո առաջնորդությունը, իմաստնությունն ու օրհնությունը: Թող Նա այսօր հիշեցնի մեզ՝ «սեղմելու դադարը»:

Աղոթք - Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ ավելի շատ դադար առնեմ քեզ հետ խոսելու համար: Ամեն:

Չոսադենք որոշումներ կայացնելիս, այլ ամեն ինչ փնտրեմք Նրա հետ ու վստահեմք Նրան:

Ամեն ինչ Աստուծոց է, որը մեզ Դիսուս Քրիստոսի միջոցով իր հետ հաշտեցրեց ու մեզ հաշտության ծառայությունը տվեց: (Բ.Կորնթ. 5.18):

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՐ

Արևմտյան Սլովենիայի հեռավոր մի գյուղում գործում էր մի գաղտնի բուժհաստատություն՝ Ֆրանյա պարտիզանական հոսպիտալը, որտեղ բուժվում էին Երկրորդ համաշխարհային պատերազմի հազարավոր վիրավորները: Ուշագրավ է, որ բուժհաստատությունը գտնելու նացիստների փորձերը անհաջողության էին մատնվել, բայց առավել ուշագրավն այն էր, որ հիվանդանոցը հիմնել ու ղեկավարում էին Սլովենիայի դիմադրության շարժման մարտիկները, և այստեղ բուժօգնություն էին ստանում թե՛ իրենց, և թե՛ դաշնակից բանակների զինվորները:

Աստվածաշունչը կոչ է անում օգնել, որ ամբողջ աշխարհը հոգեպես բուժվի: Սա նշանակում է, որ մենք պետք է կարեկից լինենք բոլորի հանդեպ՝ անկախ նրանց տեսակետներից: Յուրաքանչյուր մարդ, անկախ իր հայացքներից, արժանի է Քրիստոսի սիրուն ու բարությունը: Պողոսն ընդգծում է, որ Հիսուսի՝ բոլորին ընդգրկող սերը «մեզ ստիպում է այս խորհելու. եթե մեկը բոլորի համար մեռավ, ուրեմն բոլորը մեռած են» (Բ. Կորնթ. 5. 14): Բոլորս էլ տառապում ենք մեղքի հիվանդությունով: Հետևաբար բոլորս ունենք Հիսուսի ներման կարիքը, և Նա եկել է, որ բուժի մեզ:

Ապա զարմանալի քայլով Աստված մեզ է վստահում «հաշտության պատգամը» (Հմ. 19): Նա մեզ հրավիրում է վիրավոր ու կոտորված մարդկանց բուժելու: Եվ այս հաշտությունը, այս բուժումը բոլորի համար է նախատեսված:

Աղոթք - Աստված, ես ապաքինման կարիք ունեմ և գիտեմ, որ բոլորն ունեն այդ կարիքը: Օգնի՛ր ինձ, որ դառնամ ուրիշների բուժման մի մասը: Ամեն:

Մեր շուրջը մի՛ժս էլ կլինեն մարդիկ, որոնք կմտածեն, թե Աստված չի բուժում: Ուստի Նա մեզ կանչում է հաճախարհի ու բուժողի դեր կատարելու համար:

Մտերիմ հանդարտության փոխվեց, և նրա ալիքները հանգստացան: (Սաղմ. 107.29)

ՀՈՒՅԱԸ ԾԵՂՔՈՒՄ Է ՓՈԹՈՐԻԿՆԵՐԸ

Փոթորիկներ ուսումնասիրողները 2021-ի գարնանը Թեքսասում տեսագրել էին ուժեղ մրրկահողմի կողքին երևացող ծիածանը: Տեսաներիզներից մեկում երևում է, թե ինչպես են քամուց սաստիկ օրորվում ցորենի երկար ցողունները, իսկ երկնակամարը կտրում է փայլուն ծիածանը: Մեկ այլ տեսաներիզում անցորդները զարմացած դիտում են ձագարածկ պտտահողմի կողքին հայտնված հուլյսի այդ խորհրդանիշը:

107-րդ սաղմոսում սաղմոսերգուն հուլյս է տալիս ու ներշնչում, որ դժվար ժամանակներում Աստծուն դիմենք: Նա նկարագրում է մարդկանց, որոնք փոթորիկների մեջ էին «և նրանց իմաստությունը կորավ» (Հմ.27): Բայց «իրենց նեղությունների մեջ Տիրոջն աղաղակեցին, և Նա փրկեց նրանց իրենց վշտերից» (Հմ. 28):

Աստված հասկանում է, որ կյանքի փոթորիկներում Իր գավակները երբեմն պայքարում են հուլյսի համար: Մենք կարիք ունենք Նրա՝ Հավատարմության մասին հիշեցումների, հատկապես, երբ հորիզոնը մութ է ու խռովահուլյգ:

Անկախ նրանից՝ մեր կյանքի փոթորիկները որպես էական խոչընդոտ են հայտնվում, թե որպես հուզական ճնշում, Աստված կարող է դրանք հանդարտեցնել ու մեզ առաջնորդել դեպի նավահանգիստ (Հմ. 29-30): Հնարավոր է, որ մեր նախընտրած ձևով կամ ժամանակում թեթևություն չզգանք, բայց մենք կարող ենք վստահել Աստծուն, որ Նա կկատարի այն խոստումները, որ տվել է Աստվածաշնչում:

Նրա տված հարատև հույսը հաղթահարում է ցանկացած փոթորիկ:

Աղոթք - Սիրող Հայր, շնորհակալ եմ, որ ինձ հույս ես տալիս՝ անկախ նրանից, թե ինչ է կատարվում իմ կյանքում: Ամեն:

Փոթորիկներն ու նեղությունները հաղթահարելիս հույսդ դի՛ր միմիայն Ասծո՞վ վրա, որը կարող է հանդարտեցնել ցանկացած փոթորիկ:

Որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Յայրը, որ տեսնում է ծածուկը, քեզ հայտնապես կհատուցի: (Մատթ. 6.4)

ՍԻՐՈՎ ՏԱԼ

Կլենն ամեն օր իր առավոտյան սուրճը վերցնում է մոտակա սննդի կետից՝ առանց մեքենայից իջնելու: Եվ ամեն օր վճարում է նաև իր հետևից եկող մեքենայի պատվերի համար՝ դանձապահին խնդրելով, որ բարի օրվա մաղթանք փոխանցի անձանոթ մարդուն: Նա չգիտի՝ ով է իր հետևից եկողը, ինչպես կարճագանքի իր քայլին, բայց հավատում է, որ այդ փոքրիկ ժեստը նվազագույնն է, որ ինքը կարող է անել: Մի օր, սակայն, նա պատահաբար իմացավ, որ փաստորեն ազդեցություն ունենում են նման բաները: Տեղական օրաթերթի խմբագրին ուղղված անանուն նամակի հեղինակը պատմում էր, որ 2017 թ. հուլիսի 18-ին մի անձանոթից իրեն ուղարկված նվերը արժատապես փոխել է իր ճակատագիրը. նա որոշել էր ինքնասպան լինել և այդ օրը փոխել է մտադրությունը:

Կլենը ամեն օր վճարում է իր հետևից եկող մեքենայի ուղևորի սուրճի գինը՝ առանց որևէ ակնկալիքի: Միայն այդ մի դեպքի մասին իմացավ: Երբ Հիսուսն ասում է. «Երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե քո աջն ինչ է անում» (Մատթ. 6.3), մեզ հորդորում է գործել Կլենի նման:

Երբ տալիս ենք Աստծո հանդեպ սիրուց մղված և առանց ուրիշների գովասանքին սպասելու՝ պետք է վստահ լինենք, որ մեր պարգևները կօգտագործվեն Նրա կողմից՝ դրանք ստացողների կարիքները գոհացնելու համար:

Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ ինձ օգտագործում ես ուրիշների կարիքները բավարարելու և այդպիսով նաև իմ կարիքները հոգալու համար: Օգնի՛ր, որ փոխհատուցում չփնտրեմ, երբ տալիս եմ, այլ անեմ այն, ինչը կփառավորի Քեզ: Ամեն:

Տիրոջ սլած դասվերը հսակ է՝ Տալ, ավելին Տալ՝ առանց հայտարարելու և փոխհատուցում սպասելու:

Իմ լուծը ձեզ վրա՝ վերցրեք ու ինձանից սովորեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր հոգիներին հանգստություն կգտնեք: (Մատթ. 11. 29)

ԱՌԱՆՁՆԱՆԱԼ ՀԵՉՈՒԹՅԱՄ

1 742 թ. նոյեմբերին Անգլիայի Ստաֆորդշիր քաղաքում խռովություն էր սկսվել Չարլզ Ուեսլիի ավետարանական քարոզչության դեմ: Չարլզի ու նրա եղբոր՝ Ջոնի քարոզներում մարդիկ վտանգ էին տեսնում իրենց եկեղեցական ավանդույթների համար:

Ջոնը, լսելով խռովության մասին, շտապեց Ստաֆորդշիր՝ օգնելու եղբորը: Շուտով բազմությունը չըջապատեց նրան: Ջոնը արիաբար հանդիպեց նրանց առաջնորդներին, խոսեց այնքան հանգիստ, որ նրանց զայրույթը մեղմացավ:

Ջոնի մեղմ ու հանդարտ խոսքը հանգստացրեց կատաղի ամբոխին, սակայն նրա սրտում, բնականաբար, ալեկոծություն էր: Դա Փրկչի սիրտն էր, որին շատ ուշադիր հետևում էր Ուեսլին: Իսկ Հիսուսն ասում էր.«Իմ լուծը ձեզ վրա՝ վերցրեք ու ինձանից սովորեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր հոգիներին հանգստություն կգտնեք» (Մատթ. 11. 29): Հեզության այս լուծը դարձավ Պողոս առաքյալի՝ մեզ ուղղված մարտահրավերի իրական ուժը.«ամենայն խոնարհությունը, հեզությունը և համբերատարությունը, սիրով միմյանց հանդուրժելով» (Եփ. 4.2):

Մարդկության մեջ նման համբերությունը մեզ համար անհնար է թվում: Բայց մեր մեջ եղած Հոգու պտուղը՝ Քրիստոսի սրտի հեզությունը կարող է մեզ առանձնացնել ու զինել, որպեսզի դիմակայենք թշնամական աշխարհին: Այդպես վարվելով՝ կկատարենք Պողոսի խոսքերը. «Ձեր հեզությունը թող բոլոր մարդկանց հայտնի լինի» (Փիլ. 4.5):

Աղոթք - Երբեմն ուզում եմ հակահարված տալով վիրավորել ինձ վիրավորողներին: Այդ պահերին ինձ հիշեցրու՝ թե Հիսուսը Իր հակառակորդների հանդեպ ինչպիսի խոնարհություն ու կարեկից սիրտ դրսևորեց: Ամեն:

Մեր ժամանակներում մեղմությունը թուլություն է համարվում: Սակայն իրականում այն զորեղ ուժ է:

Հուլյոյ դիր Աստու վրա, որովհետև էլի պիտի գոհանամ նրանից: (Սաղմ. 42.5)

ՆԿԱՏԵԼ ՀՈՒՅՍԻ ԾԻԱԾԱՆՆԵՐԸ

Ն ոկտեմբերյան արձակուրդի օրերին հիվանդությունը ստիպեց, որ մի քանի օր մեկուսանամ իմ սենյակում: Տրամադրությունս դարձել էր ամպամած ու մռայլ երկնքի նման: Երբ վերջապես համարձակվեցի ամուսնուս հետ վայելել մոտակա տեսարժան վայրերը, շուտով մռայլ ամպերը դարձյալ փակեցին մեր տեսադաշտը: Բայց ինձ հաջողվեց ստվերոտ լեռների ու աղոտ հորիզոնի մի քանի լուսանկար անել: Շուտով հորդառատ անձրև սկսվեց, և մենք ստիպված էինք ներս մտնել: Ես ամուսնուս տվեցի տեսախցիկը՝ ցույց տալով ծիածանը: Կենտրոնացած լինելով քիչ առաջվա մռայլ տրամադրությանս վրա՝ նկատի չէի առնում, որ Աստված թարմացնում է իմ հոգին հուլյսի անսպասելի մի շողով (Ծնն 9. 13-16):

Ձիզիկական կամ զգացական տառապանքը հաճախ կարող է մեզ զցել հուսահատության գիրկը, և մենք թարմանալու ակնկալիքով ծարավի ենք Աստծո մշտական ներկայության ու Նրա անսահման զորության մասին հիշեցումներին (Սաղմ. 1-3): Հիշելով այն ժամանակները, երբ Աստված մեզ կամ ուրիշների համար եկել է, կարող ենք վստահ լինել, որ Նրա վրա մեր հույսը հաստատուն է՝ անկախ այն բանից, թե որքան վհատ ու տրտում ենք այդ պահին (Հմ. 4-6):

Երբ դժվար պարագաներն ու վատ վերաբերմունքը խամբեցնում են մեր տեսողությունը, Աստված հրավիրում է, որ կանչենք Իրեն, կարդանք Աստվածաշունչը և վստահենք Իր հավատարմությանը (Հմ. 7-11): Նա կօգնի մեզ ամենամութ օրերում անգամ նկատել հուլյսի ծիածաններ:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ Քեզ հոգիս թարմացնելու և ողորմության խնդրանքս հույսով լի գովասանքի վերածելուդ համար: Ամեն:

Վաս վերաբերմունքը խամբեցնում է մեր Տեսողությունը: Բայց վստահ լինենք, որ մեր հույսը կենսրոնացած է Աստծո կամփ վրա:

Աստվածապաշտությունը գոհունակության հետ միասին մեծ շահ է: (Ա.Տիմ. 6.6)

ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼ ԱՍՏԾՈՒ ՎՐԱ

Նշանի մատանի գնելիս բավական ժամանակ վատնեցի, որովհետև մտավախություն ունեի, թե չեմ կարողանա ամենալավ ազամանքը գտնել:

Տնտեսական հոգեբան Բերրի Շվարցի տեսության համաձայն՝ իմ այդ անվճռականությամբ ես «առավելագույնն անողներից եմ»՝ ի տարբերություն «չուտ գոհացողների»: Վերջիններն իրենց ընտրությունը կատարում են՝ հիմնվելով սեփական կարիքների վրա: Իսկ առավելագույնն անողները միշտ ձգտում են լավագույն ընտրությունը կատարել: Եվ անվճռականության ու կասկածամտության պատճառով ունենում են անհանգստություն, ճնշվածություն և դժգոհություն: Սոցիոլոգներն այս երևույթն անվանում են առիթը կորցնելու վախ:

Աստվածաշնչում չենք գտնի «առավելագույնն անող» կամ «չուտ գոհացող» արտահայտությունները: Բայց նման գաղափարի հանդիպում ենք: Տիմոթեոսին ուղղված առաջին նամակում Պողոսը կոչ է անում, որ նա արժեքներ գտնի Աստծո, և ոչ թե այս աշխարհի գործերում, որովհետև աշխարհի տված գոհացումի խոստումները երբեք չեն իրականանա: Առաքյալն ուզում էր, որ Տիմոթեոսի ինքնությունն արմատավորվեր Աստծո մեջ, երբ ասում էր «Աստվածապաշտությունը գոհունակության հետ միասին մեծ շահ է» (Ա.Տիմ. 6.6):

Երբ կենտրոնանանք այս աշխարհի խոստացած բազում ուղիների վրա, կդառնանք անհանգիստ ու դժգոհ: Իսկ Աստծո վրա կենտրոնալու և առավելագույնին հասնելու մոլուցքից հրաժարվելու դեպքում մեր հոգին կստանա իսկական գոհունակություն ու հանգստություն:

Աղոթք - Հայր, օգնի՛ր ինձ, որ գոհունակություն փնտրեմ Քեզ հետ ունեցածս հարաբերություններում: Ամեն:

Աստծո հետ մոտիկ մի հարաբերությունը կարող է մեզ դարձնել մեր ունեցած զանազան օրհնություններով բավարարված անձ:

Սա է այն վստահությունը, որ Նրա նկատմամբ ունենք, թե ինչ որ ըստ Նրա կամքի խնդրում ենք, լսում է մեզ: (Ա.Յովհ. 5.14)

ՎՍՏԱՅԵԼ ԱՍԾՈՒՆ

2018-ին Միացյալ Թագավորությունում անցկացված մի հետազոտություն արդյունքներով՝ մեծահասակները օրվա մեջ իրենց բջջային հեռախոսներն ստուգում են միջին հաշվով 12 րոպեն մեկ: Բայց անկեղծ լինելու դեպքում այդ տվյալը հնացած է թվում, եթե նկատի առնենք, թե որքան հաճախ ենք համացանցն օգտագործում՝ գտնելու որևէ հարցի պատասխան, պատասխանելու մեր ստացած նամակներին, հեռախոսազանգերին, գրավոր պատգամներին: Մեզանից շատերը անընդհատ նայում են այդ սարքերին՝ վստահ, որ դրանք մեզ դարձնում են ավելի տեղեկացված, կազմակերպված և դրանով իսկ նաև՝ կախված:

Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք ունենք ինֆորմացիայի անսահման ու ավելի լավ մի աղբյուր, քան մեր ձեռքի հեռախոսը: Աստվածաշունչն ասում է, որ երբ մենք աղոթում ենք, կարող ենք վստահ լինել, որ «ինչ որ ըստ նրա կամքի խնդրում ենք, լսում է մեզ» (Ա.Հովհ. 5.14): Կարդալով Աստվածաշունչը և Աստծո խոսքերը պահելով մեր սրտերում՝ մենք կարող ենք վստահորեն աղոթել այն բաների համար, որոնք Նա արդեն ուզում է մեզ համար՝ ներառյալ այնքան անհրաժեշտ խաղաղությունը, իմաստնությունն ու հավատքը (Հմ.15):

Երբեմն, երբ մեր վիճակը չի փոխվում կամ բարելավվում, մեզ կարող է թվալ, թե Աստված չի լսում մեզ: Բայց երբ մենք հետևողականորեն ամրապնդում ենք Աստծո հանդեպ մեր վստահությունը՝ բոլոր դեպքերում դիմելով Իրեն (Սաղմ.116.2), Նա խոստանում է հայթայթել այն, ինչը անհրաժեշտ է մեզ համար:

Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ, որ աղոթքով կարող եմ վստահորեն մոտենալ Քեզ՝ համոզված լինելով, որ Քո կամքով կարող ես հոգալ բոլոր կարիքներս: Ամեն:

Աղոթով Ասծուն հասցնենք մեր կարիքները և վստահ լինենք, որ Նա կսա մեզ անհրաժեշտ ամեն բան:

Անուշահոտ յուղն ու խունկը ուրախացնում են մարդու սիրտը, նաև հարևանի քաղցրությունը՝ մտերիմ խորհրդով: (Առ. 27.9)

ԲԱՐԻ ԱՆԿԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Մտերիմ ընկերս մեղմ ժպիտով ու բարեկամաբար նկատեց, որ ելույթս այնքան անկեղծ չէր: Եթե մեկ ուրիշն ասեր դա, ես խորապես կվիրավորվեի: Բայց ես բարձր եմ գնահատում ընկերոջս կարծիքը, ու թեև սկզբում ինձ այնքան էլ դուր չեկավ, մի պահ այլայլվեցի, սակայն հետո սկսեցի ծիծաղել և ընդունեցի, որ դիտողությունը ճիշտ է: Երբեմն, խոսելով հավատքիս մասին, ես գործածում եմ այնպիսի արտահայտություններ, որոնք խոսքս դարձնում են կեղծ, անբնական ու ոչ արտահայտիչ: Ընկերս սիրում է ինձ և փորձում է օգնել, որ ավելի լավ հաղորդակցվեմ, ու նրա խորհուրդները լավագույնն են, որ ստացել եմ:

Սողոմոնը շատ իմաստուն է գրել.«Բարեկամի պատճառած վերքերն անկեղծ են, բայց լիառատ են ոսոխի համբույրները» (Առ. 27.6): Ընկերոջս խորաթափանցությունը ցույց տվեց այդ խորհրդի ճշմարտացիությունը: Ես երախտապարտ էի, որ նա դիմեց այդ ազնիվ քայլին՝ ասաց ճշմարտությունը, որ շատ դժվար էր, և հնարավոր է, որ նաև չընդունեի:

Եթե քեզ ասեն միայն դուրեկան, ականջ չոյող բաներ, այնքան էլ օգտակար չհամարես, որովհետև դա կարող է խանգարել քո աճին ու կենսական զարգացմանը:

Անկեղծությունը կարող է բարի լինել, եթե չափվում է անկեղծ ու խոնարհ սրտով: Թող Աստված մեզ իմաստնություն տա այն ստանալու և լավագույնս փոխանցելու՝ դրանով իսկ Նրա հոգատարությունն արտացոլելու համար:

Աղոթք - Աբբա Յայր, շնորհակալ եմ, որ Աստվածաշնչի միջոցով ինձ ասացիր ճշմարտությունը: Խնդրում եմ՝ օգնիր, որ լավ խորհուրդներ ստանամ և տամ ուրիշներին՝ ապավինելով Քեզ, որ առաջնորդում ես ինձ: Ամեն:

Ծեմարիս դիտողություն լսելը դժվար է, այո՛, սակայն դա օգտակար է մեզ համար:

Սովորեցրեք նրանց պահել այն ամենը, ինչ ձեզ պատվիրեցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերիս, մինչև աշխարհի վերջը: (Մատթ. 28.20)

ՀԻՍՈՒՄՆ ԱՅՍՏԵՂ Է

Հիշում եմ մորաքրոջս՝ մահվան մահճում: Հայրս, մայրս ու ես այցելել էինք նրան: Մոխրագույն մազերը հետ սանրած, կնճռապատ դեմքով կինը շատ չէր խոսում, բայց նրա մի քանի բառը երբեք չեմ մոռանա: Նա շշնջում էր. «Ես միայնակ չեմ, Հիսուսն այստեղ է՝ ինձ հետ»:

Ես հիացած էի մորաքրոջս այդ հայտարարությամբ: Իրականում նա մենակ էր ապրում. ամուսինը մահացել էր մի քանի տարի առաջ, զավակներն ապրում էին հեռու: Այդուամենայնիվ, կյանքի իննսուներորդ տարում անկողնում հազիվ շարժվող կինը կարողացավ ասել, որ ինքը մենակ չէ:

Մորաքույրս տառացիորեն ընդունեց Տեր Հիսուսի խոսքերը՝ ուղղված աշակերտներին. «Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28. 20): Նա իմացավ, որ Քրիստոսի հոգին իր հետ էր, ինչպես Նա խոստացել է, երբ պատվիրում էր իր աշակերտներին զնալ, բոլոր ազգերին աշակերտ դարձնել ու իր պատվիրանները փոխանցել ուրիշներին (Հմ.19): Հիսուսն ասում է, որ «Ճշմարտության Հոգին հավիտյան կլինի» իր աշակերտների և մեզ հետ (Հովհ.14. 16-17):

Համոզված եմ, որ մորաքույրս զգում էր հենց այդ խոստման իրականությունը: Հոգին նրա մեջ էր, երբ նա անկողնում պառկած, էր և օգտագործեց նրան՝ իր ճշմարտությունը հայտնելու իր երիտասարդ զարմուհուն, որը պետք է լսեր ու պահեր այն իր սրտում:

Աղոթք - Հիսուս, շնորհակալ եմ, որ Քո Հոգին տվեցիր որպես մխիթարիչ և ուղեկից: Հիշեցրու՝ ինձ Քո ներկայության մասին այսօր: Ամեն:

Ոգևորվե՛նք այն իրողությամբ, որ մեր Տերն ու Փրկիչը այստեղ է՝ մեզ հետ այսօր, վաղը և հավիտյան:

ժողովուրդն ուրախացավ նրանց հոժարական ընծայելու համար, որով հետևեալ բոլորանվեր սրտով ընծաներ տվեցին Տիրոջը: (Ա. Մնաց. 29.9)

ԱՌԱՏԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ

Գիտնականները հայտարարում են, որ առատաձեռնութեան և ուրախութեան միջև կապ կա: Իրենց դրամն ու ժամանակը ուրիշներին տվողներն ավելի երջանիկ են, քան չտվողները: Այս միտքը հոգեբաններից մեկին նույնիսկ թույլ տվեց գրել. «Տալու գործողությունը դիտարկենք ոչ թե որպես բարոյական պարտք, այլ հաճույքի աղբյուր»:

Թեև տալը կարող է մեզ երջանկություն պարգևել, բայց հարց է առաջանում, թե արդյո՞ք երջանկությունը պիտի լինի մեր նպատակը: Եթե մենք առատաձեռնություն ենք ցուցաբերելու, որպեսզի մեզ լավ զգանք, ի՞նչ ասել այն դժվարին դեպքերի և առօրյա կարիքների մասին, որոնք պահանջում են մեր աջակցությունը:

Աստվածաշունչը նույնպես առատաձեռնությունը կապում է ուրախութեան հետ, բայց այլ տեսանկյունից: Տաճարի կառուցման համար իր հարստությունը նվիրաբերելուց հետո Դավիթ թագավորը իսրայելցիներին հրավիրեց իր նման վարվելու (Ա. Մնաց. 29.1-5): Եվ ժողովուրդը ուրախութեամբ արձագանքեց թագավորի կոչին՝ ուրախութեամբ տալով ոսկի, արծաթ ու թանկարժեք քարեր (Հմ.6-8): Ուշադրություն դարձնենք, թե մարդկանց ուրախությունը ինչպես էր բացատրվում. «Ժողովուրդն ուրախացավ նրանց հոժարակամ ընծայելու համար, որովհետև բոլորանվեր սրտով ընծաներ տվեցին Տիրոջը» (Հմ.9): Այսինքն՝ Աստվածաշունչը երբեք չի ասում՝ տանք, որովհետև դա մեզ ուրախացնում է, այլ հոժարակամ ու ամբողջ սրտով տանք ինչ-որ կարիք հոգալու համար: Իսկ ուրախությունը հետո է գալիս:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ տալու մեջ եղած ուրախության համար: Տու՛ր ինձ առատաձեռն լինելու պատրաստական սիրտ նույնիսկ սովորական կամ դժվարին կարիքների համար: Ամեն:

Կարիքները շատ են, ուսի մեզ սրված դասվիրանի համաձայն՝ առատաձեռնությամբ քանձ՝ հանուն Աստուծո՞ւ փառքի:

Աստծո պատվիրանները թողած՝ մարդկանց ավանդույթներն ենք պահում: (Մարկ.7. 8)

ՄԵՐԺԵԼՈՎ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատլանտայի ոստիկաններից մեկը, կանգնեցնելով վարորդին, հարցրեց, թե արդյոք նա գիտե՞ ինչու է կանգնեցրել: Կինը տարակուսած պատասխանեց, որ պատկերացում չունի: Ոստիկանը բացատրեց, որ նա մեքենան վարելիս հաղորդագրուեթյուն էր գրում հեռախոսով: Կինն ընդդիմացավ և ցույց տալով հեռախոսը՝ ասաց, որ ինտերնետային նամակն էր նայում:

Բջջային հեռախոսը որպես ինտերնետային նամակագրուեթյան միջոց օգտագործելը մեզ չի ազատում պատասխանատվուեթյունից, որովհետև օրենքի իմաստը ոչ թե հաղորդագրուեթյուն չուղարկելն է, այլ մեքենա վարելիս հեռախոսով առհասարակ չգբաղվելը, ընթացքից չչեղվելը: Հիսուսը իր օրերի կրոնական առաջնորդներին էր մեղադրում, որ շատ ավելի վատ սողանքներ էին ստեղծում: «Աստծո պատվիրանը անարգում եք, որ ձեր ավանդուեթյունը պահպանեք, -ասում է Նա և որպես ապացույց՝ մեջբերում. «Պատվիր հորդ ու մորդ» պատվիրանը (Մարկ.7. 9-10): Կրոնական նվիրվածուեթյան կեղծ քողի ներքո այդ հարուստ առաջնորդները անտեսում էին իրենց ընտանիքները: Նրանք ուղղակի հայտարարում էին իբր «Աստծուն նվիրած» իրենց փողի մասին և հրաժարվում էին հոգ տանել սեփական ծեր ծնողներին մասին: Հիսուսը հասավ հարցի էուեթյանը և ասաց. «Աստծո խոսքը անարգում եք ձեր ավանդուեթյունով» (Հմ.13): Նրանց կեցվածքը ոչ թե Աստծուն պատվել էր նշանակում, այլ ընդհակառակը՝ անարգանք էր իրենց ծնողների հանդեպ:

Տեր Հիսուսը Սուրբ Հոգու առաջնորդուեթյամբ և իր Հոր տված ցուցումներով մեզ հնարավորուեթյուն է տալիս փոխելու մեր եսասիրական հակումները:

Աղոթք - Դայր, Քո իմաստուն խորաթափանցուեթյան կարիքն ունեմ: Փրկիր ինձ ուրացման մեղքից և օգնիր, որ ապրեմ Քո Դոգու՝ սիրո, ճշմարտուեթյան և սրբուեթյան համածայն: Ամեն:

Կյանքում դասահում է, որ մեր մտածած փայլերը հակասում են Աստծուցի ցուցումներին:

Հավիտենականությունն է դրել մարդկանց սրտերում, սակայն մարդը չի կարող սկզբից մինչև վերջը հասկանալ Աստծո արած գործերը: (ժող. 3.11)

ԲԱՎԱՐԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Ընկերոջս զբաղադարանում տեսնելով Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպը՝ խոստովանեցի, որ երբեք այն մինչև վերջ չեմ կարդացել: Մարտին ժպտալով ասաց.«Երբ մանկավարժական աշխատանքից հետո հանգստի անցա, այս գիրքն ինձ նվիրեց ընկերներիցս մեկը և ասաց, որ այժմ վերջապես ժամանակ կունենամ կարդալու»:

Ժողովողի 3-ի առաջին ութ համարներում նշվում է, որ կյանքի ընթացքում ամեն ինչ իր ժամանակն ունի: Անկախ նրանից, թե որ փուլում ենք մենք, հաճախ դժվար է լինում ժամանակ գտնել մեր ուզածն անելու համար: Եվ մեր ժամանակը տնօրինելու վերաբերյալ իմաստուն որոշումներ կայացնելու համար հարկավոր է ունենալ ծրագիր (Սաղմ.90. 12):

Մեր հոգևոր առողջության համար առաջնահերթություն է ամեն օր ժամանակ անցկացնել Աստծո հետ: Արդյունավետ աշխատանքը բավականություն է պարգևում մարդու հոգուն (ժող. 3.13): Աստծոն ծառայելը և ուրիշներին օգնելը մեզ համար կարևոր է որպես Աստծո նպատակն իրականացնելու միջոց (Եփ. 2.10): Եվ հանգստի ու ժամանցի միջակայքերը անիմաստ չեն, այլ մարմնի և հոգու թարմացման միջոց են:

Ժողովողի 3.11-ում ասվում է, թե Աստված «հավիտենականությունն է դրել» մեր սրտերում՝ հիշեցնելով, որ առաջնահերթություն տանք հավիտենական արժեքներին: Դա կարող է մեզ հասցնել Աստծո հավիտենական հեռանկարին «սկզբից մինչև վերջը»:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, Քո հավիտենական հեռանկարից տու՛ր ինձ մի նշույլ և օգնի՛ր, որ կարողանամ հասնել ժամանակի ճիշտ հավասարակշռման, որ ավելի լավ իրականացնում է Քո կամքը: Ամեն:

Ժամանցի ի՞նչ արբերակ կարելի է ընտել՝ մտաբերելով Աստծո սկզբ հավիտենականության սահմանումը:

ԳՆԱ՛ քո տուն, քո ընտանիքի մոտ ու նրանց պատմի՛ր, թե Տերը Քեզ ինչե՛ր արեց: (Մարկ. 5.19)

ՀԱՎԱՏՔԻ ԶՐՈՒՅՑ ՏԱՆԸ

«**Օ**գ երկրի կախարհը» ֆիլմի հերոսուհի Դորոտիի ասած «Տան նման տեղ չկա, տան նման տեղ չկա» բառերը բացահայտում են արկածային պատմությունների հերոսների ապրումներն ու զգացողությունները, երբ սովորական մարդը հայտնվում է արտասովոր պայմաններում: Հերոսը հեռանում է իր տնից, ճամփորդում այլ երկրներում, որտեղ անցնում է փորձությունների միջով, հանդիպում բարեգործների ու չարագործների: Եվ եթե նրան հաջողվում է հաղթահարել դրանք, նա, կենսափորձով ու իմաստնությունամբ հարստացած, վերադառնում է հայրենի տուն: Այս վերջին մասը կարևոր է ու վճռորոշ:

Դիվահարի պատմությունը նման է նկարագրված հերոսի ճամփորդությանը: Հետաքրքրական է, որ վերջին պատկերում մարդն աղաչում է Հիսուսին, որ թույլ տա «Իր հետ լինելու» (Մարկ. 5.18): Սակայն Հիսուսը նրան ասում է. «Գնա՛ քո տուն, քո ընտանիքի մոտ ու նրանց պատմի՛ր, թե Տերը Քեզ ինչե՛ր արեց: (Հմ.19): Այս մարդու ճամփորդության մեջ կարևորը տուն վերադառնալն էր և իրեն լավ ճանաչողներին իր զարմանալի պատմությունը ներկայացնելը:

Աստված մեզ կանչում է տարբեր իրավիճակներում ու տարբեր ձևերով: Բայց ոմանց պարագայում հավատքի ճամփորդության համար ավելի կարևոր է տուն վերադառնալն ու իրենց պատմությունը պատմելը: Այդ դեպքում մեզանից ոմանց համար նույնպես յուրատեսակ կոչ է դառնում «տան նման տեղ չկա» արտահայտությունը:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, ինձ քաջություն տուր, որպեսզի պատմեմ Քո գործերի մասին: Ոչ միայն անժանոթներին, այլև նրանց, որոնք ինձ ավելի լավ են ճանաչում, որոնք իմ տանն են: Ամեն:

Կասարեմք առաջին ֆայլն ու դասրաս լինեմք մերոնց դասմելու, թե Ասված ինչե՛ր է արել և անում մեզ համար:

Սա գատկի գոհն է Տիրոջ համար, որը Եգիպտոսում Իսրայելի որդիների տների վրայով անցավ: (Ել.12.27)

ԱՍՏՈՆ ՔԱՅԼԵՐԸ

Սիրում եմ բառախաղը: Հատկապես այն բանից հետո, երբ մի օր խաղի ժամանակ ինձ հետ կատարված գործողությունը ընկերներս իմ անունով կոչեցին՝ կատարա: Ամբողջ խաղի ընթացքում ես միավորներով հետ էի մնում, բայց խաղի ավարտին, երբ փոքր պարկում արդեն քար էլք մնացել, ես յոթ տառով բառ կազմեցի: Դա խաղի ավարտ էր նշանակում, և ես բացի 50 հավելյալ միավորից՝ ստացա նաև բոլոր մրցակիցներիս մոտ մնացած քարերի միավորները և դարձա խաղի հաղթող: Այդ օրվանից ի վեր՝ երբ խաղի ժամանակ մեկը հետ է մնում, բոլորը հիշում են ինձ հետ պատահածը և հույս փայփայում, որ «կատարա» կանեն: Անցյալում տեղի ունեցածը հիշելը տրամադրություն է բարձրացնում և հույս ներշնչում: Դա այն նույն բանն է, ինչ Աստված արեց իսրայելցիներին, երբ նրանք առաջին անգամ զատկի տոնն էին նշում: Իսրայելի ժողովուրդը Եգիպտոսում անասելի ճնշվում էր (Ելք 1. 6-14): Աստված, լսելով նրանց փրկությունից անհաշիվ, ազատեց՝ նախապես պատվիրելով.«Այդ գիշեր պիտի անցնեմ Եգիպտոսի երկրով և հարվածեմ Եգիպտոսի բոլոր առաջնեկներին՝ մարդուց մինչև անասունը: Բոլոր անաստվածների դեմ դատաստան պիտի անեմ: Արյունը թող ձեզ համար նշան լինի տների վրա, ուր որ լինելու եք, և տեսնելով արյունը՝ պիտի անցնեմ ձեր վրայով, և հարվածը չպիտի իջնի ձեզ վրա, երբ հարվածեմ Եգիպտոսի երկիրը» (12. 12-13): Դարեր անց էլ հավատացյալները, հիշելով Հիսուսի զոհաբերությունը խաչի վրա, կանոնավորապես հաղորդություն են ստանում՝ ապահովելով այն, ինչ անհրաժեշտ է մեղքից ազատվելու համար (Ա.Կորնթ.11. 23-26): Անցյալում Աստծո սիրառատ գործերը հիշելը մեզ հույս է ներշնչում այսօրվա համար:

Աղոթք - Սիրո՛ւ Աստված, շնորհակալ եմ այն բոլոր հրաշալի գործերի համար, որ Դու արել ես իմ փոխարեն: Խնդրում եմ ինձ ուժ տուր կենտրոնանալու Քո հզոր քայլերի վրա: Ամեն:

Հիշեմք, թե Ասված ինչե՛ր է արել մեզ համար և անցյալում ունեցած մեր փորձառությանք հույս սանձ ուրիշներին:

Եղիան նայեց, և ահա նրա գլխի կողմում, տաք քարի վրա մի թխած նկանակ կար և մի կուժ ջուր: Նա կերավ, խմեց և դարձյալ քնեց: (Գ.Թագ. 19. 6)

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՔՆՔՇՈՒԹՅՈՒՆ

Մի մարդ քուլեջում իր ուսումնառություն տարիները նկարագրելիս ասում էր, որ միշտ անհույս ու անօգնական է գգացել իրեն: Դժբախտաբար, իր այդ վիճակի համար նա բժշկի դիմելու փոխարեն տեղական գրադարանից ինքնասպանություն մասին գրքեր էր վերցնում և աստիճանաբար ճշտում իր մահվան ստույգ ժամանակը:

Աստված հոգում է անօգնական ու անհույս մարդկանց մասին: Դա երևում է Աստվածաշնչի կերպարների հանդեպ Նրա վերաբերմունքից: Երբ Հովնանն ուզում էր մեռնել, Աստված նրա հետ քնքուշ խոսակցության բռնվեց (Հովնան 4.3-10): Երբ Եղիան խնդրեց, որ Աստված խլի իր կյանքը (Գ. Թագ. 19.4), ի պատասխան՝ Նա հաց ու ջուր տվեց՝ թարմացնելու համար (Հմ.5-9), նրբանկատորեն խոսեց նրա հետ (Հմ.11-13) և օգնեց տեսնել, որ ինքը այնքան էլ միայնակ չէ, ինչքան կարծում է (Հմ.18): Աստված քնքուշ ու գործնական օգնությամբ է մոտենում վհատվածներին:

Գրադարանը ինքնասպանություն մասին հերթական գրքի մասին ուսանողին ծանուցելիս սխալմամբ նրա ծնողներին է ուղարկում գրությունը: Մայրը հասկանում է եղելությունը, վրդովված զանգում տղային, որից հետո տղան հասկանում է, թե ինչ ավերածություն կարող էր առաջացնել իր ինքնասպանությունը: Փաստորեն եթե չլիներ այդ սխալմունքը, հիմա ինքն այստեղ չէր լինի:

Ես չեմ հավատում, որ ուսանողը փրկվել է բախտի բերմամբ: Երբ խորհրդավոր դիպվածն է փրկում մեր կյանքը, ուրեմն գործ ունենք Աստվածային քնքշություն հետ:

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, փառաբանում եմ քեզ՝ անօգնականների ու անհույսների հանդեպ ցուցաբերածդ քնքշության ու գործնական հոգածության համար: Ամեն:

Հուսահատության ժամանակ Տերը մեզ է մոտենում իր աստվածային նվերությամբ:

Քո սրտի հպարտությունը խաբել է քեզ: (Աբ. 1.3)

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ

Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ Քեզ՝ Քո մեղմ սրբազրման համար,- ուսերս կախած մրմնջում էի ես: Այնքա՛ն ամբարտավան եմ եղել՝ մտածելով, թե միայնակ կարող եմ անել ամեն ինչ: Ամիսներ շարունակ հաջողությունամբ իրազործված աշխատանքային ծրագրերն ու գովասանքները ստիպել էին, որ ես վստահեմ բացառապես իմ հնարավորություններին և մերժեմ Աստծո առաջնորդությունը: Բայց մի դժվարին ծրագիր պատճառ դարձավ հասկանալու, որ ես իրականում իմ կարծածի չափ խելացի չեմ, որ իմ հպարտությունը մոլորեցրել է ինձ, թե Աստծո օգնության կարիքը չունեմ:

Եղովմի հզոր թագավորությունը Հպարտության մասին խրատ ստացավ Աստծուց: Լեռնային անմատչելի թվացող ժայռերի մեջ գտնվող երկրին թվում էր, որ ինքը անխոցելի է թշնամիների համար (Աբդ.1. 3): Հին աշխարհում բարձրարժեք պղնձով և շատ այլ բաներով հարուստ երկիրը նաև անտեղի Հպարտություն ուներ: Նրա քաղաքացիները վստահ էին, որ իրենք անպարտելի են, նույնիսկ երբ ճնշում էին Աստծո ժողովրդին (Հմ. 10-14): Բայց Աստված, օգտագործելով Աբդիա մարգարեին, նրանց պատմեց իր դատաստանի մասին: Բոլոր ազգերը դուրս էին գալու Եղովմի դեմ, և երբեմնի հզոր թագավորությունը մնալու էր անպաշտպան ու նվաստացած (Հմ. 1-2):

Հպարտությունը մեզ խաբում է՝ մոլորեցնելով, թե կարող ենք ապրել մեր պայմաններով, առանց Աստծո: Բայց Աստված մեզ կոչ է անում խոնարհվել Իր առջև (Ա.Պետ. 5.6) և Ինքը մեզ կառաջնորդի դեպի Իր հանդեպ լիակատար վստահություն:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, պաշտպանի՛ր ինձ հպարտությունից և տու՛ր ինձ խոնարհ սիրտ: Ամեն:

Հաճախ մե՛ր օրհնությունները հղա՛րճության են վերածվում ու խաբում մե՛զ: Զգու՛յ՛՛ լինենք:

Ամիրավ մամոնայից ձեզ համար բարեկամների սարքեք: (Պուկ.16. 9)

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄԵՋ

Երբ ընկերուկություններից մեկը իրենց ուսուցիչներից յուրաքանչյուր տասը գնում կատարելու գիմաց առաջարկեց հազարավոր մղոններ անվճար թռչելու արտոնություն, մի մարդ 12 հազար կարկանդակ գնեց: Այդպիսով երեք հազար դոլարով նա իր և իր ընտանիքի անդամների համար ցկյանս ձեռք բերեց անվճար թռիչքների իրավունք: Իսկ գնված կարկանդակները նվիրելով մի հաստատություն՝ ազատվեց վարկ ստանալու համար սահմանված 800 դոլարանոց տուրքից: Հիսուսը պատմում է մի խորամանկ տնտեսի մասին, որն աշխատանքից ազատվելուց հետո կրճատեց իր գործատիրոջ պարտապանների պարտքերը, որովհետև գիտեր, որ հիմա կատարած իր լավություն համար հետագայում կարող էր ապավինել նրանց օգնությունը: Հիսուսը չի դրվատում անիրավ տնտեսի խորամանկ գործելակերպը, բայց գիտի, որ կարելի է նրանից հնարամտություն սովորել: Նա ասում է. «Անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ սարքեք, որ երբ այն պակասի, հավիտենական բնակարանների մեջ ձեզ ընդունեն» (Պուկ.16. 9): Ինչպես «կարկանդակի մարդը» կարողացավ 25 դրամանոց կարկանդակները վերածել թանկարժեք թռիչքների, այնպես էլ մենք օգտագործենք մեր «աշխարհիկ հարստությունը ճշմարիտ հարստություն» ձեռք բերելու համար (Հմ.11): Որո՞նք են այդ հարստությունները: Հիսուսն ասում է. «Վաճառեցե՛ք ձեր ունեցվածքը և ողորմություն տվեք, ձեզ համար չհնացող քսակներ՝ պատրաստեք, որ հարատև գանձ է երկնքում, ուր գողը չի մոտենում, ոչ էլ ցեցն է ապականում» (12.33): Մեր ներդրումը չի վաստակում մեր փրկությունը, բայց հաստատում է այն, «որովհետև որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն» (Հմ. 34):

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնիր ինձ, որ հանուն Հիսուսի և Քեզ՝ ներդրումներ կատարեմ աղքատների մեջ: Ամեն:

Ուրիշների կարիքների համար միջոցներ հայթայթելը մեզ համար ներդրում է հոգևոր իմաստով:

Նոր մարդուն հազեք, որ Աստծու պատկերի համաձայն է ստեղծված՝ ճշմարտությամբ և սրբությամբ: (Եփ. 4 .24)

ՆՈՐ ԴՆԹ ԴԻՍՈՒՍԻ ՄԵՋ

Ո սկրածուծի փոխապատվաստումից չորս տարի անց Քրիստի արյունը դարձյալ հետազոտեցին: Դոնորի ոսկրածուծը բուժման համար անհրաժեշտ ամեն ինչից բացի՝ Քրիստին էր փոխանցել նաև իր ԴՆԹ-ն: Դա անակնկալ էր բժշկության համար: Փաստորեն Քրիստը ինչ-որ իմաստով փոխվել էր, չնայած պահպանել էր հիշողությունը, արտաքին տեսքը և իր սկզբնական ԴՆԹ-ի մի մասը:

Այս մարդու դեպքը ապշեցուցիչ նմանություն ունի այն ամենի հետ, ինչ տեղի է ունենում Տեր Հիսուսով փրկություն ստացած մարդու կյանքում: Մեր հոգևոր վերափոխման պահին, երբ վստահում ենք Աստծուն, դառնում ենք մի նոր ստեղծագործություն (Բ. Կորնթ. 5.17): Եփեսացիներին ուղղված Պողոսի նամակը քաջալերում է բացահայտել այդ ներքին կերպարանափոխությունը. «Հանե՛ք ձեր վրայից հին ընթացքն ունեցող մարդուն և հագեք նոր մարդուն՝, որ Աստծու պատկերի համաձայն է ստեղծված՝ ճշմարտությամբ և սրբությամբ» (Եփ. 4 . 22, 24):

Մեզ արյան քննություն պետք է՝ ցույց տալու համար Հիսուսի փոխակերպող ուժը նաև մեր ներսում: Դա պետք է երևա մեր գործողություններում, շրջապատող աշխարհում մեր վարմունքում, այն բանում, թե որքան ենք մենք «միմյանց հետ քաղցր ու գթած, միմյանց ներելով, ինչպես որ Աստված էլ Քրիստոսի միջոցով ներեց մեզ» (Հմ.32):

Աղոթք - Դիսուս, շնորհակալ եմ, որ ինձ դարձրիր նոր մարդ և նոր կյանք տվեցիր Քո մեջ: Խնդրում եմ օգնի՛ր ինձ «հեռացնել» իմ մեջ եղած հին մարդուն և «հազնել» Քո պատկերը: Ամեն:

Դիսուսը փոխում է մեզ, և այդ փոփոխությունը դրսևորվելու է մեր Եփոսեացի ու վարվելակերպի մեջ:

Նա ջրերի մոտ տնկված մի ծառի նման կլինի: (Եր. 17.8)

ԱՍՏԾՈՒ ՄԵՁ ՏՆԿՎԱԾ

Ամերիկացի բանաստեղծուհի Սառա Թեսդեյլը «Մայիս» խորագրով բանաստեղծության մեջ իր կորցրած սերը նկարագրում է ուժեղ քամուց ծածանվող շուշանների պատկերով: Իսկ մեր բակի շուշանի թփերը գոհ գնացին խոտ կտրողի կացնին: Նա բոլոր թփերը կտրել ու վերածել էր փոքրիկ կոճղերի: Ես դառնորեն լացեցի շուշանների համար: Տարիներ անց մնացած ճյուղերից, այնուամենայնիվ, շուշաններն աճեցին: Նրանց ուղղակի ժամանակ էր պետք դրա համար, և ես համբերատար սպասեցի մի բանի, որ չէի տեսնում:

Աստվածաշնչում շատ կերպարներ կան, որոնք, հակառակ դժվարություններին, հավատով սպասում են: Նոյը սպասեց ուշացած անձրևին: Քաղերը քառասուն տարի, որ ապրի խոտտացված երկրում: Ռեբեկան 20 տարի սպասեց, որ հղիանա: Հակոբը յոթ տարի սպասեց Ռաբելի հետ ամուսնանալու համար: Սիմեոնը Հիսուսին տեսնելու համար սպասեց ու սպասեց: Եվ նրանց բոլորի սպասումն ունեցավ հատուցում՝ ի հակադրություն մարդկանց վստահողներին, որոնք «անապատի մոշենու են նմանվում» (Եր. 17.6):

Թեսդեյլն իր բանաստեղծությունն ավարտում է մռայլ տրամադրությամբ՝ գրելով. «Ես գնում եմ ձմեռային ճանապարհով»: Իսկ Երեմիան ցնծալով բացականչում է. «Օրհնյա՛լ լինի այն մարդը, որ Տիրոջն է վստահում, և Տերն է նրա վստահությունը: Նա ջրերի մոտ տնկված մի ծառի նման կլինի» (Հմ. 7-8):

Աղոթք - Երկնավոր Հայր, երբ կյանքս ամուլ կամ հողմահալած լինելու զգացում ունենամ, ավելացրու՝ վստահությունս Քո հանդեպ՝ ինձ խորացնելով Քո սիրո մեջ: Ամեն:

Ասված խթանում է մեր վստահությունը, որդեսզի ավելի խորը ճնկվենք Նրա կայուն սիրո մեջ:

Յայր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՞նչ են անում: (Պուկ.23.34)

ԻՆՉՊԵ՞Ս ԵՍ

Չարլան գիտեր, որ մահանում էր: Նա պառկած էր հիվանդասենյակում, երբ ներս մտան նրա վիրաբույժն ու մի քանի սկսնակ բժիշկներ: Բժիշկը, ուշադրությունն չգարձնելով հիվանդին, իր երիտասարդ գործընկերներին սկսեց նկարագրել նրա վիճակը: Եվ վերջում միայն նրան հարցրեց. «Իսկ դու ինչպե՞ս ես»: Չարլան, թույլ ժպտալով, խմբին պատմեց Հիսուսի հանդեպ ունեցած իր հույսի ու խաղաղության մասին:

Ավելի քան երկու հազար տարի առաջ Հիսուսը ծեծվեց, Նրա մերկ մարմինը նվաստացած կախվեց բազմության աչքի առաջ: Իսկ ի՞նչ արեց նա: Դիմելով Աստծուն՝ նա ասաց. «Հա՛յր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՞նչ են անում» (Ղուկ. 23. 34): Թեև իրեն նենգորեն դավաճանել էին ու խաչել, բայց Նա դարձյալ աղոթեց իր թշնամիների համար: Ավելի ուշ չարագործներից մեկին, որը հասկացել էր իրենց սխալը, Նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. դու այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Հմ.43): Այսինքն՝ ուրիշների հանդեպ ունեցած իր սերնայնքան մեծ էր, որ Հիսուսը նույնիսկ տանջալլուկ ու ամոթահար վիճակում որոշել էր նրանց փոխանցել հույսի ու կյանքի խոսքեր:

Չարլան, ավարտելով իր վկայությունը Քրիստոսի մասին, քնքշորեն նայեց հուզված բժշկին ու հարցրեց. «Իսկ դու՞ ինչպե՞ս ես»: Քրիստոսի շնորհքով ու գորությամբ՝ նա սենյակում գտնվողներին փոխանցեց կենաց խոսքեր, սեր ու հոգածություն: Նման դժվարին պարագաներում վստահենք Աստծուն, որ քաջություն տա՝ սիրով կյանքի ու հույսի խոսքեր ասելու համար:

Աղոթք - Հիսու՛ս, խնդրում եմ՝ օգնիր ինձ իմ խոսքերով արտացոլելու Քեզ, նույնիսկ եթե խոսակիցներս հոգատար ու քարի չեն: Ամեն:

Դժվարությունների ժամանակ կյանքի մասին խոսելիս ատավիճենք Հիսուսին ու Իր գորությանը:

Որբերի հայր է Աստված: (Սաղմ. 68.5)

ԱՅԼԵՎԱ ԱՆՉԱՅՐ ՉԵՆՔ

Գայ Բրայընթը ամուրի էր, չուներ երեխաներ և աշխատում էր Նյու Յորքի մանկական բարեգործական մի կենտրոնում: Ամեն օր տեսնելով խնամատար ծնողների կարիքները՝ որոշեց ինչ-որ բան անել նրանց համար: Եվ արդեն ավելի քան տասը տարի Բրայընթը հիստունից ավելի երեխաների է խնամել, մի պահ նույնիսկ միաժամանակ զբաղվելով ինը երեխայով: Նա ասում է. «Եթե դուք ձեր սրտում տեղ ու ջերմություն ունեք, ապա տանը անպայման տեղ կգտնեք այն երեխայի համար, որը մնալու տեղ չունի»: Բոլոր այն երեխաները, որ մեծացել են Բրայընթի տանը, ունեն նրա տան բանալիները և հաճախ են կիրակի օրերը հավաքվում «Պապիկի հետ» ճաշելու:

Աստվածաշնչում ասվում է, որ Աստված հետևում է բոլոր նրանց, ովքեր մոռացված ու անտարբերության են մատնված: Եվ խոստանում է լինել այդ աղքատ ու խոցելի վիճակում հայտնված հավատացյալների հետ: «Որբերի հայր է Աստված» (Սաղմ. 68.5): Եթե ողբերգության կամ որևէ այլ պատճառով մենք միայնակ ենք, Աստված կհասնի մեզ, կմոտեցի ու հույս կտա: Իսկապես, Աստված միայնակներին բնակեցնում է տան մեջ (Հմ.6): Հիսուսով միացած ուրիշ հավատացյալներ դառնում են մեր ընտանիքը:

Ինչպիսին էլ լինեն մեր ընտանեկան դժվար պատմությունները, ինչքան էլ լքված լինենք ու մեկուսացած՝ չպետք է մոռանալ, որ մեզ սիրում են: Աստծո հետ մենք այլևս որբ չենք:

Աղոթք - Հայր Աստված, ինձ հարկավոր է լավ, իսկական մի հայր, որն ինձ երբեք չի թողնի: Ես վստահ եմ, որ այդ Հայրը Դու կլինես: Ամեն:

Ասված մեր երկնավոր Հայրն է, որ սիրում է մեզ, երբեք չի լքի ու կբավարարի մեր ամենախոր կարիքները:

Սերը չարիք չի գործի: (Գործ. 13.10)

ՎՍՏԱՅԵԼԻ ՍԵՐ

Ինչու՞ չեմ կարող նրա մասին չմտածել, մտքերս դարձել են մեղքի, զայրույթի ու տխրության իսկական թնջուկ:

Տարիներ առաջ հարաբերություններս խզեցի մտերիմ ընկերներիցս մեկի հետ: Մինչ այդ, իհարկե, փորձեցի փրկել մեր ընկերությունը, զրուցեցի նրա հետ, սակայն հանդիպեցի մերժման: Այսօր, լսելով, որ նա քաղաք է եկել, ես դարձյալ հիշեցի այդ մասին ու կրկին վերապրեցի ամեն ինչ:

Մտքերս հանդարտեցնելու համար միացրի ռադիոն: Հնչում էր մի երգ, որն արտահայտում էր ոչ միայն դավաճանության տագնապը, այլև փոփոխությունների ու ապաքինման կարոտը: Արցունքները խեղդեցին ինձ, քանի որ երգն ասես իմ հոգու թարգմանը լիներ:

«Թող սերը առանց կեղծիքի լինի», - գրում է Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված նամակի 12. 9 -ում: Մեր սրտի ամենամոլորական ցանկությունը իրական սերը ճանաչելն է, սեր, որը չարիք հեռու է և բարուց է ծնվում, որ ենթադրում է լինել միմյանց հանդեպ կարեկից ու զթասիրտ, հոգով ջերմեռանդ, չծուլանալ, հույսով ուրախանալ, նեղությանը համբերել, Տիրոջը ծառայել ու մշտապես աղոթել(հմ.10-13):

Իսկ դա բարի լուրն է՝ ավետարանը: Հիսուսի շնորհիվ մենք կարող ենք վերջապես ճանաչել և ուրիշներին փոխանցել մի սեր, որին կարող ենք վստահել: Սեր, որը երբեք չարիք չի գործի (13.10): Նրա սիրով ապրել՝ նշանակում է ազատ լինել:

Աղոթք - Սիրող Գայր, ամեն օր թվում է, թե կրկին ունեմ իրական սերը ճանաչելու կարիք: Օգնիր սովորել, թե ինչպես ճաշակեմ Քրիստոսի սերը և սկսեմ այն բաժանել ուրիշներին: Ամեն:

Տարբերե՛մք անկեղծ սերը և սովորե՛մք ուրիշներին սիրել ամբողջ օրս:

Նա քեզ կծածկի իր փետուրներով, նրա թևերի տակ ապահով կլինես, նրա ճշմարտությունը վահան է և զրահ: (Սաղմ. 91. 4)

ԱՍՏՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ Է ՄԵՁ ՀԱՄԱՐ

Կ ոլորադոցի մի կին ապացուցեց, որ իր երեխային պաշտպանելու համար մայրը կանգ չի առնի ոչ մի բանի առաջ:

Նրա հինգ տարեկան որդին խաղում էր դրսում: Հանկարծ մայրը սարսափով նկատեց, որ երեխան հայտնվել է առյուծի ճիւղաններում: Կինը, լարելով իր ողջ ներքին ուժերն ու մայրական զգացմունքները, վրա հասավ ու առյուծի երախից ազատեց զավակին: Այս մոր հերոսական արարքը հիշեցնում է, որ Աստվածաշնչում նույնպես մայրական սերը ներկայացվում է որպես համառ ու անդիմադրելի զգացմունք:

Աստված էլ քնքշուկյամբ է վերաբերվում ու հոգում իր ժողովրդի մասին, ինչպես մայր արծիվն իր ձագերին (Բ. Օր. 32.10-11, Ես. 66.13): Ինչպես մայրը երբեք չի մոռանում կերակրել իր երեխային, այնպես էլ Աստված երբեք չի մոռանում իր ժողովրդին և հավիտենական ողորմուկյամբ պիտի գլխահարան (Ես. 54.7-8): Վերջապես ինչպես մայր թռչունն է իր թևերով պաշտպանում ձագերին, այնպես էլ Աստված «իր փետուրներով կծածկի (իր ժողովրդին), նրա թևերի տակ ապահով կլինես, նրա ճշմարտությունը վահան է և զրահ» (Սաղմ. 91. 4):

Տարբեր պատճառներով մենք երբեմն միայնակ, լքված ու մոռացված ենք մեզ զգում: Թող Աստված օգնի մեզ՝ հիշելու, որ Նա կարեկցուկյամբ հոգում է մեր մասին, մխիթարում և պայքարում մեզ համար:

Աղոթք - Երկնավոր Հայր, ինչպես թռչուններն են պաշտպանվում իրենց մոր թևերի տակ, այդպես էլ ես թող ապաստան գտնեմ Քո հավատարիմ վահանի ներքո: Ամեն:

Ասված ներկայանում է որդես մեր ծնող, և մենք զգում ենք Նրա ծնողական խնամքն ու լուսավորությունը:

Ձեր առատությունը թող նրանց պակասությանը ծառայի: (Բ. Կորնթ. 8.14)

ԱՌԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԻՔՆԵՐ Է ՀՈԳՈՒՄ

Դպրոցական ճաշարանները, ճիշտ չհաշվարկելով պահանջարկը, հաճախ ունենում են ուտելիքի ավելցուկ, որը վատնվում է: Այն դեպքում, երբ որոշ սովորողներ միջոցներ չունենալու պատճառով քաղցած են մնում: ԱՄՆ դպրոցական շրջաններից մեկը, համագործակցելով տեղական ոչ առևտրային մի կազմակերպության հետ, գտավ այս հարցի լուծումը: Նրանք փաթեթավորում են ավելացած ուտելիքը և ուսանողների հետ տուն ուղարկում՝ միաժամանակ օգուտ բերելով երկու կողմին էլ: Ըիշտ է, մարդկանց մեծ մասը փողի առատությունը, ինչպես վատնված ուտելիքը, խնդիր չի համարում, սակայն դպրոցական այս ծրագրի ենթատեքստը նույնն է, ինչ Պողոս առաքյալն առաջարկում է կորնթացիներին ուղղված իր նամակում: Իմանալով, որ Մակեդոնիայի եկեղեցիները նեղություն մեջ են, նա խնդրեց կորնթացիներին օգտագործել իրենց «առատությունը»՝ «նրանց պակասությունը» լրացնելու համար (Բ.Կորնթ. 8.14): Առաքյալի նպատակն էր հավասարություն հաստատել եկեղեցիների միջև, որպեսզի մեկը չափից շատ չունենա, երբ մյուսը տառապում է:

Պողոսը նաև ուզում էր, որ կորնթացիներն իրենց միջոցները նվիրեն սրտանց, առատաձեռնորեն՝ գիտակցելով, որ հետագայում իրենք էլ կարող են հայտնվել նույն իրավիճակում: Տեսնելով, որ մարդիկ կարիքի մեջ են, գնահատե՛նք մեր հնարավորությունները. արդյոք կարո՞ղ ենք կիսել մեր ունեցածը:

Աղոթք - Երկնավոր Հայր, խնդրում եմ արթնացրու՝ ինձ, որ կարողանամ տեսնել ուրիշների կարիքը: Իսկ երբ ե՛ս եմ լինում նեղության մեջ, օգնիր վստահել Քեզ, որ կապահովվեմ այլոց միջոցով: Ամեն:

Ասված մեր կարիքները հոգում է ուրիշների միջոցով: Մենք էլ դաստիարակվում ենք առատաձեռնորեն օգնել այլոց կարիքները հոգալուն:

Թագավորը կանգնել էր սյան մոտ և Տիրոջ առաջ ուխտ արեց հետևել Տիրոջը և ամբողջ սրտով ու ամբողջ հոգով պահել նրա պատվիրանները, վկայություններն ու կանոնները: (Դ. Թագ. 23.3)

ԱԶԴԵՑԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Միջիգանի մեր տան պատից տարիներ շարունակ կախված էին նախազարդ ծխական աղեղն ու կապարճը, որոնք հայրս ձեռք էր բերել Գանայում մեր միսիոներությունից ժամանակ:

Մի օր մեր տուն եկավ գանացի ընկերներիցս մեկը, որը տեսնելով աղեղը՝ այլայլվեց: Ապա, ցույց տալով աղեղին կապված փոքրիկ առարկան, բացատրեց, որ դա կախարդական հմայիլ է: «Գիտեմ, որ դա զորություն չունի, և ես իմ տանը չէի պահում», - ասաց ընկերս: Լսելով այդ՝ մենք էլ կտրեցինք ու դեն նետեցինք հմայիլը, որովհետև չէինք ուզում բացի Աստծուց մեկ այլ բանի երկրպագել:

Երուսաղեմի պատանի թագավոր Հովսիան շատ քիչ բան գիտեր իր ժողովրդից Աստծո սպասելիքների մասին: Երբ քահանայապետը դարձյալ ուշադրություն հրավիրեց, որ օրենքի գիրքն անտեսված է տաճարում (Դ. Թագ. 22.8), Հովսիան ցանկություն հայտնեց լսել այն: Իմանալով, թե Աստված ինչ է ասել կռապաշտության մասին՝ նա մեծ փոփոխություններ սկսեց, որպեսզի Հուդայի երկիրը դարձնի Աստծո օրենքներին համապատասխան (տե՛ս Դ. Թագ. 23. 3-7):

Այսօրվա հավատացյալները Հովսիա արքայից շատ ավելի հնարավորություններ ունեն: Մենք ունենք Աստվածաշունչ, որ սովորեցնում է մեզ: Մենք կարող ենք միմյանցից սովորել: Եվ ունենք Սուրբ Հոգու կենսական լիցքավորումը, որը հայտնաբերում է մեր անտեսած մեծ կամ փոքր իրերը:

Աղոթք - Երկնավոր Հայր, Սուրբ Հոգու շնորհիվ օգնի՛ր, որ հեռու մնամ Քեզ համար վիրավորական ամեն ինչից: Ամեն:

Փոխենք այն բաները, որ Աստծո աչքին հաճելի չեն, և անենք այն, ինչը կփառավորի Նրա անունը:

Քանզի խաչի քարոզը... Աստծո զորությունն է: (Ա. Կորնթ. 1.18)

ԽԱՉԻ ՔԱՐՈՉԸ

Ժանգը մեծացել էր, իր խոսքերով՝ «չիմանալով ո՛չ աստված, ո՛չ կրոն»: 1989-ին, ժողովրդավարութայան ու ազատութայան հովերով տարված, առաջնորդեց ուսանողական խաղաղ ցույցերը: Բայց դրանք ողբերգական եղան ու պատճառ դարձան կառավարութայան միջամտութայան և մարդկային զոհերի: Ժանգը հայտնվեց հետախուզվող հանցագործների ցանկում, բանտարկվեց: Կարճ ժամանակ անց նա փախավ սահմանամերձ մի գյուղ, որտեղ հանդիպեց մի հողագործի, որն էլ նրան պատմեց քրիստոնեութայան մասին: Հողագործն ուներ Հովհաննու Ավետարանի ձեռագիր մի օրինակ, որը չէր էլ կարողանում կարդալ և ժանգին խնդրեց կարդալ: Երբ տղան կարդում էր, հողագործը բացատրում էր, և մեկ տարի անց ժանգը հավատաց Քրիստոսին: Նա տեսնում էր, որ իր բոլոր դժվարութայունների մեջ Աստված զորեղ կերպով իրեն առաջնորդում է դեպի խաչը, և ինքը, ինչպես Պողոս առաքյալն է նկարագրում կորնթացիներին ուղղված Ա նամակում, անձամբ է զգացել, որ «խաչի քարոզը... Աստծո զորութայունն է» (1.18): Այն, ինչը շատերը թուլութայուն ու հիմարութայուն էին համարում, ժանգի համար ուժ դարձավ: Նախքան Հիսուս Քրիստոսի գալը՝ մեզանից շատերն են նույն մտածելակերպն ունեցել: Բայց Սուրբ Հոգու միջոցով մենք զգացինք, որ մեր կյանք է ներխուժել և մեզ դեպի Քրիստոսն է առաջնորդում Աստծո իմաստնութայան ուժը: Այսօր ժանգը հոգևոր հովիվ է դարձել և բոլոր իրեն լսողներին է փոխանցում խաչի ճշմարտութայունը: Հիսուսն ունի նույնիսկ ամենակարծր սրտերը փոխելու զորութայուն: Այսօր ո՞վ ունի Նրա հզոր հպման կարիքը:

Աղոթք - Հիսուս, շնորհակալ եմ, որ խաչի միջոցով ինձ առաջնորդեցիր Քեզ մոտ: Առանց Քեզ ես կկորչեի: Ամեն:

Հիսուսին ընդունում ենք որդես մեր Փրկիչ, որովհետև Նա մեզ համար ընդունեց խաչը: Պատմենք մեր դասնությունը, որդեսզի ուրիշներն էլ օգուտ փառեն մեր վկայությունից:

Տե՛ր ապրեցրու՛ ինձ Քո անվան համար, քո արդարության համար իմ ան-
ծը հանի՛ր նեղությունից: (Սաղմ. 143.11)

ԽՈՐԸ ԱՂՈԹՔՆԵՐ՝ ՄՈՒԹ ՊԱՅԵՐԻՆ

«**Ես ունեցա շատ մռայլ պահ**» խոստովանել է հանրահայտ աստղերից մեկը՝ պատմելով, որ թագավարակի համաճարակի ժամանակ նույնիսկ ինքնասպանության մասին է մտածել: Եվ սրբնթաց վայրէջքից դուրս գալու համար նա իր պայքարի մասին խոսեց ընկերոջ հետ:

Բոլորիս հետ էլ կարող են լինել դժվար պահեր: Դրանցից դուրս գալու համար երբեմն անհրաժեշտ է լինում նույնիսկ դիմել հոգեբաններին:

143-րդ սաղմոսում Դավիթը, որ իր կյանքի ամենամռայլ ժամանակներն էր ապրում, աղոթում է: Այդ վիճակի ստույգ պատճառն անհայտ է, բայց Աստծուն ուղղված նրա աղոթքն անկեղծ է ու հույսով լի: «Թշնամին հալածում է իմ անձը, իմ կյանքը նա գցում է գետնին և ինձ նստեցնում է խավարի մեջ՝ վաղուց մեռածների պես: Իմ հոգին մաշվեց իմ մեջ, իմ սիրտն ավերված է ինձանում» (Հմ.3-4): Հիսուսին հավատացողներիս համար բավական չէ ընդունել մեր ներսում կատարվածը, այդ մասին պատմել ընկերներին կամ մասնագետներին: Այլ հարկավոր է թախանձագին աղոթքներով մոտենալ Աստծուն: Աղոթքներ, որոնք կներառեն 143-րդ սաղմոսի 7-10-ում նշված բոլոր խնդրանքները: Այդ աղոթքներում կարող ենք նշել նաև մեր կյանքի մռայլ պահերը և խնդրել, որ դրանք փոխարինվեն լույսով ու կյանքով, որ միայն Աստված է բերում:

Աղոթք - Հայր, խնդրում եմ ամրացրու ուժս ու Քո հանդեպ տածածս հույսը: Երբ կյանքումս խավար պահեր լինեն, որոնք ինձ ներքև կտանեն, օգնի՛ր, որ աղոթքով Քեզ մոտ գամ: Ամեն:

Խավար ու մութ դահեռ մի՛ս էլ կարող եմ լինել: Սակայն կարևորն այն է, որ անկեղծ սրտով ու աղոթքներով դիմենք Աստծուն:

Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք, բացի միմյանց սիրելուց: (Գոտմ. 13.8)

ՔԱՅԼԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԵՏ

Բիլլի շունը հավատարմության անսովոր դրսևորման համար 2020 թ. դարձավ համացանցի աստղ: Նրա տերը՝ Ռասելը, կոտրել էր ոտքը և քայլում էր հենակների օգնությամբ: Շատ չանցած՝ տիրոջ հետ քայլելիս շունն էլ սկսեց կաղալ: Ռասելը նրան տարավ անասնաբույժի մոտ, որը ստուգելով ասաց, որ ամեն ինչ կարգին է: Պարզվում է՝ շունը ձևացնում էր, ուզում էր նմանվել տիրոջը: Դա այն է, երբ փորձում ես իսկապես նույնանալ ցավի մեջ եղողի հետ:

Ուրիշների կողքին լինելը Պողոս առաքյալի՝ Հռոմեացիներին ուղղված նամակի հիմնական պատվիրաններից է: Նա տասը պատվիրաններից հինգը այսպես էր ավարտում. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ» (Հռոմ.13.9): Իսկ ուրիշների հետ քայլելու կարևորությունը տեսնում ենք Ց-րդ համարում. «Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք, բացի միմյանց սիրելուց»:

Գրող, բլոգեր Ջեննի Ալբերսը խորհուրդ է տալիս. «Երբ մեկը կոտրված է, մի՛ փորձիր ամբողջացնել (չե՛ս կարող): Եթե մեկը հիվանդ է, մի փորձիր կրել նրա ցավը (չե՛ս կարող): Փոխարենը սիրի՛ր նրանց՝ քայլելով նրանց կողքին, լինելով նրանց հետ (Դու կարո՞ղ ես): Որովհետև մարդկանց երբեմն պետք է իմանալ, որ իրենք մենակ չեն»:

Քանի որ մեր փրկիչ Տեր Հիսուսը մեր բոլոր նեղությունների ու ցավերի մեջ մեր կողքին է, մենք գիտենք՝ ինչ է նշանակում քայլել ուրիշների հետ:

Աղոթք - Դայր, բա՛ց աչքերս, որ տեսնեմ իմ շուրջը եղողների կարիքները: Օգնի՛ր ինձ, որ լինեմ սիրող ընկեր: Ամեն:

Նայի՛ր շուրջդ ու տես, եթե կան մարդիկ, որոնք ընկերակիցների կարիք ունեն, եղի՛ր նրանց ընկերը և սփոփելու համար ֆայլի՛ր նրանց հետ:

Եղիսեն ասաց նրան. «Ես ի՞նչ անեմ քեզ համար, ասա՛ ինձ. ի՞նչ ունես տանդ»: (Դ. Թագ. 4.2)

ԱՍՏՈՆ ՆԱԽԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Երեք տարեկան Բաղդին ու նրա մայրը ամեն կիրակի եկեղեցի էին գնում, որպեսզի օգնեն ուտելիքի մեքենաները բեռնաթափելիս: Երբ երեխան լսեց, որ բեռնատարը խափանվել է, սկսեց անհանգստանալ: Մայրը բացատրեց, որ եկեղեցին գումար է հավաքելու նոր մեքենա գնելու համար: Այդ ժամանակ Բաղդին ժպտալով ասաց, որ ինքը գումար ունի և դուրս եկավ սենյակից: Քիչ անց նա վերադարձավ գունավոր պիտակներով պլաստիկ մի աման ձեռքին, որի մեջ 38 դոլարից մի քիչ ավելի գումար կար: Բաղդիի ունեցածը շատ էջր, բայց Աստված այն միացրեց այլոց նվիրատվություններին, որպեսզի եկեղեցին կարողանար շարունակել ծառայությունը համայնքին:

Առատաձեռնությունը տրամադրված փոքրիկ գումարը միշտ էլ ավելի քան բավարար է, երբ այն դրվում է Աստծո ձեռքերի մեջ: Դ. Թագ. 4-ում աղքատ այրին նյութական օգնություն է խնդրում Եղիսե մարգարեից: Մարգարեն, իմանալով, որ նա տանը ընդամենը մի աման յուղ ունի, հորդորում է բոլոր հարևաններից վերցնել դատարկ ամաններ և հետևել իր հրահանգներին (Հմ.1-4): Աստված, օգտագործելով կնոջ մի աման յուղը, հրաշքով լցնում է բոլոր ամանները (Հմ. 5-6): Եվ Եղիսեն ասում է. «Գնա՛, յուղը ծախի՛ր և պարտքդ վճարի՛ր, իսկ մնացածով պարե՛ք դու և քո տղաները» (Հմ.7):

Երբ մենք կենտրոնանանք մեր չունեցածի վրա, չենք կարողանա տեսնել, թե ինչպես Աստված մեր քիչ ունեցածով մեծ բաներ է անում:

Աղոթք - Հավատարիմ մատակարար, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ ուշադիր ու երախտապարտ լինել, երբ ես հավատարմորեն տնօրինում ու բաժանում եմ այն ամենը, ինչ Դու տվել ես ինձ:
Ամեն:

Եթե մեր ունեցած փչը համաեղենի ուրիշների ունեցածի հետ ուղնենի Աստծո ձեռքերում, շատ բան կկարողանանք անել:

Ով ձեզ է ընդունում, ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ինձ ուղարկողին է ընդունում: (Մատթ. 10.40)

ՄԻ ԲԱՐԵԿԱՍ ԱՍԾՈՆ ԲԱՐԵԿԱՍՆԵՐԻՑ

Մեկի հետ ծանոթանալիս մի տեսակ ջերմություն ենք զգում, երբ պարզվում է, որ ընդհանուր ընկերներ ունեք: Կամ որքան տպավորիչ է, երբ հաղորդավարը, օրինակ ողջունում է իր հյուրին՝ ասելով. «Շատ հաճելի է հանդիպել Ձեզ, որովհետև Սեմի կամ Սամանտայի ընկերը նաև իմ ընկերն է»:

Տեր Հիսուսն էլ նման բան ասաց: Նա բազմություններ էր գրավում՝ բուժելով շատերին: Բայց միաժամանակ տեղացի կրոնական առաջնորդների մեջ ձեռք էր բերում թշնամիներ, որոնք չէին հանդուրժում տաճարում բուժում անցկացնելն ու իրենց ազդեցություն թուլացումը: Հակամարտությունն ավելի սրվեց և Նրան հավատացողների ու Նրանով ուրախացողների թիվն ավելի մեծացավ, երբ Հիսուսն իր աշակերտներին օժտեց մարդկանց բուժելու հատկություններ և նրանց ուղարկեց աշխարհին ավետելու, որ Աստծո արքայությունը մոտ է: Նա իր աշակերտներին վստահեցնում էր. «Ով ձեզ է ընդունում, ինձ է ընդունում, և ով ինձ է ընդունում, ինձ ուղարկողին է ընդունում» (Մատթ. 10.40):

Դժվար է պատկերացնել ավելի կյանք փոխող առաջարկ: Հիսուսը վստահեցնում է, որ Նա, ով բացում է իր տան դուռը, մի բաժակ սառը ջուր է տալիս իր աշակերտներին, տեղ է ունենալու Աստծո սրտում: Թեև այդ պահը շատ վաղուց է եղել, Նրա խոսքերը մեզ հիշեցնում են, որ բարություն ու հյուրընկալության մեծ ու փոքր արարքների մեջ դեռևս կան միջոցներ ընդունելու և ողջունելու Աստծո բարեկամներից մեկին:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ մեզ հնարավորություն տվեցիր լինել բարի լուրի մի մասը, որի աղբյուրը Դու ես: Ամեն:

ԱՄԵՆՖ այն, ինչ կարող եմ, որդեսզի Սուրբ Հոգու առաջնորդությամբ ուրիշներին հնարավորություն տանք իրենց սրտերը բանալ Աստծո առաջ:

Երիտասարդական ցանկություններից փախի՛ր և հետամուտ եղի՛ր արդարությանը, հավատի՛ն, սիրուն, խաղաղությանը՝ Տիրոջ անունը մաքուր սրտով կանչողների հետ: (Բ. Տիմ. 2.22)

ՓԱԽՉԵԼ ՄԵՂՔԻՑ

Այս ամուսնը բախում աճած մոլախոտերը մաքրելիս երկու անգամ տուժեցի թունավոր բաղեղից: Երկու անգամն էլ զգուշանում էի, գիտեի, որ այդ եռատերև թշնամին կարող է թաքնված լինել խոտերի մեջ, բայց և այնպես չկարողացա խուսափել: Եվ ես հասկացա, որ սխալվել եմ: Ոչ թե պետք է զգուշանայի, այլ ուղղակի փախչեի:

Հին Կտակարանի Հովսեփի պատմության մեջ տեսնում ենք այդ բաղեղից պվելի վտանգավոր մի բան՝ մեղքը, որից նույնպես հարկավոր է փախչել: Հովսեփն ապրում ու աշխատում էր եգիպտացի պաշտոնյա Պետափրեսի տանը, որի կինը փորձում էր գայթակղել նրան: Հովսեփը, սակայն, ամեն կերպ խուսափում էր նրանից:

Զայրացած ու վիրավորված կինը սուտ մեղադրանքներով հասավ այն բանին, որ Հովսեփին բանտ նետեցին, սակայն նա այդ ամբողջ ընթացքում մաքուր մնաց: Եվ ինչպես տեսնում ենք Ծննդոց 39.21-ում «Տերը Հովսեփի հետ էր»:

Աստված կարող է օգնել խուսափելու այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են մեզ հեռացնել Իրենից, տանել դեպի մեղքը: Բ. Տիմ. 2. 2-ում Պողոսը գրում է. «Երիտասարդական ցանկություններից փախի՛ր»: Իսկ Ա. Կորնթ. 6.18-ում ասում է. «Պոռնկությունից փախե՛ք»:

Աստծո գործընթացը թող որ մենք կարողանանք խուսափել այն բաներից, որոնք կարող են վնասել մեզ:

Աղոթք - Հայր, գիտես իմ սիրտը և այն բաները, որոնց շատ եմ մոտենում: Օգնի՛ր ինձ՝ առանց հետ նայելու փախչել դրանցից և չթողնել, որ որևէ բան մտնի իմ և Քո միջև: Ամեն:

Ի՞նչն է այն «թունավոր բաղեղը», որ կարող է վարակել մեզ, եթե չփախչենք: Ի՞նչ ղեֆ է անել դրանից խուսափելու համար:

Ինչ էլ որ անեք, սրտանց արեք, ինչպես կանեիք Տիրոջ և ոչ թե մարդկանց համար: (Կող. 3.23)

ՄԵՐ ԳՈՐԾՆ ԱՍՏՈՒՆ ՏԱՆՔ

Ամսագիրը, որին ես թղթակցում էի, ինձ դուր էր գալիս: Եվ երբ առիթը եկավ, որոշեցի պայքարել խմբագրի պաշտոնի համար: Դրա համար պետք է ներկայացնեի իմ լավագույն հոգևածը: Ճնշվում էի ներկայացված չափանիշներին համապատասխան գրելու պարտադրանքից և շարունակում էի շարադրել իմ մտքերն ու գաղափարները: Բայց մտավախություն ունեի: Ի վերջո հավանություն պիտի տային ի՞նձ, թե իմ գրածներին:

Աշխատանքային նման անհանգստությունների համար Պողոս առաքյալը վստահելի ցուցումներ է տալիս: Կողոսացիներին ուղղված նամակում նա հորդորում է գործել ոչ թե մարդկանց, այլ Աստծո հավանություն արժանանալու համար: Նա ասում է. «Ինչ էլ որ անեք, սրտանց արեք, ինչպես կանեիք Տիրոջ և ոչ թե մարդկանց համար, իմանալով, որ Տիրոջից ժառանգություն հատուցումը կստանաք, որովհետև Տիրոջը՝ Բրիստոսին եք ծառայում» (Կող. 3. 23-24):

Անդրադառնալով Պողոսի իմաստնությունը՝ մենք կարող ենք ջանքեր չգործադրել մեր երկրային գործատուների աչքին լավ երևալու համար: Անշուշտ, մենք հարգում ենք նրանց ու ձգտում ենք նրանց տալ լավագույնը: Սակայն եթե մենք աշխատենք «ինչպես Տիրոջ համար»՝ խնդրելով, որ Նա մեզ առաջնորդի և օժի մեր աշխատանքը, Նա լույս կսփռի մեր ջանքերի վրա և կվարձատրի: Մեր աշխատանքային ճնշումները կթուլանան և մեր հանձնարարությունները կավարտվեն: Ավելին, մի օր էլ կլսենք Նրա ձայնը, որ զրկատում է մեզ:

Աղոթք - Երկնավոր Հայր, աշխատանքային դժվարություններ դիմագրավելիս մոռանում եմ, որ գործում եմ Քեզ համար: Ուղղի՛ր սիրտս ու միտքս, որպեսզի նախապատվությունը Քեզ տամ: Ամեն:

Աեխասանֆային դժվարություններ կունենանք, բայց դեռ է մի՞տս հի՞շել, որ ամեն ինչ անում եմք Տիրոջ համար:



Նյութերի ցանկ

Աղոթք	մայ. 3,5,29, Հուն.5
Անձնապանություն.....	Հուն. 13. 25
Ապաշխարություն.....	մայ. 14. 27
Առաջնորդություն.....	ապր. 4
Առատաձեռնություն.....	մայ. 24, Հուն. 1, 8, 15, 22, 27
Աստծո ժամանակը.....	ապր. 24
Աստծո ներումը.....	ապր. 27
Աստծո սերն ու հոգածությունը.....	ապր. 3,5, 8,13,25,30, մայ. 3, 12,19, Հուն. 7,13,19,20,21
Աստծուն վստահել.....	մայ. 6,31, Հուն. 5,17,25
Ավետարանչություն.....	մայ. 11,21, Հուն. 11, 28
Բախում և ընդդիմություն.....	մայ. 17, 25, Հուն. 2
Գոհունակություն.....	մայ. 19, Հուն. 4
Դատել.....	ապր. 23
Եկեղեցական միաբանություն.....	մայ. 22
Ինքնություն Քրիստոսով.....	մայ. 15.
Խորհրդատվություն.....	Հուն. 6
Մառայություն.....	մայ. 4,24, Հուն. 28, 30
Կյանքի պայքարներ.....	ապր. 25, 28, մայ. 31, Հուն. 3
Կռակաշտություն.....	ապր.29, Հուն.23
Հավատացյալների հարություն.....	ապր. 21
Հավատք.....	մայ. 26, Հուն. 24
Հեզություն.....	ապր. 10, Հուն.14
Հյուրասիրություն.....	մայ. 20
Հնազանդություն.....	ապր. 6, մայ. 26
Հոգատարություն ստեղծագործությանը.....	ապր. 23
Հոգևոր բարեփոխում.....	մայ. 2,9,16,23
Հոգևոր կարգապահություն.....	Հուն. 10
Հոգևոր աճ.....	ապր. 28
Հոգեկան պայքար.....	մայ. 2,9,16,23

Հուլյս.....	մայ. 10
Հուսահատություն.....	Հուն. 25
Մահ.....	ապր. 23
Մատակարարել և տալ.....	ապր. 7, մայ. 24
Մատնություն.....	Հուն. 20
Մեղք.....	Հուն. 29
Շնորհակալություն.....	ապր. 27
Ուրիշ քրիստոնյաների հետ ապրել.....	ապր. 1, 2, 9
Պաշտամունք.....	ապր.19
Սեր Աստծո հանդեպ.....	ապր. 20, մայ.7
Սեր այլոց հանդեպ.....	ապր. 9,20,23, մայ.27, Հուն.20 26
Սուրբգրային առաքելության աստվածաբանություն.....	Հուն. 30
Սուրբ Հոգի.....	Հուն. 2
Սուրբ Հոգու պտուղները.....	մայ. 21
Ստեղծագործություն.....	ապր. 22, մայ. 1,8,15,22
Սրբություն.....	մայ. 25, Հուն. 2,6,9,16,23
Տանջանք.....	մայ. 10, Հուն. 3
Տառապանք.....	ապր. 16, Հուն. 20
Տերունական ընթրիք.....	Հուն. 12
Քաղաքացիություն.....	ապր. 1,8,18,22
Քաջակերություն.....	ապր.1
Քրիստոնեական հիշատակություններ.....	Հուն.12
Քրիստոս՝ կյանք և ուսուցումներ.....	ապր.10
Քրիստոս՝ մահ.....	ապր. 12, 14, 15, 16
Քրիստոս՝ Հարություն.....	ապր. 16,17
Քրիստոս՝ վերադարձ.....	ապր. 11
Քրիստոսի նման ապրել.....	ապր. 6,7, 9 26, Հուն.15,18,26
Քրիստոսի համար ապրել.....	ապր.5,11, մայ.13,23,26
Քրիստոսի հետ միաբան.....	մայ.18
Փրկություն.....	մայ. 1,28, Հուն.24

Նշումների համար

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. +374 47 945 275

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....
